ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

041301.01.6 «ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»

(ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ)

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

041301.01.6 «ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»

(ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ)

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2019

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ
ԱՐՁ. No 5 , ԿԱՅԱՑԱԾ 12.09.2019Թ.
ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
________________ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ... 6
2. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ՝ 041301.00.6 «ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» (ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ) ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ... 10
3. 041301.01.6 «ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» (ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ) ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԸ ... 12
4. 041301.01.6 «ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» (ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ) ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ... 21
5. 041301.01.6 «ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» (ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ) ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ... 24
6. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՈՐԸ ՆՊԱՍՏՈՒՄ Է ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԱՆՁՆԱՅԻՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ... 27
7. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՈՐՄԱՏԻՎ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ... 33
8. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ... 37

041301.01.6 «ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» (ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ) ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՍՏԻՃԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հիմնական կրթական ծրագիրը (այսուհետ՝ ՀԿԾ), որն իրականացվում է ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի կողմից 041301.01.6 «Կառավարում» (Ճգնաժամային կառավարում) մասնագիտության ուղղությամբ, փաստաթղթերի համակարգ է, որոնք մշակվել և հաստատվել են բարձրագույն ուսումնական հաստատության կողմից աշխատանքի շուկայի պահանջարկի հաշվառմամբ՝ պետական կրթական չափորոշիչների հիման վրա, որոնք համապատասխանում են բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտության համապատասխան ուղղությանը՝ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկը հաստատելու մասին No1191-ն որոշմամբ: ՀԿԾ-ն ներառում է՝ ուսումնական պլանը, ուսումնական դասընթացների, առարկաների, մոդուլների աշխատանքային ծրագրերի բնութագրերը, շրջանավարտների կոպետենցիաները և այլ նյութեր: դրանք բնութագրում են սովորողների պատրաստության որակը, ինչպես նաև ուսումնական և արտադրական պրակտիկաների ծրագրերը, ուսումնական օրացուցային ժամանակացույցը և մեթոդական նյութեր, որոնք ապահովում են համապատասխան կրթական տեխնոլոգիաների կիրառումը:

1.1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	**041301.01.6** «Կառավարում» (Ճգնաժամային կառավարում)
1.2. Բուհը	ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա
1.3. Ծրագիրը հավատարմագրված է	–
1.4. Շնորհվող որակավորումը	Կառավարման բակալավրի աստիճան
1.5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին	2019-2020
1.6. Ուսումնառության լեզուն	Հայերեն
1.7. Ուսուցման ձևը	Առկա

1.8. ՀԿԾ մշակման նորմատիվ-իրավական հիմքը կազմում են.
1) «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:
2) «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքը:
3) «Հայաստանի փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:
4) «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:
5) «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:
6) 1992 թվականի հունվարի 31-ի Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական վարչության նյութական բազայի և արտակարգ իրավիճակներում գործելու համար մասնագետների վերապատրաստման ինստիտուտի ստեղծման մասին» No 74 որոշումը:
7) 2005 թվականի հունիսի 29-ի Հայաստանի Հանրապետության կառավարության «Ճգնաժամային կառավարման ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն վերանվանելու մասին» No 1055-Ն որոշումը:
8) 2006 թվականի փետրվարի 2-ի Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի փրկարար ծառայության բարձրագույն ուսումնական հաստատության մասնագիտությունների ցանկը սահմանելու մասին» No 90-Ն որոշումը:
9) 2006 թվականի ապրիլի 27-ի Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի փրկարար ծառայության ուսումնական հաստատությունում ուսման կանոնագիրքը հաստատելու մասին» No 606-Ն որոշումը:
10) 2011 թվականի օգոստոսի 25-ի Հայաստանի Հանրապետության կառավարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությանը գույք հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի No 1500-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» No 1206-Ն որոշումը:
11) 2016 թվականի մայիսի 19-ի Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» No 696-Ն որոշումը:

1.9. Ծրագրի նպատակները.

Ծրագրի նպատակն է պատրաստել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ստորաբաժանումների, պետական կառավարման մարմինների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների, առևտրային բանկերի և այլ ֆինանսավարկային կազմակերպությունների, ինչպես նաև շուկայում տնտեսվարող բազմաբնույթ կազմակերպությունների համար միջառարկայական գիտելիքներով և հմտություններով օժտված կառավարման բակալավրի աստիճանով մասնագետներ, ովքեր՝

- ծանոթ են մենեջմենթի և պետական կառավարման ոլորտի հիմնական մասնագիտական հասկացություններին, տեսություններին, մոտեցումներին, եզրույթներին, իրավական ակտերին, ստանդարտներին և գրականությանը,

- տիրապետում են կառավարման մասնագիտական գործունեության հիմնական արժեքներին, էթիկայի կանոններին և սկզբունքներին,
- ծանոթ կառավարման հիմնական ուղղություններին և անհրաժեշտ միջոցառումների մշակման մեթոդներին, ձևերին ու եղանակներին,
- ունեն անհրաժեշտ և բավարար իրավաբանական, սոցիալ-հոգեբանական և կառավարչակազմակերպական գիտելիքների պաշար՝ երևույթների, ռիսկերի, գնահատման, դրանց զարգացման միտումների և հնարավոր հետևանքների կանխատեսման և դրանց կանխարգելման կամ նվազեցման համար անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու համար,
- տիրապետում են արտակարգ իրավիճակներում և ճգնաժամային պայմաններում աշխատանքների կազմակերպման և իրականացման հիմունքներին, դրանց զարգացման միտումներին և առանձնահատկություններին,
- ունակ են հասկանալ և մեկնաբանել կառավարման ոլորտի ինստիտուցիոնալ կառուցվածքներում տեղի ունեցող գործընթացները և երևույթները,
- ունեն գիտելիքներ հանրային կառավարման համակարգի, դրա կառավարման, առանձնահատկությունների և իրականացման մեխանիզմների, տեխնոլոգիաների մասին,
- իրականացնում են իրավիճակների մշտադիտարկում, գնահատում և մասնագիտական միջամտություն,
- ունակ են մասնակցելու համայնքային և համայնքահեն ծրագրերին արտակարգ իրավիճակների և ճգնաժամերի պայմաններում երկրի բնակչության պաշտպանունակության բարձրացման և ապահովման համատեքստում,
- ունակ են համապատասխան մասնագիտական հետազոտությունների, եզրակացությունների հիման վրա ձևավորել առաջարկություններ և հիմնավորել դրանք:

1.10 Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները.

Ծրագրի դիմորդը պետք է ունենա.

- Ատեստատ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության կամ միջին մասնագիտական կրթության կամ նախնական մասնագիտական կրթության մասին, որում առկա է դիմորդի միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ստանալու մասին, կամ բարձրագույն մասնագիտական կրթության մասին գրառում:

Ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով՝ հայոց լեզու (գրավոր-թելադրություն) առարկայից քննության արդյունքի և դիմում-հայտում նախապես հայտագրված միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաներից պետական ավարտական գնահատականների (դրանց բացակայության դեպքում տարեկան գնահատականի) հիման վրա:

1.11. Ապագա կարիերայի հնարավորությունները

«Ճգնաժամային կառավարում» կրթական ծրագրի շրջանավարտները լինելով ավելի

մրցունակ, հեշտությամբ կարող են տեղավորվել համապատասխան աշխատանքի հանրային ծառայության ոլորտի պետական մարմիններում ու կազակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, առևտրային բանկերում ու ֆինանսավարկային կազմակերպություններում, միջազգային, հասարակական, ինչպես նաև մասնավոր հատվածի այլ կազմակերպություններում:

Հնարավոր աշխատավայրերն են.

- ՀՀ ԱԻՆ կառուցվածքային ստորաբաժանումներ,
- ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ,
- հանրապետական գործադիր իշխանության կառավարման մարմինների համապատասխան ստորաբաժանումներ,
- տեղական, միջազգային և այլ արտադրական, հասարակական, ծառայությունների մատուցման կազմակերպություններ:

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը մագիստրոսի կրթական ծրագրում:

2. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ՝ 041301.01.6 «ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» (ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ) ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

2.1. 041301.01.6 «Կառավարում» (Ճգնաժամային կառավարում) մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի շրջանավարտի մասնագիտական գործունեության բնագավառը ներառում է՝

- ժամանակակից հարափոփոխ աշխարհում տնտեսության և հասարակության կայուն զարգացման ապահովումը, մարդու կյանքի և կենսագործունեության համար անվտանգ միջավայրի ձևավորումը, շրջակա միջավայրի վրա տարաբնույթ վտանգների ազդեցությունների հնարավորինս նվազեցումը,
- հանրային ոլորտի, ինչպես նաև շուկայում գործող ֆինանսավարկային և այլ կազմակերպություններին բնորոշ ֆինանսական հոսքերի կառավարումը՝ գործառույթների և գործընթացների առանձնահատկությունների և դրանց զարգացման հիմնախնդիրների հաշվառմամբ,
- մակրոտնտեսական քաղաքականությանն ու հանրային ֆինանսների կառավարման հարցերին առնչվող անհրաժեշտ տեղեկատվության հավաքումը (այդ թվում՝ օտարալեզու աղբյուրներից), շտեմարանների ձևավորմը, դրանց որակի և ամբողջականության գնահատումը, մշակումը, պահպանումը, փոխանցումը, ինչպես նաև վերլուծական ու հետազոտական խնդիրների լուծման և հաղորդակցման ապահովման համար ժամանակակից տեխնիկական միջոցների և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը,
- կառավարչական որոշումների քննադատական գնահատումն ու արդյունավետ որոշումների ընդունման, մարդկային, ֆինանսական և նյութական այլ ռեսուրսների արդյունավետ կառավարման մեթոդների ու եղանակների կիրառման, ինչպես նաև ֆինանսական շուկայում սոցիալ-տնտեսական արդյունավետության չափանիշների, ռիսկերի և սոցիալ-տնտեսական հնարավոր հետևանքների հաշվառումով դրանց կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակումը, նոր ծրագրերի նախագծումը, դրանց գնահատումը, մոնիթորինգի կազմակերպումն ու անցկացումը, արդյունքների հիմնավորումն և ներկայացումը՝ այդ թվում նաև ճգնաժամային և ոչ ստանդարտ իրավիճակներում,
- կայուն զարգացման սկզբունքների և մեթոդների հաշվառմամբ, կառավարման ժամանակակից մեթոդների և եղանակների կիրառմամբ ռազմավարական, ընթացիկ և օպերատիվ վերահսկողության համակարգերի մշակումը, ֆինանսական գործունեության տարբեր ոլորտներում գործընթացների պլանավորումը և կանխատեսումը՝ այդ թվում ճգնաժամային և ոչ ստանդարտ իրավիճակներում:

2.2. Շրջանավարտի մասնագիտական գործունեության օբյեկտներն են՝ շրջակա միջավայրը և ֆինանսատնտեսական համակարգը, հանրային կառավարման պետական մարմիններն ու վարչատարածքային միավորները, կազմակերպությունները, արտակարգ իրավիճակ և ճգնաժամ առաջացնող տարաբնույթ վտանգավոր երևույթները՝ այդ թվում կապված մարդու կենսագործունեության հետ, բնածին, տեխնածին և այլ բնույթի արտակարգ իրավիճակների կանխման, կանխարգելման և վերացման կամ ռիսկի նվազեցման ուղղությամբ տարբեր մեթոդների, եղանակների և միջոցների ամբողջությունը:

2.3. Կառավարում (ճգնաժամային կառավարում) մասնագիտության բակալավրը պատրաստվում է մասնագիտական գործունեության համար՝ հետևյալ տեսակներով.

1. կազմակերպչական-կառավարչական
2. Հետազոտական:

2.4.Բակալավրիատի ծրագիրը յուրացրած շրջանավարտը պատրաստ պետք է լինի լուծելու հետևյալ մասնագիտական խնդիրները՝

Կազմակերպչական-կառավարչական գործունեություն.

- կազմակերպության ստորաբաժանման գործունեության պլանավորում, կազմակերպում և մասնակցություն՝ կազմակերպության մակարդակում, այդ թվում՝ արտակարգ իրավիճակներում և ճգնաժամի պայմաններում.
- կազմակերպության կառավարման հարցերին առնչվող նորմատիվ իրավական ակտերի մշակման աշխատանքների մասնակցություն.
- տարաբնույթ ճգնաժամերի կանխարգելման և ռիսկերի նվազեցման ուղղությամբ նախագծերի քննական վերլուծության իրականացում, դրանց բարելավման անհրաժեշտ միջոցառումների մշակում, նոր նախագծերի մշակում և ներկայացում
- անվտանգության ապահովման ոլորտում պետական միջոցառումների իրականացում:

Հետազոտական գործունեություն.

- մասնակցություն կառավարման բնագավառում հետազոտությունների իրականացմանը՝ ղեկավարության հետ մեկտեղ և աշխատանքային կոլեկտիվի կազմում, փորձարարությունների իրականացում և դրանց արդյունքների մշակում.
- համակարգային կամ գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամերի կանխարգելման և ռիսկերի նվազեցման ուղղությամբ մասնակցություն գլոբալ ֆինանսական հոսքերի և ֆինանսական շուկայի ուսումնասիրության հետազոտական աշխատանքներին
- գիտահետազոտական աշխատանքների հաշվետվությունների նախապատրաստում և ձևակերպում:

3. 041301.01.6 «ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» (ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ) ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԸ

3.1. Բակալավրի կրթական ծրագրի յուրացման արդյունքում շրջանավարտի մոտ պետք է ձևավորվեն ***ընդհանուր-մշակութային, ընդհանուր-մասնագիտական և մասնագիտական կոմպետենցիաներ:***

3.2. **Շրջանավարտը, յուրացնելով բակալավրի կրթական ծրագիրը, պետք է տիրապետի հետևյալ** ***ընդհանուր-մշակութային կոմպետենցիաներին (ԸԿ)՝***

- առողջության պահպանման կոմպետենցիաներ (առողջ ապրելակերպի և ֆիզիկական կուլտուրայի նորմերի իմացություն և պահպանում) (ԸԿ-1).
- արժեքային-իմաստային կողմնորոշման կոմպետենցիաներ (մշակույթի, գիտության, արտադրության արժեքների ըմբռնում, դրանց ռացիոնալ օգտագործում) (ԸԿ-2).
- քաղաքացիականության կոմպետենցիաներ (քաղաքացու իրավունքների և պարտականությունների, ազատությունների և պատասխանատվության իմացություն և պահպանում) (ԸԿ-3).
- ինքնակատարելագործման կոմպետենցիաներ (սովորելու անհրաժեշտության գիտակցում, պահանջմունք և ընդունակություն) (ԸԿ-4).
- սոցիալական փոխգործակցության կոմպետենցիաներ. անձի հոգեբանության զգայական և կամային առանձնահատկությունների օգտագործման ունակություն, համագործակցության պատրաստակամություն, ռասսայական, ազգային և կրոնական հանդուրժողականություն, կոնֆլիկտները հարթելու ունակություն, սոցիալական ադապ-տացման կարողություն, հաղորդակցականություն, հանդուրժողականություն (ԸԿ-5).
- հանուն առաջադրված նպատակների իրականացման իր աշխատանքը կազմակերպելու ունակություն և նորարարական գաղափարների օգտագործման պատրաստակամություն (ԸԿ-6).
- անվտանգության մշակույթի և ռիսկի հաշվառմանը կողմնորոշված մտածելակերպի տիրապետում, որի դեպքում անվտանգության հարցերը և շրջակա միջավայրի պահպանությունը դիտարկվում են որպես կյանքի և գործունեության կարևորագույն առաջնահերթություններ (ԸԿ-7).
- ինքնուրույն աշխատելու կարողություն (ԸԿ-8).
- իր իրավասությունների սահմաններում որոշումներ ընդունելու ունակություն (ԸԿ-9).
- ճանաչողական գործունեության կարողություն (ԸԿ-10).
- վերացական և քննադատական մտածողության ընդունակություն, շրջակա միջավայրի հետազոտություն' վերջինիս հնարավորությունները և ռեսուրսները բացահայտելու համար, ոչ ստանդարտ որոշումներ կայացնելու և խնդրահարույց իրավիճակները վերացնելու կարողություն (ԸԿ-11).
- հիմնական ծրագրային միջոցները օգտագործելու, գլոբալ տեղեկատվական պաշարներից օգտվելու ունակություն, ժամանակակից հեռահաղորդակցության միջոցների տիրապետում, տարբեր աղբյուրներից տեղեկատվության հետ աշխատելու հմտություններն օգտագործելու ունակություն մասնագիտական և սոցիալական խնդիրներ լուծելու համար (ԸԿ-12).
- հայոց լեզվով բանավոր և գրավոր խոսքի տիրապետում, մասնագիտական

հռետորաբանության օգտագործման ունակություն, ըմբռնելի տեքստերի ստեղծման մեթոդների տիրապետում, օտար լեզուներից առնվազն երկու լեզվով սոցիալական հաղորդակցություն իրականացնելու կարողություն (ԸԿ-13).

- մասնագիտական-սոցիալական գործունեության մեջ կազմակերպչական-կառավարչական հմտությունների օգտագործման կարողություն (ԸԿ-14).
- հնարավոր վտանգներից, տարերային աղետներից, վթարներից, արտադրական անձնակազմի և բնակչության պաշտպանության պատրաստականություն (ԸԿ-15):

3.3. Շրջանավարտը, յուրացնելով բակալավրի կրթական ծրագիրը, պետք է ունենա հետևյալ *ընդհանուր-մասնագիտական կոմպետենցիաները (ԸՄԿ)*՝

- ժամանակի խելամիտ կառավարման (ինքնակառավարման) կարողություն, այդ թվում՝ ճգնաժամային և արտակարգ իրավիճակային պայմաններում (ԸՄԿ-1).
- կոլեկտիվի հետ աշխատանքում մասնագիտական գործառույթների կատարման պատրաստականություն (ԸՄԿ-2).
- կառավարման բնագավառում (այդ թվում՝ ճգնաժամային և արտակարգ իրավիճակային պայմաններում) նորմատիվ-իրավական ակտերով կողմնորոշվելու ընդունակություն (ԸՄԿ-3).
- մասնագիտական գործունեության արդյունքների արդյունավետության գնահատման ժամանակ մակրո և միկրո մակարդակների տնտեսագիտական գիտելիքների, մեթոդերի և գործիքների օգտագործման ունակություն (ԸՄԿ-4).
- իր մասնագիտական գործունեության մեջ տեխնոլորտային անվտանգության պահպանման, չափիչ և հաշվիչ տեխնիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ժամանակակից միտումները հաշվի առնելու ունակություն (ԸՄԿ-5).
- ոլորտի քաղաքականության վերլուծության, առաջարկությունների մշակման մեթոդների և գործիքների իմացություն և դրանց կիրառման կարողություն(ԸՄԿ-6).
- կայուն զարգացման սկզբունքների և մեթոդների իմացություն և պլանավորման ու կանխատեսման գործընթացներում դրանց կիրառման կարողություն (ԸՄԿ-7):

3.4. Շրջանավարտը, յուրացնելով բակալավրի կրթական ծրագիրը, պետք է տիրապետի *մասնագիտական կոմպետենցիաների,* որոնք համապատասխանում են նրա մասնագիտական գործունեության այն տեսակին, որին ուղղված է բակալավրի կրթական ծրագիրը (ՄԿ):

Կազմակերպչական - կառավարչական գործունեություն(ԿԿ).

- աշխատանքի, շրջակա միջավայրի և անվտանգության պահպանման կազմակերպման վերաբերյալ գիտելիքների կիրառման կարողություն կազմակերպությունում, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների և ճգնաժամերի պայմաններում (ՄԿ-ԿԿ1).
- կազմակերպակառավարչական որոշումների և իրավական ակտերի նախագծման, գնահատման, հիմնավորման, կիրառման, կարողություն՝ այդ թվում ճգնաժամային և ոչ ստանդարտ իրավիճակներում (ՄԿ-ԿԿ2).
- պետական և համայնքային բյուջեների պլանավորման, ֆինանսավարկային կազմակերպությունների, ինչպես նաև շուկայում գործող տնտեսավարող այլ սուբյեկտների ֆինանսների պլանավորման և ֆինանսական հաշվեկշռի կազմման, հիմնավորման ու ներկայացման կարողություն (ՄԿ-ԿԿ3).
- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ֆինանսավարկային կազմակերպությունների, ինչպես նաև շուկայում գործող տնտեսավարող այլ սուբյեկտների գործունեությունը բնութագրող ֆինանսատնտեսական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության մշակման համար անհաժեշտ

գործիքակազմի ընտրության, հայրենական և արտասահմանյան վիճակագրական տվյալների համեմատման, վերլուծման, ստացված եզրակացությունների հիմնավորման և մեկնաբանման կարողություն (ՄԿ-ԿԿ4).

- ֆինանսական շուկայում ճգնաժամային և ոչ ստանդարտ իրավիճակներում արդյունավետ որոշումների ընդունման և ֆինանսական ռեսուրսների ու հոսքերի արդյունավետ կառավարման կարողություն (ՄԿ-ԿԿ5).
- կառավարչական որոշումների քննադատական գնահատման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական արդյունավետության չափանիշների, ռիսկերի և սոցիալ-տնտեսական հնարավոր հետևանքների հաշվառումով դրանց կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակման և հիմնավորման կարողություն (ՄԿ-ԿԿ6).
- ընթացիկ և օպերատիվ վերահսկողության համակարգերի մշակման, գործունեության տարբեր ոլորտներում գործընթացների կառավարման ժամանակակից մեթոդների և սկզբունքների տիրապետման և կիրառման կարողություն (ՄԿ-ԿԿ7).
- մակրո և միկրո մակարդակներում ֆինանսական քաղաքականության գործիքների ընտրության և կիրառման կարողություն (ՄԿ-ԿԿ8).
- մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարման, ինչպես նաև բիզնեսի գլոբալացման պայմաններում կազմակերպության ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ ուսումնասիրության մեթոդների, ֆինանսական լծակների և տեխնոլոգիաների իմացություն և կիրառման կարողություն (ՄԿ-ԿԿ9).
- տեղեկատվության հավաքման (այդ թվում՝ օտարալեզու աղբյուրներից), շտեմարանների ձևավորման, դրանց որակի և ամբողջականության գնահատման, մշակման, պահպանման, փոխանցման, ինչպես նաև վերլուծական ու հետազոտական խնդիրների լուծման և հաղորդակցման ապահովման համար ժամանակակից տեխնիկական միջոցներ և տեղեկատվական տեխնոլոգիաներ օգտագործելու կարողություն (ՄԿ-ԿԿ10).
- թիմային աշխատանքներում ինքնակառավարման գործառույթների և մեթոդների իմացություն և դրանց կիրառման կարողություն (ՄԿ-ԿԿ11).

Գիտահետազոտական գործունեություն (ԳԳ)

- հանրային ոլորտի համակարգերի և կազմակերպությունների կառավարման կատարելագործման ողղությամբ իրավիճակի հետազոտման, ախտորոշման, քննական վերլուծության մեթոդների տիրապետման, առաջարկությունների մշակման, հիմնավորման և ներկայացման կարողություն (ՄԿ-ԳԳ12).
- ոլորտի քաղաքականության վերլուծության, նոր ծրագրերի նախագծման, գնահատման, մոնիթորինգի կազմակերպման և դրա արդյունքների կիրառման կարողություն (ՄԿ-ԳԳ13).
- համակարգային կամ գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամերի կանխարգելման և ռիսկերի նվազեցման ուղղությամբ գլոբալ ֆինանսական հոսքերի և ֆինանսական շուկայի ուսումնասիրության կարողություն (ՄԿ-ԳԳ14).
- տարաբնույթ հետազոտական աշխատանքների կատարման կարողություն, դրանց վերաբերյալ հաշվետվությունների նախապատրաստում և ձևակերպում (ՄԿ-ԳԳ15).
- հետազոտական մշակումների մասնակցելու ընդունակություն՝ ըստ մասնագիտական պատրաստության. հետազոտության թեմային առնչվող տեղեկատվության համակարգում, փորձաքննություններին մասնակցության ցուցաբերում, ստացված տվյալների մշակում (ՄԿ-ԳԳ16).

- հետազոտական կոլեկտիվի կազմում մասնագիտական խնդիրների լուծման ընդունակություն (ՄԿ-ԳԳ17).
- մասնագիտական խնդիրներ լուծելիս մաթեմատիկայի, բնական, հումանիտար և տնտեսական գիտությունների օրենքների և մեթոդների օգտագործման կարողություն (ՄԿ-ԳԳ18).
- հետազոտությունների (այդ թվում՝ փորձագիտական) անցկացման և նկարագրման համար գործնական հմտություններ ձեռք բերելու ընդունակություն (ՄԿ-ԳԳ19):

Կից ներկայացվում է կոմպետենցիաների ձևավորման քարտեզը ***(Հավելված 2):***

1.12 Ծրագրի կրթական վերջնարդյունքները	
Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Այս ծրագրի հաջող ավարտին սովորողը. **Ա1.** Ծանոթ կլինի ռիսկերի ազդեցություններից կազմակերպության գործունեության անվտանգությունն ապահովելու ռազմավարական և օպերատիվ կառավարմանը, կառավարվող օբյեկտի վերաբերյալ տեղեկատվական աշխատանքների կատարման ը(ստացման, մշակման, վերլուծության, գնահատման), համապատասխան կառավարչական որոշումների ընդունման և կատարման ապահովմանը, **Ա2.** Ծանոթ կլինի հետազոտական գործունեության՝ աղետների ռիսկերի գնահատման մեթոդների կիրառում, վտանգների և ռիսկերի թվայնացված քարտեզների մշակման մեթոդաբանության կիրառմանը, վիճակագրական տեղեկատվության ընդհանրա-	**Դասավանդման/ ուսումնառության մեթոդները.** ՈՒսանողները ձեռք են բերում **Ա** կետում նշված գիտելիքը և իմացությունը հետևյալ մեթոդներով. ➢ դասախոսություն, ➢ սեմինար-պարապմունք, ➢ խմբային քննարկում, ➢ գործնական պարապմունք, ➢ ինքնուրույն աշխատանք, ➢ ռեֆերատ, ➢ բանավեճ, ➢ կլոր սեղան, ➢ գործնական խաղ: **Գնահատման մեթոդները և ձևերը.** ՈՒսանողների **Ա** կետում նշված, գիտելիքները և իմացությունը գնահատվում են հետևյալ ձևերով և մեթոդներով. ➢ առաջադրանքների ստուգում և գնահատում, ➢ սեմինար-պարապմունքների ընթացքում գիտելիքների գնահատում, ➢ ստուգարքներ,

ցման, հետազոտական աշխատանքների կազմակերպման և իրականա-ցման գործունեությանը. **Ա3.** Կիմանա կազմակերպական-կառավարչական գործունեության՝ կառավարման կազմակերպական կառուցվածքների վերաբերյալ, ինչպես նաև ռիսկերի նվազեցմանն ուղղված կառավարչական որոշումների ընդունման, աղետների ռիսկերի նվազեցման գործընթացների կառավարման, ռիսկերի ծագման դեպքում օպերատիվ կառավարման մեթոդաբանությանը. **Ա4.** Կտիրապետի կազմակերպության մասնագիտական խնդիրների առաջադրման, ծրագրերի կազմման և լուծմանն ուղղված աշխատանքների բոլոր փուլերին՝ ապահովելով հնարավոր ճգնաժամերից ան-վտանգության վերլուծության մեթոդաբանությանը. **Ա5.**Ծանոթ կլինի նյութերի, միջոցների, սարքավորումների, տեխնոլոգիական գործընթաց-ների արդյունավետ օգտագործման գործառնություններին, հատկապես հաշվի առնելով հնարավոր ճգնաժամերի ծագման դեպքում օպերատիվ կառավարման պահանջները.	➢ թեստային առաջադրանք, ➢ զեկուցում, ➢ միջանկյալ քննություններ, ➢ գրավոր ու բանավոր քննություններ ➢ եզրափակիչ քննություններ, ➢ կուրսային աշխատանքների պաշտպանություն, ➢ զեկուցում, ➢ ամփոփիչ ատեստավորման քննություններ:

Ա6. Ծանոթ կլինի կառույցում հետազոտական աշխատանքների կազմակերպ-ման, իրականացման և արդյունքների մշակման բոլոր փուլերին՝ ուղղված ռիսկերի կառավարմանը, **Ա7.** Ծանոթ կլինի տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաներից, կազմակերպության տվյալների բազաներից, այդ թվում նաև ռիսկերի քարտեզներից, աշխարհագրական տեղեկատ-վական համակարգերից, մասնագիտական բնագավառին առանձնահատուկ փորձագիտական համակարգերից և կիրառական ծրագրերի փաթեթներից օգտվելու ուսուցման ժամանակակից մեթոդներին:	
Բ. Գործնական մասնագի-տական կարողություններ Այս ծրագրի հաջող ավարտին սովորողն ունակ կլինի. **Բ1**. Վերլուծել և մեկնաբանել իր մասնագիտական գործունեության բնագավառին առնչվող իրավական դաշտը (օրենքներ, կառավարության որոշումներ, նորմատիվային ակտեր, միջազգային կոնվենցիաներ, պայմանագրեր, միջպետական համաձայնագրեր և այլն), մեթոդական նյութերը. **Բ2.** Գործադրել ձեռք բերած	**Դասավանդման/ուսումնառության մեթոդները.** Ո․Իսանողները ձեռք են բերում Բ կետում նշված գործնական մասնագիտական կարողությունները հետևյալ մեթոդներով և ձևերով. ➢ դասախոսություն, ➢ գործնական պարապմունք, ➢ գրավոր և բանավոր առաջադրանքներ, ➢ սեմինար-պարապմունք, ➢ խմբային աշխատանք, ➢ իրավիճակային խնդիրներ, ➢ գործնական խաղ, ➢ պրակտիկաներ:

հետազոտական աշխատանքների իրականացման արդյունքում ստացված տվյալները, տարբեր ոլորտներում **Բ3.** կիրառել արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանությանն և քաղաքացիական պաշտպանությանն առընչվող գործող չափորոշիչները, այդ բնագավառին յուրահատուկ տեխնիկական միջոցները (այդ թվում նաև՝ տեղեկատվական), սարքավորումները, ռիսկերի նվազեցման և հետևանքների վերացման նոր տեխնոլոգիաները, հմտությունները տարբեր ոլորտներում **Բ4.** Ընկալել և վերլուծել արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառի յուրահատուկ տեխնիկական միջոցների, սարքավորումների, ռիսկերի նվազեցման և հետևանքների վերացման տեխնոլոգիաները. **Բ5**. Կիրառել աղետների ռիսկերի գնահատման ժամանակակից մեթոդներ, վտանգների և ռիսկերի թվայնացված քարտեզների մշակման մեթոդաբանություն. **Բ6.** Կազմակերպել իր	**Գնահատման մեթոդները և ձևերը.** Ուսանողների **Բ** կետում նշված գործնական մասնագիտական կարողությունները գնահատվում են հետևյալ մեթոդներով և ձևերով: ➢ առաջադրանքների կատարման ստուգում և գնահատում, ➢ սեմինար-պարապմունքների ընթացքում գործնական կարողությունների գնահատում, ➢ թեստային առաջադրանք, ➢ զեկուցում, ➢ միջանկյալ գրավոր ու բանավոր քննությունների գնահատում, ➢ եզրափակիչ քննություններ, ➢ կուրսային աշխատանքների պաշտպանություն, ➢ պրակտիկայի գնահատում, ➢ ամփոփիչ ատեստավորման քննություններ:

ենթակայության ստորաբաժանման աշխատանքը: **Բ7.** Վերլուծել և մեկնաբանել աշխատանքային օրենսդրության հիմունքները աշխատանքի պաշտպանության նորմերը և կանոնները տարբեր ոլորտներում	
Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ Այս ծրագրի հաջող ավարտին սովորողը ունակ կլինի. **Գ1.** Օգտվել տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակել և ներկայացնել տեղեկատվությունը **Գ2.** Գիտելիքները կիրառել պրակտիկ գործունեության մեջ. **Գ3.** Պատրաստել զեկուցումներ, կատարել տեղեկատվական նյութի վերլուծություն, գրել գրախոսություններ. **Գ4.** Կիրառել միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում. **Գ5.** Համադրել արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանությանն և քաղաքացիական պաշտպանությանն առնչվող տեսական և գործնական գիտելիքները, համապատասխան բնույթի աշխատանքներ	**Դասավանդման/ուսումնառության մեթոդները.** ՈՒսանողները ձեռք են բերում **Գ** կետում նշված ընդհանրական (փոխանցելի) կարողությունները հետևյալ մեթոդներով. ➢ դասախոսություն, ➢ գործնական պարապմունք, ➢ առաջադրանք, խմբային քննարկումներ և ներկայացումներ ➢ սեմինար-պարապմունք, ➢ խմբային աշխատանք, ➢ համացանցից օգտվելով՝ անհատական հանձնարարությունների կատարում, ➢ կուրսային աշխատանքի պատրաստում, ➢ իրավիճակային խնդիրներ, ➢ պրակտիկաներ. **Գնահատման մեթոդները և ձևերը.** Ուսանողների **Գ** կետում նշված ընդհանրական (փոխանցելի) կարողությունները գնահատվում են հետևյալ մեթոդներով և ձևերով: ➢ առաջադրանքների կատարման ստուգում և գնահատում, ➢ սեմինար-պարապմունքների ընթացքում ընդհանրական (փոխանցելի) կարողությունների գնահատում,

կատարելիս:	➢ թեստային առաջադրանք, ➢ զեկուցում, ➢ միջանկյալ գրավոր ու բանավոր քննությունների գնահատում, ➢ եզրափակիչ բանավոր քննություններ: ➢ կուրսային աշխատանքների պաշտպանություն, ➢ գիտական սեմինարներ և քննարկումներ, ➢ պրակտիկայի գնահատում, ➢ ամփոփիչ ատեստավորման քննություններ:

4. 041301.01.6 «ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» (ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ) ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

4.1 Օրացուցային ուսումնական ժամանակացույց.

Օրացուցային ուսումնական ժամանակացույցն ամրագրում է տեսական և գործնական ուսուցման փուլերի, քննաշրջանների, արձակուրդների, ավարտական որակավորման աշխատանքների մշակման, պետական ամփոփիչ ատեստավորման հաջորդականությունը և շարունակականությունը:

Օրացուցային ուսումնական ժամանակացույցը ներկայացված է ուսումնական պլանում և հանդիսանում է նրա բաղկացուցիչ մասը:

Տե՛ս Ուսումնական պլանը** (**Հավելված 1):

4.2 Ուսումնական պլան.

Ուսումնական պլանում տրվում են առարկաների ցանկը, գործնական աշխատանքները, սովորողների պետական ամփոփիչ ատեստավորումը, ուսումնական գործունեության մյուս տեսակները՝ դրանց ծավալի և հաշվարկային միավորների, հաջորդականության և ուսումնական փուլերում ծավալների նշումով:

Ուսումնական պլանում առանձնացվում է սովորողների ինքնուրույն և լսարանային աշխատանքների ծավալը: Յուրաքանչյուր առարկայի համար նշվում է սովորողների միջանկյալ ատեստավորումների ձևը:

Տե՛ս Ուսումնական պլանը** (**Հավելված 1):

4.3 Առարկայի աշխատանքային ծրագիրը.

Առարկայի աշխատանքային ծրագիրը ներառում է՝

- առարկայի անվանումը, նպատակները և խնդիրները.
- կրթական ծրագրի կառուցվածքում առարկայի տեղը.
- առարկայի յուրացման արդյունքների նկատմամբ պահանջները՝ ուսման պլանավորված արդյունքների մատնանշմամբ՝ գիտելիքներ, հմտություններ և/կամ գործունեության փորձ, ինչպես նաև ձևավորված կոմպետենցիաներ.

Տե՛ս կոմպետենցիաների ձևավորման քարտեզը (Հավելված 2):

- առարկայի ծավալը հաշվարկային միավորներում՝ ակադեմիական կամ աստղաբաշխական ժամերի նշումով, բաժանված դասավանդողների հետ սովորողների լսարանային (ըստ ուսումնական պարապմունքների տեսակի) և ինքնուրույն աշխատանքների.
- առարկայի բովանդակությունը՝ կառուցված ըստ թեմաների (բաժինների)՝ նրանցով անցկացված ուսումնական պարապմունքների տեսակների և ակադեմիական ու

աստղաբաշխական ժամերի քանակի, ինքնուրույն աշխատանքի ժամերի նշումով.

- առարկայի և նրա բաժինների բովանդակությունը.
- առարկայի ուսումնամեթոդական և տեղեկատվական ապահովումը.
- առարկայի գծով կրթական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովման նկարագիրը:

Տե՛ս Ուսումնական տարիներ և ուսումնական մոդուլներ (Հավելված 3):

4.4 Թեմատիկ պլան.

Առարկայի ուսումնասիրման թեմատիկ պլանը ներառում է՝

- ուսումնական ժամանակի բաշխումն ըստ կիսամյակների և ուսումնական պարապմունքների տեսակի, առարկայի ուսումնասիրության պլանն ըստ ուսումնական պարապմունքների, գրականությունը (հիմնական և լրացուցիչ), կազմակերպչական-մեթոդական ուղեցույցները, մյուս առարկաների հետ փոխադարձ կապը, ուսումնական պարապմունքների անցկացման ժամանակ օգտագործվող կրթական տեխնոլոգիաները, առարկայի ուսումնասիրության արդյունքում ձևավորվող կոմպետենցիաների ցանկը:

Տե՛ս Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական մոդուլների նկարագրիչները (Հավելված 4):

4.5 Պրակտիկայի ծրագիր.

Պրակտիկայի ծրագիրը ներառում է՝

- պրակտիկայի տեսակը, նրա անցկացման ձևերը (ձևը).
- պարակտիկայի անցկացման ժամանակ պլանավորված ուսումնական արդյունքների թվարկումը, որը հարաբերակցվում է կրթական ծրագրի յուրացման պլանավորված արդյունքներին.
- կրթական ծրագրի կառուցվածքում պրակտիկայի տեղի, ծավալի նշումը հաշվարկային միավորներով և նրա շարունակականությունը շաբաթների մեջ՝ կա՛մ ակադեմիական, կա՛մ աստղաբաշխական ժամերով.
- տեղեկատվական տեխնոլոգիաների ցանկը, որոնք օգտագործվում են պրակտիկաների անցկացման ժամանակ, ներառյալ ծրագրային ապահովման և տեղեկատվական համակարգերի ցանկերը (անհրաժեշտության դեպքում).
- նյութատեխնիկական բազայի նկարագիրը, որն անհրաժեշտ է պրակտիկայի անցկացման համար:

Ֆակուլտետի (ամբիոնի) որոշմամբ պրակտիկայի ծրագրի կազմի մեջ կարող են ներառվել նաև այլ տեղեկություններ և /կամ նյութեր:

Բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքում ներառված են ուսումնական, արտադրական և հետազոտական պրակտիկաները:

4.6 Գնահատման միջոցները.

Գնահատման միջոցները ներկայանում են գնահատման միջոցների ֆոնդի տեսքով՝ ընթացիկ հսկողության, միջանկյալ ատեստավորումների, սովորողների՝ ըստ առարկաների, պրակտիկաների և պետական ամփոփիչ ատեստավորումների։

Ընթացիկ հսկողության անցկացման համար գնահատման միջոցների, միջանկյալ ատեստացիաների ֆոնդը ներառում է՝

- առարկայի բովանդակության յուրացման մակարդակի վերաբերյալ պահանջները՝ ուսման պլանավորված արդյունքների նշումով՝ գիտելիքներ, հմտություններ, կարողություններ և/կամ գործունեության փորձ, ինչպես նաև ձևավորվող կոմպետենցիաներ, գնահատման միջոցների ֆոնդի անձնագիր՝ կրթական ծրագրի յուրացման գործընթացում ձևավորվող կոմպետենցիաների փուլերի նշումով.
- ***գնահատման սանդղակի նկարագիրը.*** տիպային ստուգողական առաջադրանքներ կամ այլ նյութեր, որոնք անհրաժեշտ են գիտելիքների, հմտությունների, կարողությունների և/կամ գործունեության փորձի գնահատման համար և որոնք կրթական ծրագրի յուրացման գործընթացում բնութագրում են ձևավորվող կոմպետենցիաների փուլերը.
- ***մեթոդական նյութեր,*** որոնք սահմանում են գիտելիքի, հմտությունների, կարողություն-ների և գործունեության փորձի գնահատման ընթացակարգերը, բնութագրում ձևավորվող կոմպետենցիաները, ստուգարքների և քննությունների նախապատրաստման հարցերը, ստուգարքների և քննությունների հանձնման տոմսերի տարբերակները և այլ նյութեր.
- ***պետական ամփոփիչ ատեստավորման համար գնահատման միջոցների ֆոնդը ներառում է*** ՝կոմպետենցիաների ցանկը, որոնց պետք է տիրապետի սովորողը կրթական ծրագրի յուրացման արդյունքում.
- ***կոմպետենցիաների գնահատման ցուցանիշների և չափորոշիչների նկարագիրը.*** տիպային ստուգողական առաջադրանքներ կամ այլ նյութեր, որոնք անհրաժեշտ են կրթական ծրագրի յուրացման արդյունքների գնահատման համար. մեթոդական նյութեր, որոնք սահմանում են կրթական ծրագրի յուրացման արդյունքների գնահատման ընթացակարգերը.

4.7 Շրջանավարտի կոմպետենտային մոդելը.

Շրջանավարտի կոմպետենտային մոդելը՝ որպես կրթական ծրագրի յուրացման ավարտին ակնկալվող միասնական կրթական արդյունք, ներառում է շրջանավարտի կոմպետենցիաների ձևավորվածության մակարդակի բովանդակային նկարագիրը, կոմպետենցիաների ձևավորման փուլերը։

5. 041301.01.6 «ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» (ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ) ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

5.1 Մանկավարժական կադրեր.

Գիտամանկավարժական հաստիքային աշխատողների բաժինը կազմում է Ակադեմիայի գիտամանկավարժական աշխատողների (ամբողջական դրույքաչափերով) ընդհանուր թվի ավելի քան 50 տոկոսը:

Գիտամանկավարժական աշխատողների (ամբողջական դրույքաչափերով) բաժինը, որոնք ունեն իրենց դասավանդած առարկաներին համապատասխան կրթություն, բակալավրի կրթական ծրագիր իրականացնող ընդհանուր գիտամանկավարժական աշխատողների թվում կազմում է ավելի քան 70 տոկոս:

Գիտական աստիճաններով և կոչումներով գիտամանկավարժական աշխատողների (ամբողջական դրույքաչափերով) բաժինը կազմում է շուրջ 70 տոկոս:

Աշխատակիցների (ամբողջական դրույքաչափերով) բաժինը ղեկավար և կազմակերպական աշխատակիցների թվում, որոնց գործունեությունը կապված է բակալավրի կրթական ծրագիր իրականացնող մասնագետների հետ (ոչ պակաս 3 տարվա աշխատանքային ստաժով տվյալ մասնագիտության բնագավառում), կազմում է ավելի քան 10 տոկոս:

5.2 Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական և տեղեկատվական ապահովում.

Կրթական ծրագիրն ապահովվում է բոլոր առարկաների (մոդուլների) և նյութերի ուսումնամեթոդական փաստաթղթերի առկայությամբ:

Յուրաքանչյուր առարկայի (մոդուլի) բովանդակությունը ներկայացված է համացանցում և Ակադեմիայի ներքին ցանցում:

Սովորողների արտալսարանական աշխատանքն ուղեկցվում է մեթոդական ապահովմամբ և այն ժամանակի հիմնավորմամբ, որը ծախսվելու է այդ աշխատանքի կատարման համար:

Համացանցում և Ակադեմիայի ներքին ցանցում ներկայացված բոլոր ուսումնամեթոդական համալիրներում գոյություն ունեն բաժիններ, որոնք բովանդակում են հանձնարարականներ սովորողների ինքնուրույն աշխատանքի համար:

Կրթական ծրագրի իրականացումն ապահովվում է յուրաքանչյուր սովորողի մուտքի հնարավորությամբ՝ տվյալների բազա, գրադարանային ֆոնդեր, որոնք ձևավորվել են ըստ կրթական ծրագրի առարկաների ցանկի: Բոլոր սովորողները ինքնուրույն աշխատանքների ժամանակ ապահովված են համացանց և Ակադեմիայի էլեկտրոնային գրադարան մուտքի հնարավորությամբ:

Էլեկտրոնային-գրադարանային համակարգը (էլեկտրոնային գրադարանը) և Ակադեմիայի էլեկտրոնային տեղեկատվական-կրթական միջավայրն ապահովում են մուտքի միաժամանկյա հնարավորություն բակալավրի կրթական ծրագրով սովորողների ոչ պակաս 25

տոկոսի համար:

Էլեկտրոնային տեղեկատվական-կրթական միջավայրն ապահովում է՝

- հասանելիություն ուսումնական պլաններին, առարկայի (մոդուլի) աշխատանքային ծրագրերին, պրակտիկային, էլեկտրոնային գրադարանային համակարգի հրատարակություններին և էլեկտրոնային կրթական ռեսուրսներին, որոնք մատնանշված են առարկայի աշխատանքային ծրագրերում.
- կրթական գործընթացի արձանագրման ընթացքին, միջանկյալ ատեստավորումների և բակալավրի կրթական ծրագրերի յուրացման արդյունքներին.
- բոլոր տեսակի պարապմունքների անցկացումը, ուսման արդյունքների գնահատման ընթացակարգերը, որոնց իրականացումը նախատեսված է էլեկտրոնային ուսուցմամբ, հեռակառավարման կրթական տեխնոլոգիաները.
- սովորողների էլեկտրոնային պորտֆոլիոյի ձևավորումը, այդ թվում՝ սովորողների աշխատանքների պահպանումը, կրթական գործընթացի ցանկացած մասնակցի կողմից այդ աշխատանքներին տրված գնահատականները և գրախոսությունները.
- կրթական գործընթացի մասնակիցների փոխգործակցությունն, այդ թվում՝ համաժամանակյա և/կամ ոչ համաժամանակյա փոխգործակցությունը համացանցի միջոցով:

Բակալավրի կրթական ծրագրի իրականացումն ապահովվում է գրադարանի առկայությամբ՝ ընթերցասրահով, որի միասնական գրադարանային ֆոնդը կազմում են գիտական, ուսումնական, մեթոդական և գեղարվեստական գրականությունը, գիտական ու գեղարվեստական հանդեսները, էլեկտրոնային դասագրքերը և այլն:

Գրադարանային ֆոնդը համալրված է տպագիր հրատարակություններով՝ յուրաքանչյուր հիմնական գրականությունից 50 օրինակի հաշվով, որոնք թվարկված են առարկայի աշխատանքային ծրագրում և ոչ պակաս 25 օրինակ լրացուցիչ գրականություն՝ 100 սովորողի հաշվով:

Լրացուցիչ գրականության ֆոնդը, բացի ուսումնականից, ներառում է տեղեկագրական-մատենագիտական և պարբերական հրատարակություններ՝ յուրաքանչյուր 100 սովորողի համար 1-2 օրինակի հաշվով:

5.3 Ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովումը.

Ակադեմիայում ուսումնական գործընթացն ապահովվում է մասնաշենքերի առկայությամբ, որոնք իրենցից ներկայացնում են ուսումնական լսարաններ՝ դասախոսության և սեմինարի տիպի պարապմունքներ, կուրսային նախագծեր (կուրսային աշխատանքների կատարում), խմբային և անհատական խորհրդատվություններ, ընթացիկ հսկողությունն միջանկյալ ատեստացիաներ անցկացնելու համար:

Մասնաշենքերը կահավորված են հատուկ կահույքով և ուսուցման տեխնիկական միջոցներով, որոնք ծառայում են ուսումնական տեղեկատվության ներկայացմանը մեծ լսարաններին:

Դասախոսության տիպի պարապմունքներ անցկացնելու համար օգտագործվում են ցուցադրական սարքավորումների հավաքածուներ և ուսումնա-տեսողական պիտույքներ, որոնք ապահովում են թեմատիկ լուսաբանումները՝ առարկայի (մոդուլի) ուսումնական աշխատանքային ծրագրին համապատասխան:

Բակալավրի կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովման ցանկը ներառում է մասնագիտացված ուսումնական լաբորատորիաները, մարզումային բազան (սարքավորումներ, գույք և այլն), մարզական բազան (մարզահրապարակներ, ստադիոններ, մարզադահլիճներ, լողավազաններ և այլն), վարժահրապարակները՝ գործնական պարապմունքներ և ուսումնավարժանքներ իրականացնելու համար:

6. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ, ՈՐԸ ՆՊԱՍՏՈՒՄ Է ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԱՆՁՆԱՅԻՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Ակադեմիայի դաստիարակչական միջավայրը ձևավորվում է միջոցառումների համալիրի օգնությամբ, որը ենթադրում է՝

- սովորողների անձնային որակների ձևավորում, որոնք անհրաժեշտ են արդյունավետ մասնագիտական գործունեության համար.
- ակտիվ հայրենասիրական գիտակցության, իրավական և քաղաքական մշակույթի, աշխատանքի և կյանքի կազմակերպման ընդունակության ձևավորում ժամանակակից պայմաններում.
- ուսման և ծառայության նկատմամբ սովորողների շահադրդման, մասնագիտական վարպետության բարձրացման համար անձնական պատասխանատվության զարգացում.
- հոգևոր-բարոյական որակների դաստիարակություն և կատարողական ու ծառայողական կարգապահության բարձր մակարդակ.
- սովորողների ֆիզիկական առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի դաստիարակություն, ալկոհոլի, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի օգտագործման հանդեպ անհանդուրժողական վերաբերմունք.
- կոլեկտիվ ղեկավարելու հմտությունների և կարողությունների ձևավորում: Ակադեմիայի դաստիարակչական միջավայրի հիմնական նպատակը բարձրագույն կրթությամբ ապագա մասնագետի անձի բազմակողմանի զարգացումն է՝ բնորոշվող բարձր կուլտուրայով, ֆիզիկական առողջությամբ, սոցիալական ակտիվությամբ, հայրենասեր քաղաքացու որակներով:

Դաստիարակչական միջավայրը ներառում է հետևյալ բաղադրիչները՝ պետական-հայերնասիրական և բարոյական, մասնագիտական, էկոլոգիական և իրավական, գեղագիտական և ֆիզիկական:

6.1 Դաստիարակչական միջավայրի պետական-հայրենասիրական և բարոյական բաղադրիչը

Պետական-հայրենասիրական դաստիարակություն.

Պետական-հայրենասիրական գիտակցության ձևավորումը պետք է նպաստի քաղաքացու և մարդու կայացմանը, մասնագիտական որակների և ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ պատասխանատվության զգացումի խորացմանը: Հայրենասիրությունը ձեռք է բերում հատուկ նշանակություն՝ կապված Ակադեմիայի շրջանավարտի մասնագիտական գործունեության առանձնահատկությունների հետ:

Պետական-հայրենասիրական դաստիարակությունը սովորողների վրա դաստիարակչական ներգործությունն է՝ բարձր հայրենասիրական գիտակցության ձևավորման նպատակով, հավատարմությունը Հայրենիքին, պարտքին, սահմանադրական պարտականությունների

կատարման պատրաստականությունը։

Պետական-հայրենասիրական դաստիարակության իրականացման ձևերը.

- բոլոր տեսակի ուսումնական պարապմունքների հայրենասիրական բովանդակությամբ հագեցում. անձնակազմի տեղեկացվածությունը ՀՀ պետական քաղաքականությանը.
- հայրենասիրական դաստիարակության թեմաներով մրցույթների, սեմինարների, կոնֆերանսների, ցուցահանդեսների անցկացում.
- Ակադեմիայում պատմական և մասնագիտական ավանդույթների պահպանում և զարգացում.
- ուսումնական կոլեկտիվում հանդուրժողական վերաբերմունքի ձևավորում.
- ազգամիջյան հարաբերությունների մշակույթի և ավանդական կրոնների նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորում.
- թեմատիկ երեկոների անցկացում Հայրենական մեծ պատերազմի և Արցախյան գոյամարտի վետերանների ու ՀՀ ԱԻՆ վետերանների մասնակցությամբ.
- զինվորական երդման, սպայական կոչումների շնորհման, Ակադեմիայի շրջանավարտների թողարկման հանդիսավոր արարողությունների անցկացում։

Բարոյական դաստիարակություն.

Հաշվի առնելով ապագա մասնագիտության առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է դնել սովորողների անձի բարոյական ձևավորման հիմքերը բոլոր առարկաների դասավանդման ընթացքում։ Հիմնական բարոյական դաստիարակություն համարվում է բարոյական դրույթների իրացումը վարքային գործունեության, սովորույթների, դրանց գիտակցական պահպանման մեջ։

Բարոյական դաստիարակությունը սովորողների գիտակցության, զգացմունքների և կամքի վրա ներգործությունն է՝ նրանց մոտ անհրաժեշտ հոգևոր-բարոյական գծերի և որակների ձևավորման նպատակով։

Բարոյական դաստիարակության իրականացման ձևերը.

- ուսումնական գործընթացում մանկավարժի և սովորողների միջև համագործակցային մարդասիրական միջավայրի ստեղծում.
- բոլոր տեսակի ուսումնական պարապմունքները բարոյական-էթիկական բովանդա-կությամբ հագեցում, գործնական խաղերի, կլոր սեղանների, բանավեճերի, կոնֆերանսների անցկացում.
- սոցիալական և հումանիտար-սոցիալական առարկաների գիտելքիների համակարգի յուրացում.

Ակադեմիայի ցուցանմուշների օգտագործում.

- սովորողների հաղորդակցումը ստեղծագործական գործունեությանը.
- անձնակազմի դաստիարակության մեջ հասարակական կազմակերպությունների

հոգևոր-բարոյական ներուժի օգտագործում.

- ՀՀ ԱԻՆ համակարգի աշխատակցի պատվո կոդեքսի պահպանում.
- մանկավարժների և կառավարման ցանկացած մակարդակի ղեկավարների բարոյական վարքի անձնական օրինակի օգտագործումը:

6.2 Մասնագիտական դաստիարակության դաստիարակչական միջավայրի մասնագիտական բաղադրիչը

Մասնագիտական դաստիարակություն.

Ժամանակակից պայմաններում մասնագիտական դաստիարակությունը ներհյուսված է ապագա մասնագետի գիտելիքների համակարգի և համոզմունքների մեջ: Մասնագիտական դաստիարակությունը ներառում է բարոյական որակների ձևավորումը, որոնք բնութագրում են մասնագիտության նկատմամբ վերաբերմունքը, մասնագիտական գիտելիքների մակարդակը և դրանց իմաստավորման աստիճանը:

Մասնագիտական դաստիարակությունը կոմպետենտ, մասնագիտորեն զրագետ, պատասխանատու մասնագետի պատրաստումն է, նրա մոտ այնպիսի անձնային որակների ձևավորումը, որոնք անհրաժեշտ են մասնագիտական պարտականությունների արդյունավետ կատարման համար:

Մասնագիտական դաստիարակության իրականացման ձևերը.

- գիտամանկավարժական անձնակազմի մասնագիտական նախապատրաստության բարձրացում.
- մասնագիտական կրթության հումանիզացում.
- Ակադեմիայի նյութատեխնիկական և լաբորատոր-ուսումնական բազաների զարգացում.
- մասնագետի պատրաստման նոր ուղղությունների իրագործում, առաջավոր տեղեկատվական տեխնոլոգիաների, ուսուցման ձևերի և մեթոդների ներդրում.
- ուսման մեջ, գիտահետազոտական աշխատանքում բարձր ցուցանիշներ ունեցող սովորողների, ակտիվիստների լրացուցիչ նյութական շահադրդում.
- ՀՀ ուժային այլ կառույցների կրթական հաստատությունների հետ համագործակցություն:

6.3 Դաստիարակչական միջավայրի էկոլոգիական և իրավական բաղադրիչը

Էկոլոգիական բնագավառում Հայաստանի ազգային շահերը հանգում են երկրի էկոլոգիական իրավիճակի բարելավմանը: Շրջակա միջավայրի, մարդու կյանքի և առողջության վրա բացասական ազդեցությունները, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հետևանքով տնտեսական վնասները, տեխնածին և բնածին, տարերային աղետներն ու վթարները սպառնալիք են ՀՀ ազգային անվտանգությանը: Ապագա մասնագետների մասնագիտական գիտելիքների և էկոլոգիական մշակույթի բարձրացումը շրջակա միջավայրի որակի բարելավման և պահպանման ուղղությամբ պետք է արտակարգ իրավիճակների և ճգնաժամերի նվազեցմանը:

Էկոլոգիական դաստիարակությունը գիտական և գործնական գիտելիքների, կարողությունների և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում արժեքային կողմնորոշման ու էկոլոգիական անվտանգության համակարգի ձևավորումն է՝ արտակարգ իրավիճակների ժամանակ և ճգնաժամային պայմաններում:

Էկոլոգիական դաստիարակության իրականացման ձևերը.

- պարապմունքների անցկացման ավանդական ձևերի (դասախոսություններ, սեմինարներ, գործնական պարապմունքներ) մեթոդիկաների օգտագործում.
- էկոլոգ-գիտնականների, ՀՀ ԱԻՆ մասնագետների և բնապահպանական ծառայությունների աշխատակիցների հետ հանդիպումների կազմակերպում.
- կոնֆերանսների, մրցույթների անցկացում (այլ բուհերի ներգրավմամբ) էկոլոգիական անվտանգության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառում.
- մասնակցություն սովորողների և մասնագետների համար պարբերական էկոլոգիական հրատարակությունների, գիտական հոդվածների ժողովածուների և ռեֆերատների թողարկմանը.
- սովորողների մասնակցությամբ էկոլոգիական կրթության տեղեկատվական ապահովման կազմակերպում:

Իրավական դաստիարակություն.

Իրավական պետության և քաղաքացիական հասարակության կայացումը և զարգացումը ենթադրում է իրավական բազայի առկայություն, իրավական մշակույթի մակարդակի բարձրացում, իրավագիտակցություն և իրավունքի հանդեպ՝ որպես համընդհանուր արժեքի, համապատասխան վերաբերմունք: Իրավական դաստիարակությունն առավել մեծ նշանակություն ունի կառավարման մասնագիտության մասնագետի համար, որն ամենօրյա պրակտիկայում բախվում է օրենսդրական և այլ նորմատիվային-իրավական ակտերի իմացության և դրանք իր մասնագիտական գործունեության մեջ կիրառելու անհրաժեշտության հետ:

Իրավական դաստիարակության իրականացման ձևերը.

- սեմինարների, կոնֆերանսների, այլ միջոցառումների անցկացում օրենքի և իրավունքի պահպանման հարցերով.
- իրավական և տնտեսական գիտելիքների պրոպագանդայի կազմակերպում հայկական հասարակության կենսագործունեության տարբեր հարցերի վերաբերյալ՝ զանգվածային լրատվամիջոցների նյութերին ժամանակին արձագանքում, ուսումնական գործընթացում նորագույն օրենքների և ենթաօրենսդրական ակտերի օգտագործում (որոնք անմիջականորեն վերաբերում են ՀՀ ԱԻՆ գործունեությանը), դրանց նկատմամբ համարժեք վերաբերմունքի ձևավորում.
- իրավակիրառ պրակտիկայի հարցերով կլոր սեղանների, բանավեճերի, զրույցների անցկացում.
- իրավապահ և գործադիր մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումների կազմակերպում:

6.4 Դաստիարակության միջավայրի գեղագիտական և ֆիզիկական բաղադրիչը

Գեղագիտական դաստիարակություն: Գեղագիտական դաստիարակությունը զարգացնում է ստեղծագործելու, մարդկային գործունեության բոլոր տեսակներում (մասնագիտական, կրթական, կենցաղում, արարքներում և այլն) գեղագիտական արժեքներ ստեղծելու ընդունակությունը: Գեղագիտական դաստիարակությունը սերտորեն կապված է բարոյական դաստիարակության հետ, քանի որ գեղեցկությունը համարվում է յուրատեսակ կարգավորիչ մարդկային հարաբերություններում:

Գեղագիտական դաստիարակությունը դեպի գեղագիտական և գեղարվեստական արժեքները կողմնորոշվելու համակարգի ձևավորումն է:

Գեղագիտական դաստիարակության կառուցվածքային բաղկացուցիչներն են՝ գեղագիտական կրթությունը, գեղարվեստական դաստիարակությունը, գեղագիտական ինքնակրթությունը և ինքնադաստիարակությունը, ստեղծագործական պահանջմունքների և ընդունակությունների դաստիարակությունը:

Գեղագիտական դաստիարակության իրականացման ձևերը.

- զվարճանքի և ակումբային գործունեության զարգացման շրջանակներում մշակութային-գեղագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների տիրապետում.
- իրական ստեղծագործական պրոցեսի շրջանակներում երիտասարդական շարժումներին սատարում.
- Ակադեմիայի անձնակազմի գեղարվեստական, գրական ու ստեղծագործության այլ ձևերի ցուցահանդեսների կազմակերպում և այլն.
- հետաքրքիր, ստեղծագործող մարդկանց և կոլեկտիվների հետ հանդիպումների կազմակերպում, Ակադեմիայի կոլեկտիվի ակտիվ մասնակցություն մրցումներում և

խաղերում, որոնք կազմակերպվում են ՀՀ ԱԻՆ կողմից և այլն:

Ֆիզիկական դաստիարակություն.

Ժամանակակից պայմաններում նշանակալից կերպով բարձրացել է ֆիզիկական դաստիարակության սոցիալական դերն ընդհանուր-մշակութային արժեքների համակարգում: Ֆիզիկական պատրաստականությունը հանդիսանում է մասնագիտական դաստիարակության անբաժանելի մասը: Միևնույն ժամանակ, ոչ բարենպաստ էկոլոգիական միջավայրը բացասաբար է ազդում հիվանդությունների աճի վրա, նվազեցնում է դիմորդների և ուսանողների ֆիզիկական պատրաստականության մակարդակը: Նրանց առողջության ամրապնդումը և բարձր մասնագիտական մարմնակազմի պահպանումը ֆիզիկական դաստիարակության գլխավոր կողմնորոշիչներ են:

Ֆիզիկական դաստիարակությունն անձնակազմի ֆիզիկական պատրաստականության կատարելագործումն է, առողջության ամրապնդումը, բարոյակամային և հոգեբանական կայուն որակների ձևավորումը, որոնք անհրաժեշտ են մասնագիտական խնդիրների հաջող կատարման համար:

Ֆիզիկական դաստիարակության իրականացման ձևերը.

- Ակադեմիայում սպորտի հիմնական տեսակներից մրցումների անցկացում.
- ֆիզիկական պատրաստականության հիմնական նորմատիվների կատարում, ակադեմիական, միջբուհական, քաղաքային և համահայկական մրցումներում Ակադեմիայի հավաքականների ակտիվ մասնակցություն:

Հիմնական գրականության ցանկ		

1.Հովհաննիսյան Ն., Թարվերդիան Ա., Սարգսյան Լ.: 2.*Բաղդասարյան Ս., Արարատյան Մ.:*

1001/Բ06	ԱՆԳԼԵՐԵՆ - 2	4 կրեդիտ
4 ժամ	*10/50/0*	
2 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է խորացնել սովորողի լեզվական և քերականական գիտելիքները, հարստացնել բառապաշարը և կատարելագործել նրանց հաղորդակցվելու հմտությունները, զարգացնել գրավոր խոսքը:		
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ➢ կտիրապետի բանավոր և գրավոր խոսքին: ***Ունակ կլինի.*** ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* ➢ հաղորդակցվել գրավոր և բանավոր խոսքով: ✓ *(ընդհանրական կարողություններ)* ➢ զարգացնել գրավոր խոսքի հմտություններ:		
Համառոտ բովանդակություն Ձևաբանություն (խոսքի մասեր՝ գոյական, ածական, մակբայ, նախդիրներ, թվական, շաղկապ): Տնային առաջադրանք (ուղղագրական կանոններ, թելադրություն, փոխադրություն): Բառապաշար (բազմիմաստություն, նույնանուն և հականիշ միավորներ):		
Գնահատման մեթոդներն ու չափանիշները Ընթացիկ քննություններ. 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 2,1,1 միավոր: Միավորների քայլը 0,5 է: Եզրափակիչ քննություն. Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 3,3,4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:		
Հիմնական գրականության ցանկ 1. *Հովհաննիսյան Ն., Թարվերդիան Ա., Սարգսյան Լ.:* 2. *Բաղդասարյան Ս., Արարատյան Մ.:*		

1001/Բ06	**ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԼԵԶՈՒ -** ***2***	**4 ԿՐԵԴԻՏ**
4 ժամ	10/50/0	
2 կիսամյակ	Եզրափակիչ գնահատման դասընթաց	
Դասընթացի նպատակն է՝ ➢ուսանողների մոտ զարգացնել ուսուցման նախորդ փուլում ձեռք բերած գիտելիքները գերմաներենի ձևաբանության և քերականության բնագավառներում, ➢ընդլայնել թեմատիկ բառապաշարը, ակտիվացնել այդ բառապաշարը և քերականական գիտելիքները՝ համապատասխան երկխոսությունների և տեքստերի վերարտադրման նպատակով, ➢ամբողջացնել բակալավրիատի ընդհանուր կրթական մակարդակում ուսանողների գիտելիքները գերմաներեն լեզվից:		

Դասընթացի ավարտին սովորողը կունենա. *Գիտելիք և իմացություն* ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. ընդլայնել կոնկրետ թեմատիկ բառապաշարը, 2. պատկերացում կազմել երկխոսությունների կառուցվածքի և տեքստերի վերարտադրության ու փոխադրման սկզբունքների մասին: բ. գործնական մասնագիտական կարողություններ 3. ճիշտ կազմել գերմաներենին բնորոշ ձևաբանական և քերականական կաղապարները, 4. համապատասխան ձևով գործադրել ձեռք բերած թեմատիկ բառապաշարը, 5. կազմել երկխոսություններ, գրել փոխադրություններ: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան) 6. վերլուծել գերմաներենի կառուցվածքային կաղապարներն ու հարացույցային ձևերը, 7. գործնականում կիրառել թեմատիկ բառապաշարը, 8. մեկնաբանել գերմաներենում խոսքի ձևավորման յուրահատկությունները: *Ունակ կլինի* 1.պատկերացում կազմել գերմաներենի ձևաբանական և քերականական ընդարձակ կաղապարների մասին
Համառոտ բովանդակություն 1.իմանալ արտասանական նորմերը և հնչաբանական յուրահատկությունները, 2. պատկերացում կազմել ուսուցման տվյալ փուլում նախատեսված բառապաշարի մասին, 3. ունենալ անհրաժեշտ գիտելիքներ գերմաներենի ելակետային քերականական կառույցների մասին: 4. ճիշտ արտաբերել գերմաներենի առանձին հնչյունները և դրանց արտասանական տարբերակները
Գնահատման մեթոդներն ու չափանիշները Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով` անցած նյութի հիման վրա:
Հիմնական գրականության ցանկ *1.Kessler H., Levin V., Deutsch für Ausländer, Teil 2, Berlin, 1992.* *2. Griesbach H., Schulz D., Deutsche Sprachlehre für Ausländer, Ismaning, 2004.* *3. Gabrieljan J. u. A., Praktische deutsche Grammatik, Jerewan, 2017.* *4. Dreyer-Schmidt, Lehr-und Übungsbuch der deutschen Grammatik, Ismaning, 2002.*

1001/Բ06	**ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՈՒ -2**	**4 ԿՐԵԴԻՏ**
4 ժամ	10/50/0	
2 կիսամյակ	Եզրափակիչ գնահատման դասընթաց	
Դասընթացի նպատակն է՝ ➢ Զարգացնել մասնագիտական թեմաների շուրջ մենախոսական և երկխոսական կարողությունները ➢ Ձևավորել մասնագիտական տեքստերի գրավոր թարգմանության հմտություններ		

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

1. տարորոշելու մասնագիտական տեքստերի լեզվաոճական ցուցիչները,

2. տարբերակելու մասնագիտական տեքստերի համընդհանուր և տերմինային բառաշերտերը

3. բացատրելու մասնագիտական տեքստերի թարգմանության դժվարությունները

բ. գործնական մասնագիտական կարողություններ

4. մենախոսելու և երկխոսել մասնագիտական թեմաների շուրջ

5. թարգմանելու (գրավոր և բանավոր) մասնագիտական տեքստեր

6. բանավիճելու մասնագիտական թեմաների շուրջ

Ունակ կլինի

1.մասնագիտական գիտելիք և իմացություն

Համառոտ բովանդակություն

Թարգմանելու (գրավոր-բանավոր) մասնագիտական տեքստեր:Սահմանելու մասնագիտական տեքստերի թարգմանության դժվարությունները:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Երկու միջանկյալ և եզրափակիչ քննություն

Հիմնական գրականության ցանկ

1. *Djoulhakian M., Méliksétian R., Mouradian A., Manuel de francais, Erévan, 2013.*

2. Claire M., Vite et bien 2, niveau B1, Paris, CLE internationale, 2009.

3. Grégoire M., Thiévenaz O., Franco E., Grammaire progressive du français, Paris, CLE internationale, 2009.

4. Grégoire M., Thiévenaz O., Franco E., Grammaire progressive du français, niveau intermédiaire, CLE internationale, Paris 2009.1704.

1001/Բ021	**ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ**	**2 կրեդիտ**
2 ժամ	*20/10/0*	
1 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին ծանոթացնել բնապահպանության հիմնախնդիր-ներին, դրանց սկզբնավորման պատճառներին, հետևանքներին, խնդրի լուծման ուղիներին և նրանց մոտ ձևավորել շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակի պահպանության պատասխանատվության:

Մասնագիտական

շրջակա միջավայրի հիմնական բաղադրիչներին էկոլոգիական վիճակի գնահատման և բնապահպանական խնդիրների լուծման վերաբերյալ:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա՝

Գիտելիք և իմացություն

- բնական միջավայրի ու առանձին բաղադրիչների, դրանց հետ կապված էկոլոգիական խնդիրների և օրգանիզմների վիճակի, մարդու առողջության հիմնախնդրի, մարդու գործունեության և շրջակա միջավայրի փոխհարաբերությունների վերաբերյալ,
- միջավայրի էկոլոգիական վիճակի փոփոխությունները գնահատելու, էկոլոգիական

խնդիրները լուծելու, բնապահպանական միջոցառումներ իրականացնելու սկզբունքների, բնապահպանական միջոցառումներ կազմակեպելու և ղեկավարելու վերաբերյալ:

Ունակ լինի

(բուն մասնագիտական կարողություններ)

- շրջակա միջավայրի հիմնական բաղադրիչներին էկոլոգիական վիճակի գնահատման և բնապահպանական խնդիրների լուծման վերաբերյալ
- շրջակա միջավայրի հիմնական բաղադրիչներին առնչվող էկոլոգիական լարվածության գործոնների բացահատման վերաբերյալ:

Համառոտ բովանդակությունը

Բնապահպանության նպատակները, խնդիրները: Կենսոլորտը որպես համամոլորակային էկոհամկարգ: Բնական միջավայրի բաղադրիչները և էկոլոգիական ռիսկի գործոններ: Հողածածկը և դրան առնչվող բնապահպանական ռիսկերի կառավարումը: Ջրոլորտը և դրա պահպանությունը, Սևանա լճի էկոլոգիական հիմնախնդիրը: Բուսածածկն ու կենդանական աշխարհը և դրանց բնապահպանական ռիսկերի կառավարումը: Մթնոլորտային օդը և դրա էկոլոգիական ռիսկերի կառավարումը: Շրջակա միջավայրի ռադիոակտիվ աղտոտումը և աղտոտված հողատարածքի վերակուլտիվացումը: Շրջակա միջավայրի աղտոտումը և մարդու առողջության ռիսկերը: Բնական միջավայրի աղտոտումը և թափոնների էկոլոգիական ռիսկերը: Էկոլոգիական վտանգ, էկոլոգիական հանցագործություն, էկոլոգիական անվտանգություն:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Ընթացիկ հարցումներ

Նախատեսվում է կատարել 4 բանավոր հարցումներ՝ սեմինարների տեսքով, յուրաքանչյուրը 2,5 առավելագույն միավորի գնահատմամբ:

Եզրափակիչ հարցում

Եզրափակիչ հարցումը կլինի բանավոր, առավելագույն 10 միավոր գնահատականով:

Հիմնական գրականության ցանկը

1. *Թամոյան Ս.Ջ. Բնապահպանություն, դասախոսություններ/ ՃԿՊԱ. - 2012:*
2. *Գալստյան Մ.Հ., Մկրտչյան Ա.Լ., Թամոյան Ս.Ջ. Հայաստանի կենսաբազմազանությունը և բնության հատուկ պահպանվող տարածքները, Եր. - 2009:*

0401/B34	ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	2 կրեդիտ
2 ժամ	*16/0/14*	
3 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է ընդհանրացնել, համակարգել և ճշգրտել սովորողի ձեռք բերած գիտելիքները և հաղորդել նոր տեղեկություններ ազգային տնտեսության վերաբերյալ, սովորողին ներկայացնել առանձին երկրի տնտեսական համակարգի գործունեությունը պայմանավորող տնտեսական երևույթները և գործընթացները, դրանց հետ կապված հիմնահարցերը:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կունենա ազգային տնտեսության ձևավորման և զարգացման վրա ազդող գործոնները, ազգային տնտեսությունների դասակարգման վերաբերյալ գիտելիքներ:
- (բուն մասնագիտական կարողություններ)
- ընդհանրացնել և համակարգել ձեռք բերած ազգային տնտեսության վերաբերյալ գի-տելիքները:
- համադրել և մեկնաբանել դասընթացի ժամանակ ձեռք բերած գիտելիքները:
- (ընդհանրական կարողություններ)

➢ հասկանալ ազգային տնտեսության համաշխարհային տնտեսական համակարգին ինտեգրման հիմնախնդիրները և դրանց փոխազդեցությունները տարբեր ոլորտներում:
Համառոտ բովանդակություն «Ազգային տնտեսություն» դասընթացն ուսումնասիրում է առանձին երկրի տնտեսական համակարգի գործունեությունը պայմանավորող տնտեսական երևույթները և գործընթացները: Դրա շրջանակներում քննարկվում են աստիճանական զարգացման խնդիրները, ինչպես նաև երկրի տնտեսավարման համակարգի զարգացման հեռանկարները: Ազգային տնտեսության դիտարկվում է որպես բարձրագույն համակարգի՝ համաշխարհային տնտեսական համակարգի բաղադրամաս:
Գնահատման մեթոդներն ու չափանիշները Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի 4 հարցի հիման վրա:
Հիմնական գրականության ցանկ *1.*Ազգային տնտեսություն: Ուսումնական ձեռնարկ/ Վ. Հովսեփյան, Մ. Եղիազարյան. ԵՊՀ, Եր. - 2014. 2.*Алисов Н.В., Хорев Б.С. Экономическая и социальная география мира, учебник для вузов. М. - 2003.* *2.Экономическая и социальная география, Основы науки, учебник для вузов. М. - 2004.* *3.Скопин А.Ю. Введение в экономическую и социальную географию, учебник для вузов. М. - 2001.* *4. Родионова И.А. Политическая карта мира, М. - 2001.*

1001/B20	**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**	**2 կրեդիտ**
2 ժամ	*16/0/14*	
I կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	
Դասընթացի նպատակն է ընդհանրացնել, համակարգել և ճշգրտել սովորողի ձեռք բերած գիտելիքները և հաղորդել նոր տեղեկություններ Հայաստանի Հանրապետության աշխարհագրության վերաբերյալ, սովորողին ներկայացնել Հայաստանի տարածքը, սահմանները, մակերևույթի առանձնահատկությունները, բնակլիմայական պայմանները և բնական ռեսուրսները,ինչպես նաև բնակչության աշխարհագրությունը, տնտեսության առանձնահատկությունները, դրանց հետ կապված հիմնահարցերը:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ➢ կունենա Հայաստանի Հանրապետության բնության առանձնահատկությունների, բնակչության և բնական ու մեխանիկական շարժերի, հանրապետության տնտեսության վերաբերյալ գիտելիքներ: ➢ (բուն մասնագիտական կարողություններ) ➢ ընդհանրացնել և համակարգել ձեռք բերած Հայաստանի Հանրապետության աշխարհագրության վերաբերյալ գիտելիքները: ➢ համադրել և մեկնաբանել դասընթացի ժամանակ ձեռք բերած գիտելիքները: ➢ (ընդհանրական կարողություններ) ➢ հասկանալ Հայաստանի Հանրապետությունում բնօգտագործման և բնապահպանության, բնակչության տարաբնակեցման և տնտեսության կազմակերպման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները:		
Համառոտ բովանդակություն «Հայաստանի ֆիզիկաաշխարհագրական ընդհանուր բնութագիրը» ուսումնասիրում է		

Հայկական լեռնաշխարհի ու Հայաստանի Հանրապետության բնության և շրջակա միջավայրի, հանրապետության բնակչության ու տնտեսական կապերի, դրանց զարգացման օրինաչափությունների ու օրենքների մասին ուսումնասիրություններն են: Հայաստանի աշխարհագրության իմացությունը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր մասնագետին ճիշտ գնահատել հայրենի երկրի զարգացման հեռանկարներն ու իրական հնարավորությունները, ճկունորեն կողմնորոշվել համաշխարհային ու տարածաշրջանային նշանակության իրադարձություններում, հասկանալ ներկայացվող մարտահրավերները և պատկերացում ունենալ դրանց դիմակայելու ուղիների մասին:
Գնահատման մեթոդները և չափանիշները ***Ստուգարքի անցկացման ձևը.*** Կիսամյակի ընթացքում նախատեսված է 2 ստուգում՝ ընթացիկ և ամփոփիչ: Յուրաքանչյուրը գնահատվում է ստուգված կամ չստուգված: Ցանկացած մեկից դրական գնահատական ստանալու դեպքում ուսանողը համարվում է ստուգարքը հանձնած: Ընթացիկ ստուգումնն իրականացվում է անհատական (ինքնուրույն) աշխատանքների հիման վրա: Ամփոփիչ ստուգման պարագայում ուսանողների համար դասընթացի ավարտին կազմակերպվում է բանավոր կամ գրավոր հարցում:
Հիմնական գրականության ցանկ *1. Անանյան Լ.Զ. Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր: Եր. – 2003:* *2. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ.հունվար-մայիսին, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Եր. – 2018:* *3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Եր.- 2018:* *4. Լ.Վալեսյան, Մ.Մանասյան, Ա.Հովսեփյան, «Աշխարհագրություն. Հայաստան», 2009:* 5. *Մ.Մանասյան, Ռ.Մարգարյան, Աշխարհի բնակչությունը, 2003:*

1001/Բ23	ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ	2 կրեդիտ
2ժամ	*16/0 14*	
2 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է ուսանողներին զինել ՀՀ ժողովրդագրական իրավիճակի և տարաբնակեցման արդի հիմնախնդիրներին, հատկապես՝ բնակչության թվի շարժընթացի, բնական վերարտադրության և միգրացիոն տեղաշարժերի, բնակչության կառուցվածքի, ուրբանիզացման և տեղաբաշխման, աշխատանքային ռեսուրսների, քաղաքային և գյուղական տարաբնակեցման, տարաբնակեցման համկարգաստեղծ գործընթացների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներով, դրանց տարածաշրջանային տարբերությունների և արտակարգ իրավիճակների հետ առնչությունների վերլուծության և գնահատման մեթոդներով ու մոտեցումներով:		
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** - Ժողովրդագրական գործընթացների և բնակչության տարաբնակեցման բնույթը, տարածաշրջանային առանձնահատկությունները, զարգացման արդի միտումներն ու խնդիրները, դրանց լուծման ուղիներն ու կարգավորման հիմնահարցերը ՀՀ-ում, ինչպես նաև դրանց դերը ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման և հասարակության տարածքային կազմակերպման գործում: ***Ունակ կլինի*** ➢բնակչության և բնակավայրերի վերաբերյալ ձեռք բերված ամբողջական գիտելիքները գործնականում կիրառել ամենատարբեր բնական աղետների, ճգնաժամերի և արտակարգ		

իրավիճակների գնահատման, կողմնորոշման, լուծումներ գտնելու և որոշումներ ընդունելու ասպարեզներում
- կտիրապետի անհրաժեշտ տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերի, հետազոտության մեթոդների ճիշտ ընտրության և կիրառման հմտությունների:

Համառոտ բովանդակություն

Բնակչությունը և բնակավայրերը որպես հետազոտության համալիրային օբյեկտներ, դրանց էությունն ու դերը հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման և տարածքային կազմակերպման գործում:

ՀՀ բնակչության թիվը, տարածաժամանակային փոփոխությունները, բնակչության բնական վերարտադրությունը, նրա հիմնական ցուցանիշների՝ ծնելիության, մահացության և բնական աճի փոփոխություններն ըստ ՀՀ մարզերի, դրանց պատճառա-հետևանքային կապերը:

ՀՀ բնակչության կազմը և կառուցվածքը, բնակչության սեռային կազմը և տարիքային կառուցվածքը, դրանց տարածքային տարբերությունները, բնակչության ազգային կազմը, բնակչության սոցիալական կառուցվածքը և աշխատանքային ռեսուրսները: Բնակչության զբաղվածության բնույթն ու կառուցվածքը:

ՀՀ բնակչության միգրացիոն տեղաշարժերը, դրանց պատճառա-հետևանքային կապերը, միգրացիայի տեսակները, մասշտաբները. և ուղղությունները, տարածաշրջանային առանձնահատկությունները, միգրացիայի կարգավորման ուղիները:

ՀՀ ժողովրդագրական հիմնախնդիրները, դրանց բնույթն ու տարածաշրջանային դրսևորումները, լուծման ուղիները, ժողովրդագրական քաղաքականություն: Ժողովրդագրական հիմնախնդիրների բնույթը, դրսևորման ձևերն ու լուծման ուղիները արտակարգ իրավիճակներում:

Բնակչության տեղաբաշխումը, դրա վրա ազդող գործոնները, ՀՀ բնակչության խտության տարածքային տարբերությունները: Բնակչության տեղաբաշխումն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի: «Տարաբնակեցում» հասկացության էությունը և հիմնական ձևերը, քաղաքային և գյուղական տարաբնակեցում: ՀՀ ուրբանիզացման առանձնահատկությունները, քաղաքային ցանցի ձևավորումը, քաղաքների խմբավորումը և դասակարգումը, Երևանի առանձնահատուկ դերը և զարգացման հիմնախնդիրները, փոքր միագործառութային քաղաքների զարգացման հիմնախնդիրները:Տարաբնակեցման համակարգեր: Տարաբնակեցման քաղաքականություն: Տարաբնակեցման, տարբեր տիպի բնակավայրերի զարգացման խնդիրները, դրանց դրսևորման ձևերը և լուծման ուղիները արտակարգ իրավիճակներում:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Քննության անցկացման ձևը՝ 2 ընթացիկ և 1 եզրափակիչ քննություն:

Գնահատումն իրականացվում է Ակադեմիայում ընդունված կարգին համապատասխան, 20 բալանոց համակարգով: Դասընթացի շրջանակում ուսանողներ կատարում են ինքնուրույն անհատական աշխատանք՝ ռեֆերատի ձևով, որի կատարման ընթացքը ստուգվում է միջանկյալ քննությունների ընթացքում, իսկ եզրափակիչ քննության ժամանակ այն քննական տոմսին հանդես է գալիս որպես 3-րդ հարց՝ ռեֆերատի ներկայացում

Հիմնական գրականության ցանկ

1. *Մանասյան Մ.Գ. Բնակչության աշխարհագրություն. Եր., 2011.- 296 էջ:*
2. *Մանասյան Մ.Գ, ՀՀ տարաբնակեցման համակարգը Եր., 2005.- 400 էջ:*
3. *Ֆահրադյան Մ. Բնակչության կառուցվածքի և վերարտադրության տարածաշրջանային հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր.- 2010:*
4. *Թովմասյան Վ, Ժողովրդագրական մարտահրավերները և բնակչության հեռանկարները: Եր., 2013.-216 էջ:*
5. *Խոջաբեկյան Վ. Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաբաշխումը: 19-20-րդ դարերում, 21-րդ դարի շեմին: Եր.-2001:*

Լրացուցիչ գրականություն

1. *Մանասյան Մ. Սայադյան Հ. Հայաստանի աշխարհագրություն, Եր.-2016:*
2. *Մանասյան Մ. Հայաստանի Հանրա¬պե¬տութ¬յան տարաբնակեցման կարգա¬վոր¬ման հիմնահարցերը: Տարեգիրք, Տնտեսագիտության ֆակուլտետ, ԵՊՀ, 2011:*
3. *Մանասյան Մ. ՀՀ բարձրլեռնային գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսա-կան զարգացման հիմնախնդիրները: Ագրոգիտություն, համ 1-2, 2012:*
4. *Մանասյան Մ. ՀՀ բնակչության միգրացիան և տարաբնակեցման հիմնախնդիրները Տարեգիրք, ԵՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետ, 2012:*
5. *Մանասյան Մ., Մանասյան Հ. ՀՀ լեռնային տարածաշրջանների կայուն զարգացման հիմնահարցերը (Սյունիքի մարզի օրինակով): Տարեգիրք, ԵՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, 2013:*
6. *Մանասյան Հ., Մանասյան Մ. ՀՀ բնակչության միգրացիան և ժողովրդագրական իրավիճակի տարածաշրջանային առանձնահատկություններ: Ֆինանսներ և էկոնոմիկա, համ.4, 2017. էջ 118-123:*

Ինտերնետ ռեսուրսներ

https://greenologia.ru/eko-problemy/globalnye.html

https://legkopolezno.ru/ekologiya/globalnye-problemy/ehkologicheskie/

http://ecology-of.ru/eko-razdel/problemy-prirody-obshchie-problemy-cheloveka-i-zemli/#i

https://moluch.ru/archive/58/8206/

https://ecoportal.info/category/ecoproblem/

1001/Բ26	ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ	2 կրեդիտ
2 ժամ	*16/0/14*	
3-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է

նպաստել սովորողների իրավական գիտելիքների աճին, նրանց իրավագիտակցության զարգացմանը, աշխատանքային գործունեության ընթացքում անհրաժեշտ իրավական պատկերացումների և արժեքային համակարգի ձևավորմանը:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- ✓ Իրավունքի, ՀՀ իրավական համակարգի, նորմատիվ իրավական ակտերի մասին:
- ✓ Իրավունքի աղբյուրների և հիմնական դրույթների մասին;
- ✓ Աշխատանքի ոլորտում սոցիալական գործնկերության մասին;

Ունակ լլինի

- ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*
- ➢ Ներկայացնել օրենքի հատկանիշները, բնութագրել ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը
- ➢ Ներկայացնել իրավահարաբերությունների մասնակիցներ
- ✓ *(ընդհանրական կարողություններ)*
- ➢ Իրավունքի նորմերը ըստ կարգավորման առարկայի և ըստ իրավաբանական ուժի տարբերակելու հմտություններին:
- ➢ բենսդրության կառուցվածքում արագ կողմնորոշվելու, տվյալ խնդրի Օկարգավորումը նախատեսող նորմը գտնելու հմտություններին:
- ➢ Առաջադրված իրավական նորմը մեկնաբանելու ունակություններին;

Համառոտ բովանդակությունը

Ժամանակակից հիմնական իրավական համակարգերը: Իրավունքի ճյուղ և իրավական ինստիտուտ; Իրավունքի ճյուղերի ընդհանուր բնութագիրը: Իրավունքի համակարգի բաղկացուցիչ տարերրը (հանրային և մասնավոր իրավունք, նյութական և վարույթային իրավունք, միջազգային և ազգային իրավունք): Միջազգային իրավունքը որպես հատուկ իրավական համակարգ:

Պետության հիմնական հատկանիշները: Պետության ձևերը /վարչատարած-քային կառուցվածք, կառավարման ձև, քաղաքական ռեժիմ/: Պետության ներքին և արտաքին գործառույթները: Պետական իշխանության ճյուղերը/օրենդիր, գործադիր, դատական/: Իրավունքի հասկացությունը և հատկանիշները: Իրավունքի աղբյուրները: Իրավական նորմի հասկացությունը և կառուցվացքը:

Իրավական նորմի տարատեսակները: Իրավախախտումը և իրավական պատասխանատվությունը: Օրինականության և կարգուկանոնի տեղը ժամանա-կակից հասարակությունում:

ՀՀ Սահմանադրության հասկացությունը և կառուցվածքը; Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները Հայաստանի Հանրապետությունում, նրանց պաշտպանության երաշխիքներ: Պետական իշխանության մարմինների համակարգը և տեղական ինքնակառավարումը Հայաստանի Հանրապետությունում: Տարածքային կազմավորումը Հայաստանի Հանրապետությունում:

Քաղաքացիական իրավահարաբերություն հասկացությունը: Ֆիզիկական և իրավաբանական անձ: Սեփականության իրավունք: Պարտավորություն ներըքաղաքացիական իրավունքի մեջ և պատասխանատվությունը դրանց խախտման

դեպքում:

Քաղաքացիական-իրավական պայմանագրեր: Ժառանգական իրավունք: Մտավոր սեփականության հիմնահարցեր; Ամուսնա-ընտանեկան հարաբերություններ: Ամուսինների, ծնողների և երեխաների փոխադարձ իրավունքներն ու պարտավորությունները: Պատասխանատվությունը ըստ ընտանեկան իրավունքի: Քաղաքացիական կացության ակտեր:

Աշխատանքային իրավահարաբերությունների սուբյեկտները; Աշխատանքային պայմանագիր (կոնտրակտ): Աշխատանքային կարգապահությունը և պատասխանատվությունը այն խախտելու դեպքում: Աշխատաժամանակ, հանգստի ժամանակ, աշխատավարձ: Աշխատանքային վեճեր:

Հանցագործության հասկացությունը և տեսակները; Հանցակազմ; Արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներ: Պատժի հասկացությունը և տեսակները; Պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքներ:

Վարչական իրավախախտման հասկացությունը: Վարչական տույժերի տեսակները և դրանց նշանակման ընդհանուր կարգը: Վարչական տույժեր նշանակելու իրավասություն ունեցող մարմինները: Վարչական իրավախախտումներ քաղաքաշինության բնագավառում: Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը:

Էկոլոգիական իրավունքի հասկացությունը, սուբյեկտները և օբյեկտները: Բնօգտագործման իրավունք; Շրջակա միջավայրի պետական կառավարումը:

«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Քաղաքացիական պաշտպանության մասին», «Հրդեհային անվտանգության մասին», «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքների հիմնական դրույթները:

Պետական և ծառայողական գաղտնիքի հասկացությունը: Գաղտնիության աստիճանները: Պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելու ենթակա տեղեկությունները: Պետական և ծառայողական գաղտնիքի մասին օրենսդրության խախտման համար պատասխանատվությունը (քրեական, վարչական, կարգապահական):

Գնահատման մեթոդները և չափանիշները

Ստուգարքի անցկացման ձևը.

Կիսամյակի ընթացքում նախատեսված է 2 ստուգում՝ ընթացիկ և ամփոփիչ: Յուրաքանչյուրը գնահատվում է ստուգված կամ չստուգված: Ցանկացած մեկից դրական գնահատական ստանալու դեպքում ուսանողը համարվում է ստուգարքը հանձնած:

Ընթացիկ ստուգումնն իրականացվում է անհատական (ինքնուրույն) աշխատանքների հիման վրա:

Ամփոփիչ ստուգման պարագայում ուսանողների համար դասընթացի ավարտին կազմակերպվում է բանավոր կամ գրավոր հարցում:

Հիմնական գրականության ցանկը

1. *ՀՀ Սահմանադրություն, Եր.- 1995:*

2. ՀՀ օրենսգիրքեր Եր.:

0401/Բ31	ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ	4 կրեդիտ
4 ժամ	*40/0/20*	
4 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է հիմնարար գիտությունների տվյալների փիլիսոփայական մեկնաբանությունների միջոցով աջակցել սովորողի և այդ համատեքստում ազգային մրցունակ համակարգի մասին մասնագիտական պատկերացումների ձևավորմանը:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կիմանա աշխարհի և նրանում մարդու տեղի ու դերի մասին փիլիսոփայական հայեցակարգերի ընդհանուր և տարբերակիչ առանձնահատկությունները:

Ունակ կլինի

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- հասկանալ ճշմարտության և մոլորության, գիտելիքի և հավատի, ռացիոնալի և իռացիոնալի սահմանազատման փիլիսոփայական մեթոդաբանության դերն ու նշանակությունը:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- վերլուծել և ամբողջական պատկերացում կազմել արդի քաղաքակրթական, քաղաքական մշակութային և մարդաբանական պատկերացումների հիմնախնդիրների մասին:

Համառոտ բովանդակություն

Փիլիսոփայությունը որպես մարդու և աշխարհի միջև մշակութային միջնորդ: Փիլիսոփայական մշակույթի առանձնահատկությունները: Պատմափիլիսոփայական ակնարկ: Կեցության փիլիսոփայական ըմբռնումը: Մարդկային կեցության առանձնահատկությունները: Հոգեկանի ծագման վարկածները: Իմացության էությունը և կառուցվածքը: Ճշմարտություն, մոլորություն, հավատ: Գիտական ճանաչողության մեթոդները: Գիտություն և բարոյականություն: Մարդու և հասարակության ծագման վարկածները: Հասարակությունը որպես ինքնապարտադրող համակարգ: Պատմության փիլիսոփայական ըմբռնումը: Մշակույթ և քաղաքակրթություն: Հասարակական կյանքի ոլորտները: Սոցիալական առաջադիմությունը և մարդկության ապագան:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Մեկ բանավոր ստուգարք՝ կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների հիման վրա:

Հիմնական գրականության ցանկ

1. *Алексеев П.В., Панин А.В. Философия. М. - 2003.*
2. *Философия. под. Ред. В. Калашникова. М. - 1999.*
3. *Философия. под. Ред. В. Кахановского. М.- 2000.*
4. *Философия. под. Ред. В. Н. Лавриненко. М. - 2001.*
5. *Հարությունյան Է.Ա. Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Եր. - 2004:*
6. *Հակոբյան Ս.Մ. Փիլիսոփայության տեսություն և պատմություն, Եր. - 2007:*
7. *Շաքարյան Հր. Գ. Փիլիսոփայություն, Եր. - 2005:*
8. *Սարգսյան Ա., Փիլիսոփայություն, Եր. - 2011:*

0401/B04	ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ	2 կրեդիտ
2 ժամ	*16/0/14*	
2 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	

Դասընթացի նպատակն է ներկայացնել բարոյականության լայն և նեղ ըմբռնումները: կառուցվածքային բաղադրիչները, հիմնական սոցիալական գործառույթները, անձի բարոյական գործունեության տեսակները, բարոյական լուսավորության, բարոյական վարքի խթանման, ինքնադաստիարակության կազմակերպման առանցքային հիմնահարցերը և էթիկայի տեղը փիլիսոփայական ու հումանիտար գիտությունների համակարգում:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա

Գիտելիք և իմացություն

- կծանոթանա բարոյականության, անձի բարոյական գործունեության տեսակների, աշխատանքային կոլեկտիվի բարոյական բնութագրի, էթիկայի՝ իբրև գիտության առանձնահատկություններին ու օրինաչափություններին:

Ունակ կլինի

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- ավելի իրատեսորեն գնահատել բարոյական ինքնադաստիարակության կազմակերպումը և աշխատանքային կոլեկտիվի բարոյական բնութագիրը:
- ճիշտ գնահատել բարոյականությունը որպես արժեքային-գործնական հարաբերություն:
- ընկալել անձի բարոյական գործունեության տեսակները:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- ստեղծագործաբար կիրառել ու զարգացնել ունեցած գիտելիքները,
- վերլուծել փաստերը և հետևություններ անել,
- պատրաստել զեկուցումներ և վարել բանավեճեր:

Համառոտ բովանդակություն

Հասկացողություն բարոյականության մասին: Բարոյականության լայն և նեղ ըմբռնումները: Բարոյականությունը որպես արժեքային-գործնական հարաբերություն: Բարոյականության կառուցվածքային բաղադրիչները: Բարոյականության հիմնական սոցիալական գործառույթները: Բարոյականություն և կրոն: Բարոյականություն և արվեստ: Բարոյականություն և իրավունք: Բարոյականություն և գիտություն: Բարոյական գործունեության կառուցվածքը. նպատակ-դրդապատճառներ-եղանակներ-միջոցներ-արդյունքներ: Անձի բարոյական գործունեության տեսակները, բարոյական լուսավորություն, բարոյական փորձի կազմակերպում, բարոյական վարքի խթանում, ինքնադաստիարակության կազմակերպում: Աշխատանքային կոլեկտիվի բարոյական բնութագիրը: Էթիկան՝ որպես գիտություն բարոյականության մասին: Էթիկայի տեղը փիլիսոփայական և հումանիտար գիտությունների համակարգում: Էթիկայի՝ իբրև գիտության առանձնահատկությունները:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի 3 հարցի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկ

1. *Алексеев П.В., ПанинА.В. Философия. М.- 2003.*

1003/Բ26	ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ- 1	0

2 ժամ	*4/0/26*
1-ին կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատմամբ դասընթաց

Դասընթացի նպատակն է՝ իրականացնել ուսանողների ֆիզիկական զարգացման համաչափ հնարավորությունը, յուրաքանչյուրի յուրահատուկ բազմակողմանի ֆիզիկական ընդունակությունների կատարելագործումը և դրանց հետ կապված հոգեկան և բարոյական որակների դաստիարակումը, որոնք բնութագրում են անհատի հասարակական ակտիվություն, այդ հիմքի վրա հասարակության յուրաքանչյուր անդամի համար ապահովել աշխատանքային և այլ հասարակության ձևերի բեղմնավոր գործունեություն:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

- Գիտենա՝ անձի զարգացման և նրա մասնագիտաան գործունեության պատրաստման հարցում ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը:
- Կարողանա՝ հանձնել նորմատիվներ՝ Կարճ տարածության վազքից, երկար տարածության վազքից, հեռացատկից, ձգում պտտաձողի վրա և հավասարակշռության վարժություններ:
- Տիրապետի՝ այնպիսի անհրաժեշտ ֆիզիկական որակների,որոնք են՝ ուժ,արագաշարժություն,դիմացկունություն,ճկունություն և հավասարակշռություն:

Համառոտ բովանդակությունը

1. Ընդհանուր զարգացնող վարժությունների համակարգ:
2.Արագաշարժությանը նպաստող վարժություններ:
3.Ճկունությանն ու հավասարակշռությանը նպաստող վարժություններ:
4.Ուժային ուղղվածության վարժություններ:
5.Դիմացկունության վարժություններ:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Ստուգարքի անցկացման ձևը.

Կիսամյակի ընթացքում նախատեսված է 2 ստուգում՝ նախնական և ամփոփիչ:
Նախնականի ժամանակ ստուգվում է ուսանողի ընդհանուր ֆիզիկական պատրաստության մակարդակը:
Ամփոփիչի ժամանակ հանձնում են նորմատիվներ 5 վարժաձևից:

Հիմնական գրականության ցանկը

1.Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. изд-во ЕГУ, Ер.- 2004.
2.*Хавронина С.А., Широченская А.И. Русский язык в упражнениях. изд-во «Русский язык», М. - 2005.*

1003/Բ27	**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ- 2**	**0**
2 ժամ	*4/0/26*	
2-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	

Դասընթացի նպատակն է՝ իրականացնել ուսանողների ֆիզիկական զարգացման համաչափ հնարավորությունը, յուրաքանչյուրի յուրահատուկ բազմակողմանի ֆիզիկական ընդունակությունների կատարելագործումը և դրանց հետ կապված հոգեկան և բարոյական որակների դաստիարակումը, որոնք բնութագրում են անհատի հասարակական ակտիվություն,այդ հիմքի վրա հասարակության յուրաքանչյուր անդամի համար ապահովել աշխատանքային և այլ հասարակության ձևերի բեղմնավոր գործունեություն:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

- Գիտենա՝ անձի զարգացման և նրա մասնագիտաան գործունեության պատրաստման հարցում ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը:
- Կարողանա՝ հանձնել նորմատիվներ՝ Կարճ տարածության վազքից, երկար տարածության վազքից, հեռացատկից, ձգում պտտաձողի վրա և հավասարակշռության

վարժություններ: ➢ Տիրապետի՝ այնպիսի անհրաժեշտ ֆիզիկական որակների, որոնք են՝ ուժ, արագաշարժություն, դիմացկունություն, ճկունություն և հավասարակշռություն:
Համառոտ բովանդակությունը 1. Ընդհանուր զարգացնող վարժությունների համակարգ: 2.Արագաշարժությանը նպաստող վարժություններ: 3.Ճկունությանն ու հավասարակշռությանը նպաստող վարժություններ: 4.Ուժային ուղղվածության վարժություններ: 5.Դիմացկունության վարժություններ:
Գնահատման մեթոդները և չափանիշները **Ստուգարքի անցկացման ձևը.** Կիսամյակի ընթացքում նախատեսված է 2 ստուգում՝ նախնական և ամփոփիչ: Նախնականի ժամանակ ստուգվում է ուսանողի ընդհանուր ֆիզիկական պատրաստության մակարդակը: Ամփոփիչի ժամանակ հանձնում են նորմատիվներ 5 վարժաձևից:
Հիմնական գրականության ցանկը *1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. изд-во ЕГУ, Ер.- 2004.* *2. Хавронина С.А., Широченская А.И. Русский язык в упражнениях. изд-во «Русский язык», М.-2005.*

1003/Բ28	**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ -3**	**0**
2 ժամ	*4/0/26*	
3-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է՝ իրականացնել ուսանողների ֆիզիկական զարգացման համաչափ հնարավորությունը, յուրաքանչյուրի յուրահատուկ բազմակողմանի ֆիզիկական ընդունակությունների կատարելագործումը և դրանց հետ կապված հոգեկան և բարոյական որակների դաստիարակումը, որոնք բնութագրում են անհատի հասարակական ակտիվություն, այդ հիմքի վրա հասարակության յուրաքանչյուր անդամի համար ապահովել աշխատանքային և այլ հասարակության ձևերի բեղմնավոր գործունեություն:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. ➢ Գիտենա՝ անձի զարգացման և նրա մասնագիտաան գործունեության պատրաստման հարցում ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը: ➢ Կարողանա՝ հանձնել նորմատիվներ՝ Կարճ տարածության վազքից, երկար տարածության վազքից, հեռացատկից, ձգում պտտաձողի վրա և հավասարակշռության վարժություններ: ➢ Տիրապետի՝ այնպիսի անհրաժեշտ ֆիզիկական որակների,որոնք են՝ ուժ,արագաշարժություն,դիմացկունություն, ճկունություն և հավասարակշռություն:		
Համառոտ բովանդակությունը 1. Ընդհանուր զարգացնող վարժությունների համակարգ: 2.Արագաշարժությանը նպաստող վարժություններ: 3.Ճկունությանն ու հավասարակշռությանը նպաստող վարժություններ: 4.Ուժային ուղղվածության վարժություններ: 5.Դիմացկունության վարժություններ:		

Գնահատման մեթոդները և չափանիշները ***Ստուգարքի անցկացման ձևը.*** Կիսամյակի ընթացքում նախատեսված է 2 ստուգում՝ նախնական և ամփոփիչ: Նախնականի ժամանակ ստուգվում է ուսանողի ընդհանուր ֆիզիկական պատրաստության մակարդակը: Ամփոփիչի ժամանակ հանձնում են նորմատիվներ 5 վարժաձևից:
Հիմնական գրականության ցանկը *1. Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. изд-во ЕГУ, Ер.- 2004.* 2. *Хавронина С.А., Широченская А.И. Русский язык в упражнениях. изд-во «Русский язык», М.- 2005.*

1003/Բ29	**ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ- 4**	**0**
2 ժամ	*4/0/26*	
4-րդ կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է՝ իրականացնել ուսանողների ֆիզիկական զարգացման համաչափ հնարավորությունը, յուրաքանչյուրի յուրահատուկ բազմակողմանի ֆիզիկական ընդունակությունների կատարելագործումը և դրանց հետ կապված հոգեկան և բարոյական որակների դաստիարակումը, որոնք բնութագրում են անհատի հասարակական ակտիվություն, այդ հիմքի վրա հասարակության յուրաքանչյուր անդամի համար ապահովել աշխատանքային և այլ հասարակության ձևերի բեղմնավոր գործունեություն:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. ➢ Գիտենա՝ անձի զարգացման և նրա մասնագիտական գործունեության պատրաստման հարցում ֆիզիկական դաստիարակության դերն ու նշանակությունը: ➢ Կարողանա՝ հանձնել նորմատիվներ՝ Կարճ տարածության վազքից, երկար տարածության վազքից, հեռացատկից, ձգում պտտաձողի վրա և հավասարակշռության վարժություններ: ➢ Տիրապետի՝ այնպիսի անհրաժեշտ ֆիզիկական որակների, որոնք են՝ ուժ, արագաշարժություն,դիմացկունություն, ճկունություն և հավասարակշռություն:		
Համառոտ բովանդակությունը 1. Ընդհանուր զարգացնող վարժությունների համակարգ: 2.Արագաշարժությանը նպաստող վարժություններ: 3.Ճկունությանն ու հավասարակշռությանը նպաստող վարժություններ: 4.Ուժային ուղղվածության վարժություններ: 5.Դիմացկունության վարժություններ:		
Գնահատման մեթոդները և չափանիշները **Ստուգարքի անցկացման ձևը.** Կիսամյակի ընթացքում նախատեսված է 2 ստուգում՝ նախնական և ամփոփիչ: Նախնականի ժամանակ ստուգվում է ուսանողի ընդհանուր ֆիզիկական պատրաստության մակարդակը: Ամփոփիչի ժամանակ հանձնում են նորմատիվներ 5 վարժաձևից:		
Հիմնական գրականության ցանկը *1.Русский язык. Под общ. ред. Л.М.Мкртчяна. изд-во ЕГУ, Ер. - 2004.* 2.*Хавронина С.А., Широченская А.И. Русский язык в упражнениях. изд-во «Русский язык», М. - 2005.*		

1003/Բ22	**ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ**	**0 ԿՐԵԴԻՏ**

2 ժամ	*6/0/24*
6 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Դասընթացի նպատակն է՝

Ուսանողներին ուսուցանել շարային պատրաստության հիմքերը:

Դասընթացի խնդիրները

Պատրաստել շարային կանոնագրքի դրույթները ճիշտ և հստակորեն իմացող անձ, որն ունենա օրինակելի արտաքին տեսք, բարձր շարային ձգվածություն, շարային վարժաձևերի կայուն ունակություններ, կարողանա վստահորեն ղեկավարել ստորաբաժանումների շարքերը:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- Շարային կանոնադրության ընդհանուր դրույթները;
- Շարային պատրաստության ստուգման և գնահատման կարգը;
- ՌԻղեցույց փաստաթղթերի պահանջները ուսանողի և պարտականությունները շարք կանգնելուց առաջ և շարքում:

Ունակ կլինի

- Խստորեն պահպանել ԱԻ համազգեստի կրման կանոնները, պարզ և հստակորեն տալ հրամանները և շարքի ղեկավարման ազդանշանները տեղում և շարժման ընթացքում:
- Հստակորեն և գեղեցիկ, կատարել վարժաձևերը տեղում և շարժման ընթացքում:
- Ճիշտ գործել ջոկի, դասակի և վաշտի շարքում հետիոտն կարգով և մեքենաների վրա:

Անձնակազմի մեջ դաստիարակել հարգանք դեպի շարքը, սեր դեպի շարային երգն ու հպարտություն ՀՀ ԱԻՆ իր պատկանելիության համար

Համառոտ բովանդակություն

Շարային կանոնագրքի դրույթները ճիշտ և հստակորեն իմացություն,

-օրինակելի արտաքին տեսք, բարձր շարային ձգվածություն, շարային վարժաձևերի կայուն ունակություններ,

- ստորաբաժանումների շարքերի վստահ ղեկավարելու կարողություն
- հպարտություն ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայությանն իր պատկանելիության համար:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Ստուգարքի անցկացման ձևը.

Կիսամյակի ընթացքում նախատեսված է 2 ստուգում՝ ընթացիկ և ամփոփիչ: Յուրաքանչյուրը գնահատվում է ստուգված կամ չստուգված: Ցանկացած մեկից դրական գնահատական ստանալու դեպքում ուսանողը համարվում է ստուգարքը հանձնած:

Ընթացիկ ստուգումնն իրականացվում է անհատական (ինքնուրույն) աշխատանքների հիման վրա:

Ամփոփիչ ստուգման պարազայում ուսանողների համար դասընթացի ավարտին կազմակերպվում է բանավոր հարցում:

Հիմնական գրականության ցանկ

ՀՀ ԶՈՒ Շարային պատրաստության կանոնադրություն, Եր. – 2001:

0401/B24	**ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ**	**2 կրեդիտ**
2 ժամ	*16/0/14*	
3 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է սովորողի մոտ կայուն գիտելիքներ ձևավորել սոցիոլոգիայի հիմունքներ առարկայի և մշակույթ՝ հասկացության վերաբերյալ, արմատավորել համակարգված պատկերացում անհատի սոցիալականացման էության, միջազգային փոխհարաբերությունների, գործառույթների վերլուծության մասին: Հատուկ ուշադրություն դարձնել ազգամշակութային սոցիոլոգիական հիմնախնդիրների վրա:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կունենա համապարփակ գիտելիքներ գիտության մեջ «սոցիոլոգիա» հասկացության ամենատարածված սահմանումների և տեսությունների մասին:

Ունակ կլինի

- ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*
- պատկերացնել կազմակերպությունների զարգացման սոցիալական հիմնական օրինաչափությունները: մշակույթի կառուցվածքը, բաղադրիչները, տիպաբանությաունը, մշակույթի ծագման և զարգացման օրինաչափությունները:
- ✓ *(ընդհանրական կարողություններ)*
- կիրառել սոցիոլոգիայի տեսական հիմնախնդիրների վերաբերյալ գիտելիքները:

Համառոտ բովանդակություն

Հասարակությունը որպես ամբողջական սոցիալական օրգանիզմ, գործառության և զարգացման հիմնական օրինաչափությունները: Սոցիոլոգիայի ձևավորման պատմական ակնարկ: Սոցիոլոգիայի տեսական հիմնախնդիրների գնահատականը կառավարման հիմնախնդիրների ըմբռնման տեսանկյունից: Աշխատանքի տեղն ու դերը հասարակության զարգացման մեջ: Տեխնիկան որպես սոցիալական երևույթ: Անհատի սոցիալականացման էությունը: Միջազգային փոխհարաբերությունների, գործառույթների վերլուծությունը: Կոլեկտիվը որպես համատեղ աշխատանքի հավաքական սուբյեկտ: Կազմակերպությունների զարգացման սոցիալական օրինաչափությունները: Կառավարման ժամանակակից փորձի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները: Ազգամշակութային սոցիոլոգիական հիմնախնդիրները: Ընդհանուր պատկերացում կիրառական սոցիոլոգիայի խնդիրների մասին:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի 4 հարցի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկ

1. *Կյուրեղյան Է.Ա., Կիրառական սոցիոլոգիա: Եր. - 2006:*
2. *ԿրավչենկոԱ.Ի.,Սոցիոլոգիա: Ուսումնական ձեռնարկ: Եր. - 2003:*
3. *Օհանջանյան Ռ., Գևորգյան Կ., Գործարար հաղորդակցում: Եր. - 2005:*

0401/Բ32	**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ**	**2 կրեդիտ**
2 ժամ	*16/0/14*	
3 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է սովորողին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական կատեգորիաների ու քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին, սովորողների մոտ ձևավորել քաղաքական իրականության վերլուծության պրակտիկ հմտություններ:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կունենա համապատասխան գիտելիքներ քաղաքագիտության տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերի մասին:

Ունակ կլինի

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

➢ հասկանալ քաղաքագիտության առարկայական տիրույթն ու մեթոդաբանությունը:

➢ կողմնորոշվել գործնական քաղաքականության հիմնահարցերի մեկնաբանման հարցերում:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

➢ կատարել քաղաքագիտական վերլուծություններ:

Համառոտ բովանդակություն

Քաղաքագիտության առարկան և օբյեկտը: Քաղաքականության ծագումը և էությունը: Քաղաքական իշխանության էությունն ու կառուցվածքը: Քաղաքական մտքի բնորոշ առանձնահատկությունները հին աշխարհում: Քաղաքական ուսմունքները միջնադարյան Եվրոպայում: Քաղաքականության հիմնական սուբյեկտները: Քաղաքականության հիմքերը (տնտեսական, սոցիալական, իրավաքաղաքական, հոգևոր-գաղափարախոսական): Քաղաքական գործունեություն և իշխանություն: Քաղաքական իշխանության ծագումն ու առանձնահատկությունները: Քաղաքական համակարգի կառուցվածքը, գործառույթները և հիմնական տեսակները: Պետությունը որպես քաղաքական համակարգի բազային ինստիտուտ: Պետությունը և քաղաքացիական հասարակությունը: Քաղաքական կուսակցությունների ըմբռնման էությունն ու գործառույթները, տեսակները: Քաղաքական լիդերություն: Միջազգային հարաբերությունները: Համաշխարհային քաղաքականության, համընդգրկուն (գլոբալ) խնդիրները և աշխարհաքաղաքական պատկերը:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի 3 հարցի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկ

1. *Քաղաքագիտություն, ուսումնական ձեռնարկ, գլխ. խմբագիր՝ Հ. Մանուչարյան, ԵՊՀ հրատարակչություն, Եր., 2006,- 588 էջ:*
2. *Гаджиев К.С. Политология: Учебник для высших учебных заведений. М., "Логос", 2004.-488 с.*
3. *Соловьев А. И. Политология: Политическая теория, политические технологии: Учебник длв студентов вузов / А.И. Соловьев. М., "Аспект Пресс", 2003, -559 с.*

0401/Բ30	**ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ**	**2 կրեդիտ**
2 ժամ	*16/14/0*	
4 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է

• տրամաբանության դասընթացի հիմնական հասկացությունների և օրենքների ու սկզբունքների իմացությունը, որն ունի ինչպես ընդհանուր կրթական, այնպես էլ իմացաբանական ու մեթոդաբանական նշանակություն:

• ուսանողը ոչ միայն բացահայտում և կատարելագործում է իր տրամաբանական կարողությունները, այլև ձեռք է բերում գիտելիքներ, որոնք նպաստում են մասնագիտական առարկաների տեսությունների հիմնական հասկացությունների ու կառուցվածքի յուրացմանը, հետազոտական հմտությունների ձևավորմանը:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

ա. մասնագիտական գիտելիք և իմացություն

1. հասկանալ մտքի կառուցվածքը,

2. իմանալ տրամաբանական կանոնների և օրենքների մասին, որոնք կշռադատության ընթացքում ապահովում են մեր մտքի կանոնավորությունը ու հետևողականությունը, ճշմարիտ եզրակացությունների ստացումը և գիտական գիտելիքների հիմնավորվածությունը,
3. հասկանալ տրամաբանական գիտելիքի էությունը և գործառնական տեսանկյունները:
բ. գործնական մասնագիտական կարողություններ
4. հասկանալ տրամաբանության ճանաչողական և մեթոդաբանական գործառույթների անհրաժեշտությունը գիտատեսական և գործնական ուսումնասիրությունների ժամանակ,
5. ճիշտ կատարել և գնահատել հասկացությունների հետ կապված տրամաբանական գործողությունները,
գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)
6. կարողանալ դրսևորել տրամաբանական մտածողության անհրաժեշտ մշակույթ՝ պահպանելով կանոնավոր մտածողության որոշակիության, անհակասականության, հիմնավորվածության և հետևողականության հիմնարար սկզբունքների ու դրանցից բխող մասնավոր նորմերի պահանջները:

Ունակ կլինի

1.իրականացնել դատողությունների և անհրաժեշտ մտահանգումների տրամաբանական վերլուծություն և գնահատում:

Համառոտ բովանդակություն

հասկանալ մտքի կառուցվածքը, կարողանալ դրսևորել տրամաբանական մտածողության անհրաժեշտ մշակույթ՝ պահպանելով կանոնավոր մտածողության որոշակիության, անհակասականության,հիմնավորվածության և հետևողականության հիմնարար սկզբունքների ու դրանցից բխող մասնավոր նորմերի պահանջները:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

դասընթացն ավարտվում է ստուգարքով
Գնահատման մեթոդները՝ բանավոր հարցում ըստ առաջադրված հարցաշարի,
Գնահատման չափանիշները՝ անցած նյութի յուրացման և վերարտադրության աստիճանը, պատասխանների ամբողջականությունը և անսխալականությունը, հարցերի առանցքային կողմերի իմացություն, վերլուծական պատասխաններ:

Հիմնական գրականության ցանկ

1. Գևորգյան Հ.Ա., Բաղդասարյան Վ.Խ., Տրամաբանություն: Եր. - 2015:
2. Кириллов В.И., Орлов Г.А., Фокина Н.И., Упражнения по логике. Учебное пособие. М. - 2005.
3. Ивлев Ю.В., Логика. Учебник. 3-е издание. М.- 2005.
4. Ивин А.А., Практическая логика. Учебное пособие. М. - 2002.
5. А.Гетманова. Логика. 9-ое изд., М. - 2006.

1001/Բ22	**ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐ**	**2 կրեդիտ**
2 ժամ	*16/14/0*	
4 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է ➢ Ուսանողների մոտ ձևավորել պատկերացում բնագիտության ժամանակակից հիմնախնդիրների մասին: ➢ Ձևավորել պատկերացումներ բնական գիտությունների զարգացման ժամանակակից օրինաչափությունների և հեռանկարների մասին: ➢ Ձևավորել որոշակի աշխարհահայացք մեզ շրջապատող աշխարհում կատարվող երևույթների բացատրության համար:
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ա. մասնագիտական գիտելիք և իմացություն 1. բացատրելու բնության համակարգերի կառուցվածքի, առաջացման և էվոլյուցիայի կոնցեպցիաները, 2. նկարագրելու մեզ շրջապատող աշխարհում կատարվող երևույթների օրինաչափությունները, 3. հիմնավորելու ժամանակակից բնագիտության նվաճումների կիրառման կարևորությունը և անհրաժեշտությունը: բ. գործնական մասնագիտական կարողություններ 4. լուսաբանելու մեզ շրջապատող աշխարհում կատարվող երևույթները, 5. օգտագործելու գիտելիքները բնության երևույթների օրինաչափությունները մեկնաբանելու և գնահատելու համար: գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան) ***Ունակ լինի*** 1. օգտագործելու ստացած գիտելիքները մասնագիտական գործունեության ընթացքում իրադրական տարբեր հարցեր լուծելու համար:
Համառոտ բովանդակություն Երկիր մոլորակը, աշխարհագրական թաղանթը: Կենսոլորտը որպես համամոլորակային էկոհամակարգ: Բնական միջավայրի և էկոլոգիական գործոնների ներգործության օրինաչափությունները: Տեղախումբ, համակեցություն, էկոհամակարգ: Բնական միջավայրի բաղադրիչները և էկոլոգիական լարվածության գործոններ: Հողածածկը և դրան պահպանության հիմնախնդիրը:
Գնահատման մեթոդներն ու չափանիշները Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:
Հիմնական գրականության ցանկ *1.Թամոյան Ս.Ջ. Բնապահպանություն դասախոսություններ/ ՃԿՊԱ, 2012:* *2.Գալստյան Մ.Հ., Մկրտչյան Ա.Լ., Թամոյան Ս.Ջ. Հայաստանի կենսաբազմազանությունը և բնության հատուկ պահպանվող տարածքները, Եր. – 2009:*

1001/Բ25	**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ**	**4 կրեդիտ**
4 ժամ	*10/50/0*	
2կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է `ներկայումս մարդկությունը անցում է կատարել զարգացման հետինդուստրիալ տեղեկատվական դարաշրջան, որը բնորոշվում է հասարակական կյանքի բոլոր բնագավառներ տեղեկատվական հեռահաղորդակցական տեխնոլոգիաների համատարած ներթափանցմամբ, հանրային և կորպորատիվ կառավարման էլեկտրոնային ձևերի ներդրմամբ: Որպես տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանի հրամայական` ՀՀ կառավարությունը նախաձեռնել է էլեկտրոնային կառավարության (կամ էլեկտրոնային կառավարման) (Electronic Government) համակարգի ներդրման ծրագիրը: ՀՀ կառավարության ծրագրում ամրագրվել է միջազգային լավագույն չափորոշիչներին համապատասխան էլեկտրոնային կառավարության լիարժեք ներդրման դրույթը:
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** Դասընթացն անցնելու արդյունքում մագիստրոսը ձեռք կբերի հետևյալ գիտելիքներն ու հմտությունները. •տեղեկատվական կառավարման տեխնոլոգիաների և մեթոդների վերաբերյալ գիտելիքներ տնտեսական զարգացման և կայունացման մեջ: •Պետական մարմինների հիմնական գործառույթներում տեղեկատվական կառավարման տեխնոլոգիաների կիրառման հմտություններ, •Պետական մարմինների հիմնական գործառույթներում տեղեկատվական կառավարման տեխնոլոգիաների վերաբերյալ գիտելիքներ, •Տեղեկատվական կառավարման տեխնոլոգիաների մարկետինգի տեսակների վերաբերյալ գիտելիքներ, •Ստացած գիտելիքների կիրառումը պրակտիկ պլանավորման մեջ, •Տեղեկատվական կառավարման ենթակառուցվածքների տեսակների վերաբերյալ իմացություն: Տեղեկատվական կառավարման խնդիրների ու գործառույթների վերլուծություն կատարելու ունակություն: ***Ունակ կլինի*** • Ստացած գիտելիքների կիրառումը պրակտիկ պլանավորման մեջ, •Տեղեկատվական կառավարման ենթակառուցվածքների տեսակների վերաբերյալ իմացություն: Տեղեկատվական կառավարման խնդիրների ու գործառույթների վերլուծություն կատարելու ունակություն:
Համառոտ բովանդակություն «Ներկայումս, մարդկությունն անցում է կատարել զարգացման հետինդուստրիալ տեղեկատվական դարաշրջան, որը բնորոշվում է հասարակական կյանքի բոլոր բնագավառներ տեղեկատվական հեռահաղորդակցական տեխնոլոգիաների համատարած ներթափանցմամբ, հանրային և կորպորատիվ կառավարման էլեկտրոնային ձևերի ներդրմամբ: Որպես տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանի հրամայական` ՀՀ կառավարությունը նախաձեռնել է էլեկտրոնային կառավարության (կամ էլեկտրոնային կառավարման) (Electronic Government) համակարգի ներդրման ծրագիրը: ՀՀ կառավարության ծրագրում ամրագրվել է միջազգային լավագույն չափորոշիչներին համապատասխան էլեկտրոնային կառավարության լիարժեք ներդրման դրույթը: ***Դասընթացի արդիականությանը*** պայմանավորված է տեղեկատվական կառավարման անհրաժեշտությամբ: Համակարգը հնարավորություն է տալիս ոչ միայն դյուրացնելու

հասարակական կյանքի սուբյեկտների փոխհարաբերությունները, այլ նաև ապահովելու պետական մարմինների գործունեության թափանցիկությունը, ինչն էլ իր հերթին կնպաստի կոռուպցիոն ռիսկերի նվեզեցմանը. զգալիորեն կմեծացնի պետական մարմինների նկատմամբ քաղաքացիների վստահությունը:

Համակարգը նաև հնարավորություն կտա արագ և արդյունավետ իրականացնել փաստաթղթաշրջանառությունը, ինչը կհանգցնի թե թղթերի վրա կատարվող ծախսերի կրճատմանը, և թե ժամանակի խնայողությանը:

Դասընթացի օբյեկտ է հանդիսանում տեղեկատվական կառավարման համակարգերն ու դրանց գործածության ոլորտներն են:

Տեղեկատվական ազատությունը պետական կառավարման համակարգի հրապարակայնության ապահովման հիմնական բաղադրիչներից մեկն է: Դեռևս 2003 թվականին ընդունված «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը նպաստեց, որ իշխանություններն սկսեն մտածել հրապարակային աշխատանքի մասին և հրապարակայնությունը ապահովելու ձևերի մասին: Այդ ձևերից է հենց էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը և կիրառումը պետական մարմինների ներքին աշխատանքում և իշխանություն-հանրություն փոխհարաբերություններում:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Դասընթացի շրջանակում ուսանողներ կատարում են ինքնուրույն անհատական աշխատանք՝ ռեֆերատի ձևով, իսկ ստուգարքի ժամանակ այն հանդես է գալիս որպես 3-րդ հարց՝ ռեֆերատի ներկայացում:

Հիմնական գրականության ցանկ

1. *ՀՀ Սահմանադրություն (2005 թ. փոփոխություններով):*
2. *«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենք, 2005:*
3. *«Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային ստորագրության մասին» ՀՀ օրենք. 2004:*
4. *Կառավարության ծրագիր 2008-2012թթ.:*
5. *Կառավարության ծրագիր 2012-2017թթ.:*
6. *Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային ծրագրերի մուտքագրման. հաստատման, այդ համակարգով կատարողականների գնահատման և կատարողականների հիման վրա պարգևատրման կարգ:*
7. *Նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման հայեցակարգ (քաղվածք ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից, 29 մայիս. No12, 2012):*
8. *«Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենք, 2011:*

Էլեկտրոնային կայքեր

1. *www.e-gov.am*
2. *http://www.armedia.am*
3. *http://blo .givemeinfc.arn*
4. *https://ec.europa.eu/*
5. *http://egov.iist.unu.edu*
6. *www.ekeng.am*

7. www.gov.am

8. http://www.indersctence.com

9. www.justice.am

10. http://portal unesco.org

11. http://wiki.answers.com

1401/Բ09	ԿԻՐԱՌԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ և ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔ	2 Կրեդիտ
2 ժամ	*16/0/14*	
3 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է սովորողներին ներկայացնել տեսական վիճակագրական գիտելիքների ու օրինաչափությունների մասին իմացություն: Ծանոթացնել վիճակագրության ընդհանուր դրույթներին, մեթոդներին, նրանց մոտ ձևավորել վիճակագրական վերլուծական միտք:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կյուրացնի վիճակագրության ընդհանուր տեսության առարկան և Վիճակագրական օրինաչափությունները:

Ունակ կլինի

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- հասկանալ վիճակագրության կապը մյուս գիտությունների, վիճակագրական հետազոտության հիմնական փուլերի հետ:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- յուրացնել վիճակագրական ցուցանիշների համակարգի առանձնահատկությունները:

Համառոտ բովանդակություն

Վիճակագրական գիտության առարկան: Հասարակական կյանքի օրենքների բնույթը և վիճակագրության դերը դրանց ճանաչողության մեջ: Քանակական և որակական վերլուծության փոխկապակցությունը վիճակագրության մեջ: Վիճակագրության մեջ օգտագործվող զանգվածային դիտարկումների, բացարձակ, հարաբերական և միջին մեծությունների, ընտրանքային դիտարկման, սոցիալ-տնտեսական երևույթների դինամիկայի, փոխկապվածության և ինդեքսային մեթոդները, դրանց հիմնական առանձնահատկությունները: Մեծ թվերի օրենք: Վիճակագրական օրինաչափություններ: Վիճակագրական գիտության կառուցվածքը: Վիճակագրական գիտության ճյուղերը: Վիճակագրության կապը մյուս գիտությունների հետ: Վիճակագրական հետազոտության հիմնական փուլերը: Վիճակագրական համակցություն: Վիճակագրական ցուցանիշների համակարգ: Վիճակագրության հիմնական ֆունկցիաները: Վիճակագրության խնդիրները ներկա ժամանակաշրջանում: Վիճակագրության կազմակերպումը Հայաստանի հանրապետությունում:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Դասընթացի շրջանակում ուսանողներ կատարում են ինքնուրույն անհատական աշխատանք՝ ռեֆերատի ձևով, իսկ ստուգարքի ժամանակ այն հանդես է գալիս որպես 3-րդ հարց՝ ռեֆերատի ներկայացում:

Հիմնական գրականության ցանկ

1. *Теория статистики /Под. ред. Г.Л. Громыко. Инфра, М.- 2000.*
2. *Шмойлова Р.А., Минашкин В.Г., Садовникова Н.А., Шувалова Е.Б., Теория статистики.*

Финансы и статистика. М. - 2003.
3. Елисеева И.И., Юзбашев М.М. Общая теория статистики: Учебник, 5-е изд., перераб. и доп. Финансы и статистика, М.- 2005.
4. Կոզլով Կ. և ուրիշներ Վիճակագրության ընդհանուր տեսություն, Եր. - 1983:
5. ԿոստանդյանՍ., Ֆահրադյան Մ. Վիճակագրության ընդհանուր տեսության խնդիրների ժողովածու, Եր., 1986:

0401/B20	ՄԵՆԵՋՄԵՆԹԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ	2 կրեդիտ
2 ժամ	*10/20/0*	
1 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	

Դասընթացի նպատակն է՝ սովորողին ծանոթացնել կառավարման հիմունքների, կառավարման զարգացման փուլերի, կառավարման տեսության հիմնական հայեցակարգերի և դպրոցների հետ, ձևավորել սովորողների մոտ կառավարչական որոշումների ընդունման և իրագործման գործնական հմտություններ:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կունենա համապատասխան գիտելիքներ գիտական կառավարման տեսական և կիրառական նշանակության հիմնահարցերի մասին:

Ունակ կլինի

- *(բուն մասնագիտական կարողություններ)*
- հասկանալ գիտական կառավարման առարկայական առանձնահատկությունները:
- կողմնորոշվել իշխանության և լիդերության դերը կառավարման համակարգում հիմնահարցերի մեկնաբանման հարցերում:
- *(ընդհանրական կարողություններ)*
- կատարել կոնֆլիկտների և սթրեսների կառավարման ուղղություններով վերլուծություններ:

Կտիրապետի

- օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ և այլն),
- պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր:

Համառոտ բովանդակություն

Կառավարման հիմունքները: Կառավարման զարգացման փուլերը, կառավարման տեսության հիմնական հայեցակարգերը և դպրոցները: Կազմակերպության ներքին և ատաքին միջավայրը: Մոտիվացիան և դրա ձևերը: Կառավարման մեթոդները և կառավարման կոմունիկացիաները: Կառավարչական որոշումների ընդունումը և իրագործման կազմակերպումը: Իշխանության և լիդերության դերը կառավարման համակարգում: Կոնֆլիկտների, փոփոխությունների և սթրեսների կառավարումը:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Ընթացիկ քննություններ.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 2, 1, 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն.

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 3,3,4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկ *1. Սուվարյան Յու, Մ., Մենեջմենթ, Տնտեսագետ, Եր. - 2010:* *2.Հովհաննիսյան Թ., Խաչատրյան Լ.: Մարդկային ռեսուրսների կառավարում: Ուսումնական ձեռնարկ: ԵՃՇՊՀ հրատ., Եր. - 2013:* *3.Հովսեփյան Ռ.Ս., Հայրապետյան, Մ.Գ., Խաչատրյան Ռ.Մ.: Մենեջմենթ, կառավարում, կազմակերպում: Ճարտարագետ, Եր. - 2012:* 4.*Потемкин В.К. Управление персоналом. Питер, М. - 2010.*

0401/Բ12	ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	4 կրեդիտ
4 ժամ	*46/0/14*	
4 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է՝		
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** 1.բացատրել պետական և մունիցիպալ կառավարման հիմնական հասկացություններ և գործընթացները, 2.մեկնաբանել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման կարգավորող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի մշակման սկզբունքներն ու տրամաբանությունը, 3.ներկայացնել հանրային կառավարման համակարգը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթներն ու լիազորությունները: ***Ունակ կլինի*** 1. գործնականում իրականացնել կառավարման տարատեսակ գործառույթներ, 2. հանրային հարցերի վերաբերյալ կատարել ինքնուրույն դատողություններ և վերլուծություններ, 3. կայացնել ճիշտ որոշումներ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգում, 4. կազմակերպել կայացված որոշումների իրագործումը: ***Կոմպետենտ*** 1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ և այլն), 2. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր, 3. կիրառել ձեռք բերված գիտելիքները, ընկալել և տարածել նորերը, 4. արդյունավետ հարաբերություններ ձևավորել և պահպանել այլ անձանց և մարմինների հետ:		
Համառոտ բովանդակություն Դասընթացի առարկան և խնդիրները: Պետության էությունը, գործառույթները և դասակարգումը: Պետական կառավարման էությունը: Պետական իշխանության մարմինների համակարգը: Նախագահական իշխանություն: Օրենսդիր իշխանություն: *ՀՀ* ԱԺ կառուցվածքը և գործունեությունը: Գործադիր իշխանություն: *ՀՀ* գործադիր մարմինների համակարգը: Տարածքային կառավարում: Դատական իշխանություն: Դատախազություն: Տեղական ինքնակառավարում: *ՀՀ* պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների		

փոխհարաբերությունները: ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի բարեփոխումներն արդի փուլում:
Գնահատման մեթոդներն ու չափանիշները Քննության անցկացման ձևը՝ 2 ընթացիկ և 1 եզրափակիչ քննություն: Գնահատումն իրականացվում է Ակադեմիայում ընդունված կարգին համապատասխան, 20 բալանոց համակարգով: Դասընթացի շրջանակում ուսանողները կատարում են ինքնուրույն անհատական աշխատանք՝ ռեֆերատի ձևով, որի կատարման ընթացքը ստուգվում է միջանկյալ քննությունների ընթացքում, իսկ եզրափակիչ քննության ժամանակ այն քննական տոմսի համար հանդես է գալիս որպես 3-րդ հարց՝ ռեֆերատի ներկայացում:
Հիմնական գրականության ցանկը *1. Սուվարյան Յու.Մ., Չոբանյան Մ.Է. Պետական և մունիցիպալ կառավարում: Լիմուշ, Եր.- 2017:* *2.Սուվարյան Յու.Մ. և ուրիշներ ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառա-վարման բարեփոխումների գերակայություններն արդի փուլում, Եր.- 2015:* *3.Հարությունյան Մ. Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք: Եր.- 2004:* *4. Պետության և իրավունքի տեսություն, ՌԽուսմնական ձեռնարկ, Եր. – 2014:* *5.Глазунова Н.И. Теория государственного управления, Учебник, М. - 2008.* ***Լրացուցիչ գրականության ցանկը*** *1. Սարգսյան Վ. Նախագծերի ավտոմատացված կառավարում ՌԽուսմնական ձեռնարկ, Հեղինակային հրատարակություն, Եր.: 2005. - 158 էջ:*

0401/B27	**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ - 1**	**4 կրեդիտ**
4 ժամ	*40/0/20*	
1 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է սովորողներին ներկայացնել տնտեսագիտության տեսական հիմնադրույթները և տնտեսական օրինաչափությունները: Սովորողների մոտ ձևավորել տնտեսագիտական մտածելակերպ և հետազոտական ունակություններ: Տնտեսագիտության տեսության խնդիրն է բացահայտել տնտեսական օրենքների էությունը: Այն կնպաստի նաև ռացիոնալ տնտեսական վարքագծի ձևավորմանը:		
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ➢ կյուրացնի տնտեսագիտության հիմունքները: ***Ունակ կլինի*** ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* ➢ հասկանալ տնտեսության տեսական հիմնադրույթները, հիմնական հասկացությունները, զարգացման օրինաչափություններ: ✓ *(ընդհանրական կարողություններ)* ➢ յուրացնել տնտեսագիտության տեսության և ուսումնասիրության սկզբունքներն ու մեթոդները:		
Համառոտ բովանդակություն Տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրները: Տնտեսագիտության տեսություն առարկան: Տնտեսագիտության տեսության ու ուսումնասիրության սկզբունքները և մեթոդները: Տնտեսագիտության տեսության տարբեր դպրոցների հայեցակարգային հիմնահարցերը:		

Ընդհանուր պատկերացումներ տնտեսության մասին, տնտեսություն և տնտեսագիտություն: Մարդը, հասարակությունը և տնտեսությունը: Մարդու մոդելները տնտեսագիտության տեսության մեջ: Շուկայական տնտեսության էությունը և ձևավորման նախադրյալները: Արժեքի հիմնախնդիրը: Շուկայի գործառույթները և գործողության սկզբունքները: Շուկայի հիմնական տարրերը: Սպառողական վարքագծի էությունը և դերը պահանջարկի ձևավորման գործում: Սպառողական վարքագծի ձևավորման վրա ազդող գործոնները: Պահանջարկ և օգտակարություն: Օգտակարություն: Ընդհանուր և սահմանային օգտակարություն: Կատարյալ մրցակցությունը և դրա բնորոշ գծերը: Ոչ կատարյալ մրցակցության բնորոշ գծերը և եղանակները: Մոնոպոլիայի էությունը և դրսևորման ձևերը:
Գնահատման մեթոդներն ու չափանիշները ***Ընթացիկ քննություններ.*** Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 2,1,1 միավոր: Միավորների քայլը 0,5 է: ***Եզրափակիչ քննություն.*** Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 3,3,4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:
Հիմնական գրականության ցանկ 1. *Կիրակոսյան Գ.Ե., Խլղաթյան Ի.Ե. Տնտեսագիտության տեսություն, Եր.- 2009:* 2. *Աղաջանյան Հ.Ի. Տնտեսագիտության տեսություն, Ուսումնական ձեռնարկ, մաս 1, Եր.- 2009:* 3. *Պոլ Հեյնե Տնտեսագիտական մտածելակերպ Եր.- 2008:*

0401/B28	**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ - 2**	**4 կրեդիտ**
4 ժամ	*40/0/20*	
2 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է սովորողներին ներկայացնել տնտեսագիտության տեսական հիմնադրույթները և տնտեսական օրինաչափությունները: Սովորողների մոտ ձևավորել տնտեսագիտական մտածելակերպ և հետազոտական ունակություններ: Տնտեսագիտության տեսության խնդիրն է բացահայտել տնտեսական օրենքների էությունը: Այն կնպաստի նաև ռացիոնալ տնտեսական վարքագծի ձևավորմանը:		
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ➢ կյուրացնի տնտեսագիտության հիմունքները: ***Ունակ կլինի*** ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* ➢ հասկանալ տնտեսության տեսական հիմնադրույթները, հիմնական հասկացությունները, զարգացման օրինաչափություններ: ✓ *(ընդհանրական կարողություններ)* ➢ յուրացնել տնտեսագիտության տեսության և ուսումնասիրության սկզբունքներն ու մեթոդները:		
Համառոտ բովանդակություն Տնտեսական զարգացման ընդհանուր խնդիրները: Տնտեսագիտության տեսություն առարկան: Տնտեսագիտության տեսության ու ուսումնասիրության սկզբունքները և մեթոդները:		

Տնտեսագիտության տեսության տարբեր դպրոցների հայեցակարգային հիմնահարցերը: Ընդհանուր պատկերացումներ տնտեսության մասին, տնտեսություն և տնտեսագիտություն: Մարդը, հասարակությունը և տնտեսությունը: Մարդու մոդելները տնտեսագիտության տեսության մեջ:

Շուկայական տնտեսության էությունը և ձևավորման նախադրյալները: Արժեքի հիմնախնդիրը: Շուկայի գործառույթները և գործողության սկզբունքները: Շուկայի հիմնական տարրերը:

Սպառողական վարքագծի էությունը և դերը պահանջարկի ձևավորման գործում: Սպառողական վարքագծի ձևավորման վրա ազդող գործոնները: Պահանջարկ և օգտակարություն: Օգտակարություն: Ընդհանուր և սահմանային օգտակարություն: Կատարյալ մրցակցությունը և դրա բնորոշ գծերը: Ոչ կատարյալ մրցակցության բնորոշ գծերը և եղանակները: Մոնոպոլիայի էությունը և դրսևորման ձևերը:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Ընթացիկ քննություններ.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները գրավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 2,1,1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն.

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 3,3,4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկ

4. *Կիրակոսյան Գ.Ե., Խլղաթյան Ի.Ե. Տնտեսագիտության տեսություն, Եր.- 2009:*
5. *Աղաջանյան Հ.Ի. Տնտեսագիտության տեսություն, Ուսումնական ձեռնարկ, մաս 1, Եր.- 2009:*
6. *Պոլ Հեյնե Տնտեսագիտական մտածելակերպ Եր., 2008:*

0401/Բ29	ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ	4 կրեդիտ
4 ժամ	*40/0/20*	
7 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել կայուն տեսական գիտելիք երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և մակրոտնտեսական կարգավորման հետ կապված: Տնտեսական ճգնաժամերի ժամանակ աճում է տնտեսության պետական կարգավորման դերը և փոխվում են սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի կարգավորման ձևերը և գործիքները, որոնց էլ անդրադառնում է դասընթացը :

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- Տնտեսության պետական կանգավորման նպատակները և խնդիրները
- Պետական կարգավորման օբյեկտները և սուբյեկտները
- Տնտեսության պետական հատվածի գործունեության արդյունավետության

վերլուծության ժամանակ հիմնական գործիքները և մեթոդները • Տնտեսական քաղաքականության տարբեր ուղղությունների ձևավորման հիմքերը *Ունակ կլինի* ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* • Կիրառել պետական կարգավորման մեթոդները • Հաշվարկել պետության մասնակցության աստիճանը ազգային տնտեսության մեջ ✓ *(ընդհանրական կարողություններ)* • Գնահատել տնտեսական քաղաքականության դրական և բացասական հետևանքները
Համառոտ բովանդակությունը Պետության դերը տնտեսական ճգնաժամերի ժամանակ: Դասական տնտեսագետների և Ջ.Մ.Քեյնսի տեսությունները համաշխարհային ճգնաժամի ժամանակ: Պետության միջամտության նպատակները և խնդիրները ճգնաժամերի ժամանակ: Երկրի կառավարման մարմինները: Ազգային տնտեսության մեջ պետական կարգավորման մեթոդները և գործիքները: Ազգային տնտեսությունում պետական հատվածիդերը: Մասնավորեցման գործընթացը տնտեսության մեջ: Բյուջետային և հարկային համակարգի ձևավորումը տնտեսությունում: Զարգացած երկրների ժամանակակից փորձը տնտեսության պետական կարգավորման գործընթացում: Հակամենաշնորհային միջավայրի ձևավորումը և մրցակցային դաշտի ապահովումը: ՀՀ առանձնահատկությունները տնտեսության պետական կարգավորման գործընթացում:
Գնահատման մեթոդները և չափանիշները **Քննության անցկացման ձևը.** ***Ընթացիկ քննություն.*** Նախատեսված 1 ընթացիկ քննությունը բանավոր է, 8 միավոր առավելագույն արժեքով: ***Եզրափակիչ քննություն.*** Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 3, 4, 3 միավոր::
Հիմնական գրականության ցանկը. *1. Стиглиц Дж.Э. Экономика государственного сектора. - 1997.* *2. Ղուշչյան Հ.Բ. և ուրիշներ, Մակրոտնտեսական կարգավորում, Ուսումնական ձեռնարկ, «Տնտեսագետ» Եր. - 2005:*

0401/B33	ՖԻՆԱՆՍՆԵՐ	4 կրեդիտ
4 ժամ	*40/0/20*	
5 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է սովորողին ուսուցանել արտաբյուջետային ֆոնդերի և դրանց տեսակների, հասարակական անհրաժեշտության ու դերի մասին: Տալ գիտելիք ապահովագրության տնտեսական նշանակության, տեսակների, առանձնահատկությունների և կենտրոնական բանկի խնդիրների ու գործառույթների շուրջ:		
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ➢ կիմանա արտաբյուջետային ֆոնդերը և դրանց տեսակները, արտաբյուջետային ֆոնդերի հասարակական անհրաժեշտությունն ու դերը, ապահովագրության տնտեսական նշանակությունը, տեսակները և դրանց առանձնահատկությունները: ***Ունակ կլինի.***		

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

➢ վերլուծել ֆինանսական ռեսուրսները:

➢ հաշվարկել շահութաբերության ցուցանիշները, օգտվել ապահովագրական և բանկային ծառայություններից:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

➢ տիրապետել կառավարման տեղեկատվական համակարգերով ֆինանսական կառավարման խնդիրների լուծման տարբերակները:

➢ տիրապետել բյուջետային ցուցանիշների քանակական և որակական գնահատմանը:

Համառոտ բովանդակություն

Արտաբյուջետային ֆոնդերը և դրանց տեսակները: Արտաբյուջետային ֆոնդերի հասարակական անհրաժեշտությունը և դերը: Ապահովագրության տնտեսական նշանակությունը, տեսակները և դրանց առանձնահատկությունները: Վարկի էություն, վարկավորման սկզբունքներ, վարկի տեսակները, վարկավորման գործընթացը: ԿԲ խնդիրներ և գործառույթներ: Առևտրային բանկերի ակտիվային և պասիվային գործառնություններ: ՀՀ դրամական և վճարահաշվարկային համակարգը: Դրամը և դրամաշրջանառությունը շուկայական տնտեսությունում:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Ընթացիկ քննություններ.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները բանավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն.

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկ

1. *Բաղանյան Լ.Հ. և ուրիշներ Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ. Դասագիրք.- Եր., [illegible]ՄՈՄ[illegible] ՄՊԸ, 2010, -588 էջ.*

1001/Բ09	ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ-1	4 կրեդիտ
4 ժամ	*20/0/40*	
1 կիսամյակ	Ստուգարք	

Դասընթացի նպատակն է հնարավորություն ընձեռել ապագա ուսանողներին ծանոթանալ դիսկրետ մաթեմատիկայի մի քանի կարևոր բաժինների՝ բինար հարաբերությունների, կոմբինատորիկայի, բուլյան ֆունկցիաների և գրաֆների տեսության հիմնահարցերին, կարևոր մեթոդներին, հայտնի սկզբունքներին և դրանց կիրառությամբ գործնական խնդիրների լուծման հնարներին:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

Ունակ կլինի

- ➢ կիրառել բուլյան ֆունկցիաների մոդելավորումն ու իրացումը,ինտեգրալ սխեմաների ավտոմատ նախագծման տրամաբանական փուլում
- ➢ կիրառել ինտեգրալ սխեմաների ավտոմատ նախագծման սխեմաների տարրերի խմբավորման, տարրերի և բլոկների տեղադրման և շղթաների միացությունների ուղեգծման փուլերում առաջացած խնդիրների գրաֆային մոդելներ ստեղծելու, այդ մոդելները վերլուծելու և համապատասխան արագագործ ալգորիթմներ մշակելու համար,
- ➢ կիրառել կոմբինատոր խնդիրներում պահանջվող կոնֆիգուրացիաների քանակը գնահատելու կամ հաշվելու համար,
- ➢ նախապատրաստել ուսանողներին տրամաբանական սխեմաների տարրերի նվազեցման գործընթացին:

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- ➢ գործնական խնդիրներում դիսկրետ մաթեմատիկայի հայտնի մեթոդների և սկզբունքների կիրառման կարողություն,
- ➢ գործնական խնդիրների մոդելավորման, վերլուծման և գնահատման հմտություն,
- ➢ խնդիրների լուծման և գործնական կիրառման համար արդյունավետ ալգորիթմների մշակման ունակություն:

Համառոտ բովանդակությունը

Դասընթացում ուսումնասիրվում են բինար հարաբերությունների, կոմբինատորիկայի, բուլյան ֆունկցիաների և գրաֆների տեսության հիմնահարցեր:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Ստուգարքի անցկացման ձևը.

Կիսամյակի ընթացքում նախատեսված է 2 գրավոր ստուգողական աշխատանք: Յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 20 միավոր: Դրական գնահատականներ ստանալու դեպքում ուսանողը համարվում է ստուգարքը հանձնած:

Ստուգողական աշխատանքների արդյունքներով ստուգարքը չհանձնած ուսանողների համար դասընթացի ավարտին կազմակերպվում է բանավոր հարցում:

Հիմնական գրականության ցանկը

1. *Տոնոյան Ռ., Դիսկրետ մաթեմատիկայի դասընթաց, 1999:*

2. Эвнин А., Задачник по дискретной математике, 2002.

1001/Բ10	ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱ-2	4 կրեդիտ

<table>
<tr><td>4 ժամ</td><td>20/0/40</td></tr>
<tr><td>2 կիսամյակ</td><td>Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց</td></tr>
<tr><td colspan="2">Դասընթացի նպատակն է հնարավորություն ընձեռել ապագա ուսանողներին ծանոթանալ դիսկրետ մաթեմատիկայի մի քանի կարևոր բաժինների՝ բինար հարաբերությունների, կոմբինատորիկայի, բուլյան ֆունկցիաների և գրաֆների տեսության հիմնահարցերին, կարևոր մեթոդներին, հայտնի սկզբունքներին և դրանց կիրառությամբ գործնական խնդիրների լուծման հնարներին:</td></tr>
<tr><td colspan="2">Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.
Գիտելիք և իմացություն
Ունակ կլինի
➢ կիրառել բուլյան ֆունկցիաների մոդելավորումն ու իրացումը,ինտեգրալ սխեմաների ավտոմատ նախագծման տրամաբանական փուլում
➢ կիրառել ինտեգրալ սխեմաների ավտոմատ նախագծման սխեմաների տարրերի խմբավորման, տարրերի և բլոկների տեղադրման և շղթաների միացությունների ուղեգծման փուլերում առաջացած խնդիրների գրաֆային մոդելներ ստեղծելու, այդ մոդելները վերլուծելու և համապատասխան արագագործ ալգորիթմներ մշակելու համար,
➢ կիրառել կոմբինատոր խնդիրներում պահանջվող կոնֆիգուրացիաների քանակը գնահատելու կամ հաշվելու համար,
➢ նախապատրաստել ուսանողներին տրամաբանական սխեմաների տարրերի նվազեցման գործընթացին:
✓ (բուն մասնագիտական կարողություններ)
➢ գործնական խնդիրներում դիսկրետ մաթեմատիկայի հայտնի մեթոդների և սկզբունքների կիրառման կարողություն,
➢ գործնական խնդիրների մոդելավորման, վերլուծման և գնահատման հմտություն,
➢ խնդիրների լուծման և գործնական կիրառման համար արդյունավետ ալգորիթմների մշակման ունակություն:</td></tr>
<tr><td colspan="2">Համառոտ բովանդակությունը
Դասընթացում ուսումնասիրվում են բինար հարաբերությունների, կոմբինատորիկայի, բուլյան ֆունկցիաների և գրաֆների տեսության հիմնահարցեր:</td></tr>
<tr><td colspan="2">Գնահատման մեթոդները և չափանիշները
Կիսամյակի ընթացքում նախատեսված է 2 գրավոր թեստային միջանկյալ քննություն, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 4 միավոր: Թեստերը կազմված են 8 հարցերից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 0,5 միավոր: Առավելագույնը 2 միավոր ուսանողը ստանում է պարապմունքներին հաճախելու համար: Գումարային անցողիկ 8 միավոր ստանալու դեպքում համարվում է, որ ուսանողը ստուգարքը հանձնել է:
Ստուգողական աշխատանքների արդյունքներով ստուգարքը չհանձնած ուսանողների համար դասընթացի ավարտին կազմակերպվում է բանավոր քննություն, որը գնահատվում է առավելագույնը 10 միավոր: Հարցատոմսը կազմված է 8 հարցերից, որոնցից առաջին վեցից յուրաքանչյուրը գնահատվում է 1, իսկ վերջին երկուսից յուրաքանչյուրը՝ 2-ական միավոր:</td></tr>
<tr><td colspan="2">Հիմնական գրականության ցանկը
1. Տոնոյան Ռ., Դիսկրետ մաթեմատիկայի դասընթաց, 1999:
2. Эвнин А., Задачник по дискретной математике, 2002.</td></tr>
</table>

1001/Բ13	**ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**	**2 կրեդիտ**
2 ժամ	*10/20/0*	

5 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Դասընթացի նպատակն է սովորողին տալ տեսական և գործնական անհրաժեշտ մակարդակի գիտելիքներ, որպեսզի նրանք կարողանան մաթեմատիկորեն ճիշտ մոդելավորել խնդիրները, ինչպես նաև, ստույգ մեկնաբանել եղած վիճակագրական տվյալները և անհրաժեշտության դեպքում անցկացնել փորձարկումներ համապատասխան վիճակագրական տվյալներ ստանալու համար:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- Բազմությունների և միացությունների տեսության հիմնական սկզբունքների,
- Հավանականությունների տեսության գումարման և բազմապատկման հայտնի թեորեմների,
- Պատահական մեծությունների մաթեմատիկական սպասումներ և դիսպերսիաների վերաբերյալ:

Ունակ կլինի

✓(բուն մասնագիտական կարողություններ)

- հասկանալ և ինքնուրույն ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ որոշակի գործնական խնդրի շուրջ և արդյունավետ կիրառել մասնագիտական ուղղվածության գործողություններում,
- տարբերել պատահույթների տեսակները և դրանց հավանականությունները:

✓(ընդհանրական կարողություններ)

- յուրացնել հավանականությունների տեսության մեթոդաբանությունը, կիրառվող սկզբունքները, բանաձևերը, թեորեմները, լուծել մասնագիտական գործնական խնդիրներ:

Համառոտ բովանդակություն

Բազմությունների և միացությունների տեսություն: Հավանականությունների տեսության հիմնական հասկացություններ: Հավանականությունների գումարման և բազմապատկման թեորեմներ: Փորձերի կրկնում: Պատահական մեծություններ: Մաթեմատիկական սպասում: Դիսպերսիա: Մեծ թվերի օրենքը: Պատահական մեծության բաշխման ինտեգրալ ֆունկցիան: Պատահական մեծության բաշխման դիֆերենցիալ ֆունկցիան: Նորմալ, ցուցչային և Պուասոնի բաշխում:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի 4 հարցի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկ

1. Հարությունյան Ե. և այլոք, Հավանականություն և կիրառական վիճակագրություն, Եր.-2000:

2. Ահարոնյան Ն.Գ., Խաչատրյան Ե.Ռ., Հավանականությունների տեսության խնդրագիրք, ԵՊՀ-ի հրատ., - 2016:

3. Գասպարյան Կ.Վ. Վիճակագրության խնդիրների ժողովածու, ԵՊՀ հրատ., Եր. - 2017:

0401/Բ18	**ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**	**2 կրեդիտ**
2 ժամ	*16/14/0*	
6 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կյուրացնի

Ունակ լինի ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* ➢ հասկանալ
Համառոտ բովանդակություն Կառավարումը մարդկանց համակեցության կարևորագույն բաղադրիչներից է: Պետության, տնտեսության, քաղաքականության, կրթության, կենցաղի, հանրության և անհատի կենսագործունեության ամեն մի այլ ոլորտի արդյունավետ գործառության, առավել ևս անխոչընդոտ զարգացման ապահովումը հրամայաբար պահանջում է կառավարման համարժեք համակարգի առկայություն: Նույն կերպ՝ որևէ ոլորտում ձախողման պատճառների շարքում վերլուծությունը պարտադիր կերպով բացահայտում է անհամարժեք, անհաջող կառավարման, կառավարչական այս կամ այն սխալի վճռորոշ հանգամանքը:
Գնահատման մեթոդներն ու չափանիշները Մեկ ստուգարք՝ կիսամյակի ընթացքում տրված ստուգողական աշխատանքների արդյունքների հիման վրա:
Հիմնական գրականության ցանկ 1. *Կիրակոսյան Գ.Ե., Խլղաթյան Ի.Ե. Տնտեսագիտության տեսություն, Եր.-2009:* 2. *Աղաջանյան Հ.Ի. Տնտեսագիտության տեսություն, ուսումնական ձեռնարկ, մաս 1, Եր.-2009:* 3. *Պոլ Հեյնե Տնտեսագիտական մտածելակերպ Եր.- 2008:*

0401/B13	**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ**	**4 կրեդիտ**
4 ժամ	*30/20/10*	
6 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել հաշվապահական հաշվառման վարման կարգը, տնտեսական գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց մոտ: Ուսանողների մոտ ձևավորել տնտեսական գործունեությանը մասնակցող ֆիզիկական և իրավաբանական անձանց գործողությունների նկատմամբ հսկողության իրականցում և տեղեկատվության հիման վրա տնտեսական դործունեության արդյունքների գնահատում:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. *Գիտելիք և իմացություն* ➢ Կատարել ճիշտ հաշվապահական ձևակերպումներ: ➢ Կրկնակի գրանցման միջոցով ստանալ շրջանառության տեղեկագիր: ➢ Ինքնուրույն ստանալ հաշվապահական հաշվեկշիռ: *Ունակ լինի* ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* ➢ Ինքնուրույն ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվություն որոշակի հետազոտական խնդրի շուրջ: Ինքնուրույն լուծել թեմաներին վերաբերող խնդիրներ, կիրառելով հարկային օրենսդրություն: ✓ *(ընդհանրական կարողություններ)* ➢ Հաշվապահական տվյալներն օգտագործելով ինքնուրույն կազմել ֆինանսական հաշվետվություններ: Հաշվի առնելով հարկային դաշտում տեղի ունեցող անընդմեջ փոփոխությունները, կարողանալ դրանք ճկուն կիրառելով , լուծել մասնագիտական ընդհանուր խնդիրներ տնտոսության զարգացման ոլորտում:		
Համառոտ բովանդակությունը Հաշվապահական հաշվառումը կիրառական գիտություն է և առարկայական ձևով ու մեթոդաբանությամբ: Ուսումնասիրում է տնտեսական կյանքի փաստերը՝ դրանց		

տնտեսական և իրավական տեսանկյունից:
Հաշվապահական հաշվառումը հաշիվների համակարգի միջոցով ոչ միայն գրանցում է տնտեսական գործառնությունները, այլ նաև տեղեկատվություն է ապահովում արտադրության կառավարման համար: Միայն կառավարման գործընթացում է ավելի պարզ նկատվում հաշվապահական հաշվառման տեղեկատվության գործնական նշանակությունը՝ ռացիոնալ տնտեսական ծրագրերի մշակման համար:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հիմնական գրականության ցանկը

1.Սարգսյան Ա.Հ., Մարջանյան Ա.Մ. Օգաննեզովա Ն.Ս. Հաշվապահական Հաշվառում, Ուսումնական ձեռնարկ, Եր - 2014:

2.Հաշվապահական հաշվառման ստանդարտների համառոտ ուղեցույց, Եր.- 2014:

3.ՀՀ օրենքը հաշվապահական հաշվառման մասին, Եր.--2002:

4.ՀՀ հարկային օրենսդրություն Եր.-2016:

0401/Բ19	ՄԱՐՔԵԹԻՆԳ	5 կրեդիտ
4 ժամ	*40/0/20*	
7 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	

Դասընթացի նպատակն է՝ ծանոթացնել ուսանողներին մարքեթինգի հարցերի տեսությանը և պրակտիկային, համապատասխան դիրքավորման իրականացմանը, սպառողներին ապրանքի մասին տեղեկացմանը, գնագոյացման հիմունքներին, սպառողների հետ փոխհարաբերությունների հիմունքներին, նեյրոմարքեթինգի ազդեցությանը:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

1. մեկնաբանել առաքման և գնային քաղաքականության, ինչպես նաև գովազդի կազմակերպման վերաբերյալ ստացված տեսական գիտելիքները,
2. լուսաբանել սպառողների նոր պահանջմունքների և ձեռնարկությունների գործունեության նոր ուղղությունների բացահայտման ընթացակարգերը,
3. ներկայացնել կազմակերպության գործունեության մասին սպառողների տեղեկացվածության բարձրացման ուղիները,

Ունակ կլինի

1. բացահայտել սպառողների նոր պահանջմունքները և որոնել դրանց բավարարման հնարավորությունները,
2. բացահայտել կազմակերպության գործունեության նոր ուղղությունները,
3. մշակել գովազդային արշավներ,
4. վերլուծել և օպտիմալացնել ապրանքի տեսականին,

5. կիրառելնեյրոմարքեթինգի հիմնական սկզբունքները,

6. սեգմենտավորել և թիրախավորել շուկան,

7. կազմել մարքեթինգային պլան,

Կտիրապետի

1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ և այլն),
2. կիրառել տեսական գիտելիքները գործնականում,
3. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տարբերակել, վերլուծել և մեկնաբանել տարբեր աղբյուրներից հայթայթված տեղեկատվությունը,
4. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր,
5. լուսաբանել պետական և տնտեսական կառավարման ոլորտում սահմանված կանոնակարգերն ու գոյություն ունեցող տեխնոլոգիաները,
6. մասնագիտական վերլուծություններով և հաշվարկներով նպաստել տնտեսվարող բոլոր սուբյեկտների կողմից կայացվող որոշումների և գործնական խնդիրների լուծմանը:

Համառոտ բովանդակություն

Մարքեթինգի էությունը, նշանակությունը: Մարքեթինգային հետազոտություն և պահանջարկի կանխատեսում: Արժեքի ստեղծում, սպառողների բավարարում, հավատարիմ սպառողների ձևավորում: Սպառողական և գործարար շուկաների վերլուծություն: Շուկաների սեգմենտավորում: Ապրանք: Դիրքավորում: Գին, գնագոյացում: Մարքեթինգային կոմունիկացիաներ, համեմատական վերլուծություն: Գովազդի ազդեցության գործիքները: Մերչենդայզինգի հիմունքներ: Բրենդ-մենեջմենթ: Նեյրոմարքեթինգ:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Քննության անցկացման ձևը՝ 2 ընթացիկ և 1 եզրափակիչ քննություն:

Գնահատումն իրականացվում է Ակադեմիայում ընդունված կարգին համապատասխան, 20 բալանոց համակարգով: Դասընթացի շրջանակում ուսանողները կատարում են ինքնուրույն ահատական աշխատանք՝ ռեֆերատի ձևով, որի կատարման ընթացքը ստուգվում է միջանկյալ քննությունների ընթացքում, իսկ եզրափակիչ քննության ժամանակ այն քննական տոմսի համար հանդես է գալիս որպես 3-րդ հարց՝ ռեֆերատի ներկայացում:

Հիմնական գրականության ցանկը

1. *Котлер Ф., Армстронг Г., Сондерс Д., Вонг В., Основы маркетинга, изд. Вильямс.- 2007.*
2. *Котлер Ф., Келлер К.Л. Маркетинг-менеджмент, 12 - е изд. ПИТЕР. – 2009.*
3. *Гольдштейн Г.Я., Катаев А.В. Маркетинг, ТРТУ. – 1999.*
4. *Мозер К. Психология маркетинга и рекламы, изд. Гуманитарный Центр, Харьков. – 2004.*
5. *Сысоева С., Бузукова Е., Мерчандайзинг. – 2015.*

Լրացուցիչ գրականության ցանկը

1. *Годин А., Брендинг М. 3 - е изд., перераб. и доп. Издательско торговая корпорация «Дашков и К.», М. – 2013.*

0401/Բ10	ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	4 կրեդիտ
4 ժամ	*40/0/20*	
4 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	

Դասընթացի նպատակն է՝ ուսանողներին տալ գիտելիքներ համաշխարհային տնտեսության, դրա կառուցվածքի և զարգացման օրինաչափությունների վերաբերյալ, ունակ դարձնել վերլուծելու համաշխարհային տնտեսության մեջ առանձին երկրների տնտեսությունները հիմնվելով մակրոտնտեսական ցուցանիշների, տնտեսության ճյուղային կառուցվածքի, տնտեսական զարգացման մոդելի և արտաքին տնտեսական հարաբերությունների վրա:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

1. ներկայացնել համաշխարհային տնտեսության էությունը և զարգացման հիմնական միտումները,
2. թվարկել համաշխարհային տնտեսության սուբյեկտները և պարզաբանել դրանց ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա:

Ունակ կլինի

1. վերլուծել և գնահատել համաշխարհային տնտեսության մեջ երկրների դասակարգման չափանիշները,
2. վերհանել երկրների տնտեսական զարգացման առանձնահատկությունները և գնահատել դրանց ազդեցությունը համաշխարհային տնտեսության մեջ:

Կտիրապետի

1. օգտվել մասնագիտական գրականությունից և վիճակագրական տվյալների բազաներից,
2. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ և այլն),
3. պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը,
4. մեկնաբանել միկրո- և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, գլոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները, քննարկել դրանց փոխառնչությունները,
5. բացահայտել ինչպես տնտեսության առանձին ոլորտների, այնպես էլ ամբողջ տնտեսության կառավարման առանձնահատկությունները և իրականացման մեխանիզմները:

Համառոտ բովանդակություն

Համաշխարհային տնտեսության հասկացությունը, ձևավորումը և զարգացումը: Տնտեսական ինտեգրման և գլոբալացման գործընթացները համաշխարհային տնտեսության մեջ: Երկրների տեղն ու դերը համաշխարհային տնտեսության մեջ: Վերազգային կորպորացիաների և միջազգային տնտեսական կազմակերպությունների ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա: ԱՄՆ-ի տնտեսությունը: Կանադայի տնտեսությունը: Ճապոնիայի տնտեսությունը: Գերմանիայի տնտեսությունը: Մեծ Բրիտանիայի տնտեսությունը: Ֆրանսիայի տնտեսությունը: Իտալիայի տնտեսությունը:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Քննության անցկացման ձևը՝ 2 ընթացիկ և 1 եզրափակիչ քննություն:

Գնահատումն իրականացվում է Ակադեմիայում ընդունված կարգին համապատասխան, 20 բալանոց համակարգով: Դասընթացի շրջանակում ուսանողները կատարում են

ինքնուրույն անհատական աշխատանք՝ ռեֆերատի ձևով, որի կատարման ընթացքը ստուգվում է միջանկյալ քննությունների ընթացքում, իսկ եզրափակիչ քննության ժամանակ այն քննական տոմսի համար հանդես է գալիս որպես 3-րդ հարց՝ ռեֆերատի ներկայացում:
Հիմնական գրականության ցանկը   1. *Мировая экономика: Учебник / Под ред. проф. А.С. Булатова. Юристъ, М. - 2006.*   2. *Погорлецкий А.И. Экономика зарубежных стран / Учебник. - СПб.: Изд-во Михайлова В.А., 2005.*   ***Լրացուցիչ գրականության ցանկը***   *1. Ломакин В.К. Мировая экономика: Учебник для ВУЗов. ЮНИТИ-ДАНА, 2007 Horst Siabert, The World Economy: A Global Analysis, Routledge, M. – 2007.*

0401/B22	**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**5 կրեդիտ**
4 ժամ	*40/0/20*	
7 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Առարկայի նպատակն է ուսումնասիրողներին ներկայացնել և բացատրել աշխատանքի միջազգային բաժանման ժամանակակից համակարգի առանձնահատկությունները, համաշխարհային տնտեսության էությունն ու զարգացման օրինաչափությունները: Ուսումնասիրել ապրանքների և ծառայությունների միջազգայի առևտուրը, դրանց պետական և միջազգային կարգավորման մեխանիզմները: Բացահայտել կապիտալի արտահանման էությունը, շարժառիթները և ձևերը, ուսումնասիրել աշխատուժի միգրացիայի էությունը, պատճառները, ձևերը, մասշտաբները և հիմնական ուղղությունները:Ուսումնասիրել արժութային հարաբերությունները, արժութային քաղաքականությունը,եվրոպական արժութային համակարգը: Ուսումնասիրել արժութային փոխարժեքը և դրա վրա ազդող գործոնները:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ➢ Համաշխարհային *տնտեսության էությունն ու զարգացման օրինաչափությունները* ➢ Միջազգային *առևտրի սկզբունքները և կարգաորման մեխանիզմները* ➢ Արտադրության *գործոնների միջազգային փոխանակության շարժառիթները, սկզբունքները, առանձնահատկությունները* ➢ *Միջազգային տնտեսական ինտեգրացման արդի միտումները* ➢ Գլոբալ *տնտեսության պայմաններում ազգային տնտեսությանն ուղղված* արտաքին *մարտահրավերները:* ***Ունակ կլինի*** ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* ➢ Պատկերացում կազմել աշխատանքի միջազգային բաժանման ժամանակակից համակարգի առանձնահատկությունների ➢ Համաշխարհային տնտեսության էության ու զարգացման օրինաչափությունների ➢ Միջազգային առևտրի կարգավորման մեխանիզմների ➢ Կապիտալի և աշխատուժի միջազգային շարժի ➢ Տեխնոլոգիաների միջազգային փոխանցման միջազգային արժութային հարաբերությունների ✓ *(ընդհանրական կարողություններ)* ➢ Աշխատանքի *միջազգային բաժանման ժամանակակից համակարգի առանձնահատկություններին*		

➢ Միջազգային *առևտրի սկզբունքներին և կարգավորման մեխանիզմներին* ➢ *Միջազգային տնտեսական ինտեգրման կատեգորիաներին և արդի միտումներին* ➢ *Գլոբալ տնտեսության պայմաններում ազգային տնտեսությանն ուղղված արտաքին մարտահրավերներին*
Համառոտ բովանդակությունը Միջազգային տնտեսական հարաբերությունները միկրո և մակրոտնտեսագիտությունների հետ միասին կազմում են ընդհանուր տնտեսագիտակության կարևորագույն բաղկացուցիչը: ՄՏՀ-ի ուսումնասիրությունը ձեռք է բերել առանձնահատուկ հրատապության գլոբալացման արդի պայմաններում, քանի որ ապրանքային և ֆինանսական շուկաների միջև ուժեղացող փոխադարձ կապերը և փոխկախվածությունները ավելի ու ավելի մեծ ազդեցություն են թողնում յուրաքանչյուր առանձին երկրի վրա: Տնտեսական անկումները, Ֆինանսարժութային ճգնաժամերը սկզբում ծագելով առանձին երկրներում կամ տարածաշրջաններում, անխուսափելիորեն ձեռք են բերում գլոբալ համաշխարհային բնույթ: Այդ հանգամանքը հաշվի առնելով անհրաժեշտ պայման է յուրաքանչյուր երկրում արդյունավետ տնտեսական քաղաքականություն իրականացնելու համար:
Գնահատման մեթոդները և չափանիշները ***Ընթացիկ քննություններ*** Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 4 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 1 միավոր: ***Եզրափակիչ քննություն*** Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:
Հիմնական գրականության ցանկը *1.Ա. Մարկոսյան, Դ. Հախվերդյան, Գ. Նազարյան, Միջազգային տնտեսական հարաբերություններ, ուսումնական ձեռնարկ, 1,2 հատոր, «Տնտեսագետ» Եր. - 2015:*

0401/Բ01	**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ**	**4 կրեդիտ**
4 ժամ	*40/0/20*	
1 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է սովորողին ուսուցանել արտակարգ իրավիճակների, դասակարգման, էության, բնակչության և տարածքների պաշտպանության տեսության մասին: Տալ գիտելիքներ բնական բնույթի արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության, կենսաբանական-սոցիալական բնույթի արտակարգ իրավիճակները և բնակչության պաշտպանության վերաբերյալ:		
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ➢ կիմանա ՀՀ տարածքում հնարավոր արտակարգ իրավիճակների դասակարգման և արտակարգ իրավիճակներից բնակչության ու տարածքների պաշտպանության պետական քաղաքականության առանձնահատկությունները: ***Ունակ կլինի*** ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* ➢ տիրապետել արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության պետական քաղաքականության հարցերին: ✓ *(ընդհանրական կարողություններ)* ➢ յուրացնել աղետների և համաաղետների կանխարգելման պետական քաղաքականության		

հիմնական ուղղությունները:
Համառոտ բովանդակություն   Ընդհանուր դրույթեր: Առարկայի դերը, նշանակությունը, կառուցվածքը: Պատմական աղետները երկրագնդում և ՀՀ տարածքում: Սպիտակի երկրաշարժի դասերը: Գլոբալ հիմնահարցերը, որպես արտակարգ իրավիճակների աղբյուր: Խոցման և պաշտպանության եղանակների դասակարգումը: Տերմիններ և հասկացողություններ: Արտակարգ իրավիճակներ և էությունը: Ընդահանուր հարցեր բնակչության և տարածքների պաշտպանության տեսության մասին: Տեսության անհրաժեշտության նախադրյալները: Տեսության գործառույթները, խնդիրները, բաժինները և նրանց կառուցվածքը: Արտակարգ իրավիճակների դասակարգումը: Արտակարգ իրավիճակների դասակարգումների նպատակը, տեսակները: ՀՀ տարածքում հնարավոր արտակարգ իրավիճակները՝ դասակարգված ըստ դրանց հիմքում ընկած երևույթի բնույթի: Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության պետական քաղաքականության հարցերը: Աղետների և համաաղետների կանխարգելման պետական քաղաքականության հիմնական ուղղությունները և բովանդակությունը: Արտակարգ իրավիճակներից բնակչության և տարածքների պաշտպանության հիմնական հարցերը 21-րդ դարի սկզբում: Բնական բնույթի արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանությունը: Օդերևութաբանական և ագրոօդերևութաբանական վտանգավոր երևույթներ: Հիդրոլոգիական և հիդրո-երկրաբանական վտանգավոր երևույթներ: Տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակները և բնակչության պաշտպանությունը: Տրանսպորտային վթարներ: Հիդրոդինամիկական վթար-ներ: Շենքերի, կառուցվածքների հանկարծակի փլուզում: Էկոլոգիական բնույթի արտակարգ իրավիճակները և բնակչության պաշտպանությունը: Կենսաբանական-սոցիալական բնույթի արտակարգ իրավիճակները և բնակչության պաշտպանությունը: Սոցիոծին բնույթի արտակարգ իրավիճակները և բնակչության պաշտպանությունը: Ահաբեկչություն: Զանգվա-ծային ջարդ: Առևանգումներ և տրաֆինգ:
Գնահատման մեթոդներն ու չափանիշները   Ընթացիկ քննություններ.   Նախատեսված 2 ընթացիկ քննությունները բանավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է: Եզրափակիչ քննություն.   Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:
Հիմնական գրականության ցանկ   *1. Ալավերդյան Ռ.Հ. ՀՀ հնարավոր արտակարգ իրավիճակները: Մեթոդական մշակումներ, Եր. - 1997:*   2. *Մաթևոսյան Հ.Շ. Աղետների կառավարման հիմնահարցեր: Գծապատկերային ուսումնական ձեռնարկ, Եր. - 2002:*

1005/Բ02	ԱԻ ԵՎ ՔՊ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ	2 կրեդիտ
2 ժամ	*20/0/10*	
5 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է սովորողին տալ գիտելիք պետության հասկացության, գործառույթների, ապարատի, իրավունքի նորմերի, օրենքի և օրենսդրական ակտերի, ՀՀ-ի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միջազգային պայմանագրերի, բնագավառի		

գործունեության առնչվող այլ ոլորտների իրավական ակտերի, ՀՀ Սահմանադրության, ԱԻ-ում բնակչության պաշտպանության և ՔՊ բնազավառների գործառույթների, Փրկարար ծառայության մասին, «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքների մասին:
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ➢ կիմանա պետության հասկացության, գործառույթների, ՀՀ-ի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միջազգային պայմանագրերի, բնագավառի գործունեությանն առնչվող այլ ոլորտների իրավական ակտերի տեսական ու կիրառական նշանակության հիմնահարցերի մասին: ***Ունակ կլինի.*** ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* ➢ տիրապետել ՀՀ-ի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում գործող միջազգային պայմանագրերը, բնագավառի գործունեությանն առնչվող այլ ոլորտների իրավական ակտերի առանձնահատկություններին: ➢ ԱԻ-ում բնակչության պաշտպանության միջոցառումներին, սկզբունքներին և ձևերին: ✓ *(ընդհանրական կարողություններ)* ➢ իրականացնել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում միջազգային պայմանագրերի, բնագավառի գործունեությանն առնչվող այլ ոլորտների իրավական ակտերի վերլուծություն:
Համառոտ բովանդակություն Պետության հասկացությունը: Պետության գործառույթները, պետական ապարատը: Իրավունքի հասկացությունը, նորմերը: Օրենքը և օրենսդրական ակտերը: ՀՀ Սահմանադրությունը՝ որպես պետության և հասարակության հիմնական օրենք: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները: ԱԻ-ում բնակչության պաշտպանության և ՔՊ բնազավառների գործառույթները անձի, հասարակության և պետության անվտանգության բնագավառում: ԱԻ-ում բնակչության պաշտպանության միջոցառումների իրավական ապահովումը: Հիմնական հասկացությունները: ԱԻ-ում բնակչության պաշտպանության միջոցառումները, սկզբունքները և ձևերը: «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկան: Հիմնական հասկացությունները: Քաղաքացիական պաշտպանության բնագավառում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման իրավական կարգավորումը: Փրկարար ծառայության մասին ՀՀ օրենքի կարգավորման առարկան: «Փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկան: ՀՀ-ում հրդեհային, տեխնիկական անվտանգության և սեյսմիկ պաշտպանության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը, կառուցվածքը, նպատակները և խնդիրները: ՀՀ-ի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում գործող միջազգային պայմանագրերը, բնագավառի գործունեությանն առնչվող այլ ոլորտների իրավական ակտերը:
Գնահատման մեթոդներն ու չափանիշները Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի երկու տեսական, մեկ գործնական հարցի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկ 1. Ներսեսյանց Վ.Ս. Իրավունքի և պետության տեսություն: Բուհական դասագիրք, ԵՊՀ: Եր. - 2001: 2. Վաղարշյան Ա.Գ. Պետության և իրավունքի տեսություն: Դասախոսություններ /1,2 մաս/ԵՊՀ: Եր. - 2011: 3.ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 18-ի թիվ 1180-Ն որոշումը Վտանգավոր տարածքից բնակչության տարհանման կարգը հաստատելու մասին: 4.ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշումը ՍԻ և ՔՊ բնագավառներում ՀՀ պետական, ՏԻՄ և կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը սահմանելու մասին: 5.ՀՀ կառավարության 2005թ. նոյեմբերի 3-ի թիվ 1925-Ն որոշումը ՀՀ տարածքում ԱԻ առաջացման մասին բնակչության ազդարարման կարգը հաստատելու մասին:

1005/Բ20	ՔՊ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ	4 կրեդիտ
4 ժամ	*40/0/20*	
3 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է սովորողին բացատրել և ուսուցանել պատերազմի պայմաններում ՀՀ ՔՊ համակարգի դերի և նշանակության մասին: Ներկայացնել պատերազմի կամ ռազմական դրության ժամանակ կազմակերպվող և իրականացվող ՔՊ միջոցառումները, ինչպես նաև ինժեներա-տեխնիկական, բժշկական, հակաճառագայթային և հակաքիմիական, կապի, հակահրդեհային և այլ միջոցառումներ:		
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ➢ կիմանա ՔՊ միջոցառումները պլանավորելու, կազմակերպելու և իրականացնելու առանձնահատկությունները: ***Ունակ կլինի*** ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* ➢ ձևավորել ՔՊ միջոցառումների պլանավորելու, կազմակերպելու և իրականացնելու ունակություն: ✓ *(ընդհանրական կարողություններ)* ➢ յուրացնել ուսումնառության ընթացքում ստացած գիտելիքները և կիրառել պատերազմի ժամանակ բնակչության պաշտպանության գծով մասնագիտական գործունեության ընթացքում:		
Համառոտ բովանդակություն ՔՊ տեղը, դերը, համակարգը, խնդիրներն ու գործառույթները: ՔՊ ծառայությունների ստեղծումը նախապատրաստումը և գործունեությունը: ՔՊ ուժերի ստեղծումը, պատրաստումը և մշտական պատրաստականության ապահովումը: ՔՊ պլանների մշակումը: ՀՀ տարածքում ԱԻ առաջացման մասին բնակչության ազդարարման կարգը: ԱԻ և ՔՊ բնագավառներում ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը: Հրամանատարաշտաբային և շտաբային ուսումնավարժությունների անցկացման հաճախականությունը:		
Գնահատման մեթոդներն ու չափանիշները ***Ընթացիկ քննություններ.*** Նախատեսված 2 ընթացիկ քննությունները բանավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է: Եզրափակիչ քննություն.		

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:
Հիմնական գրականության ցանկ *1.ՀՀ օրենքը «Քաղաքացիական պաշտպանության մասին» ընդունված 2003թ. մարտի 5-ին:* 2. *Քաղաքացիական պաշպանության ոլորտին վերաբերվող ՀՀ կառավարության որոշումներ:*

1001/Բ24	ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	2 կրեդիտ
2 ժամ	*14/10/6*	
2 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է անհրաժեշտ կարողությունների ու հմտությունների ձևավորումը, հետազոտական աշխատանքներ կատարելու համար: Մագիստրատուրան համարվում է գիտահետազոտական կրթության առաջին մակարդակը, որտեղ սովորողները պիտի կարողանան գիտական հարցադրում անել, ինչը հնարավոր է միայն գիտական հետազոտական աշխատանքների արդյունքում: Յութաքանչյուր հետազոտող պետք է տիրապետի համապատասխան մեթոդաբանության, որը կօգնի ճիշտ կազմակերպել աշխատանքները, ցանկալի գիտական արդյունք ստանալու համար:
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ➢ Գիտական հետազոտության և ուսումնասիրության մեթոդները: ➢ Գիտական հետազոտության իրականացման սկզբունքները և փուլերը: ➢ Գիտական հետազոտության նպատակադրման և խնդրադրման մեխանիզմը: ***Ունակ կլինի*** ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* ➢ ինքնուրույն ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվություն որոշակի հետազոտական խնդրի շուրջ: Իրականացնել հետազոտություններ և վերլուծություններ: ինքնուրույն ձեռք բերել անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, դրանք հմտորեն օգտագործել գիտական վերլուծությունների իրականացման ժամանակ՝ գիտական հիմնախնդիրների լուծման համար: ✓ *(ընդհանրական կարողություններ)* ➢ տեսնել գիտության մասնագիտական հիմնախնդիրները, մտածել ստեղծագործաբար, առաջադրել նոր գաղափարներ, լուծել մասնագիտական ընդհանուր խնդիրներ:
Համառոտ բովանդակությունը Այս դասընթացի շրջանակներում մագիստրոսները ուսումնասիրելու են գիտական հետազոտության էությունը, անհրաժեշտությունը և գործառույթները, գիտական հետազոտության տեսակները, իրականացման սկզբունքները և փուլերը, գիտական հետազոտության նպատակադրումը, խնդիրների առաջադրումը, առարկայի և օբյեկտի ընտրությունն ու կառուցվածքը, գիտահետազոտական աշխատանքների մեթոդաբանությունը և գիտական կանխատեսումների իրականացումը, գիտական հետազոտությունների արդյունքների փորձարկումը: Գիտական հետազոտության արդյունքների ձևակերպման և ներկայացման պահանջները:
Գնահատման մեթոդներն ու չափանիշները Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի երկու տեսական, մեկ գործնական հարցի հիման վրա:
Հիմնական գրականության ցանկը. *1.Сабитов Р.А. Основы научных исследований, Челявинск, 2002.*

2.Лакатов И. Фальсификация и методология научно-иследовательских програм. М.-2005.

1004/B02	**ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ-1**	**4 կրեդիտ**
4 ժամ	*30/18/12*	
4 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է սովորողին ամբողջական պատկերացում տալ առաջին բուժ օգնության (ԱԲՕ) խնդիրների և ծավալների, կյանքի և մահվան նշանների, ԱԲՕ ցուցաբերման եղանակների մասին էքստրեմալ պայմաններում (երկրաշարժ, թունավոր նյութեր, ճառագայթային ախտահարում, ոսկրների կոտրվածքներ, արյունահոսություն, վնասվածքներ և այլն):

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կիմանա էքստրեմալ պայմաններում առաջին բուժօգնության ցուցաբերելու գործողությունների շարքը:

Ունակ կլինի.

- ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*
- ճիշտ կողմնորոշվել էքստրեմալ պայմաններում բժշկական օգնություն ցուցաբերելու առումով:
- ✓ *(ընդհանրական կարողություններ)*
- ցույց տալ մինչբժշկական օգնություն:

Համառոտ բովանդակություն

Առաջին բուժօգնությունն ու մինչբժշկական օգնությունն ԱԻ-ում: ԱԲՕ խնդիրները և ծավալները, ԱԲՕ ցուցաբերման միջոցները, կյանքի և մահվան նշանները: ԱԻ և նրանց յուրահատկությունները բժշկական տեսանկյունից (բնական և տեխնոգեն աղետներ, վնասվածքների առանձնահատկությունները, ԱԲՕ ցուցաբերման բարդությունները): Հիմնական վնասվածքներն ու բարդությունները վթարների և աղետների ժամանակ: Մարդու անատոմիա և ֆիզիոլոգիա: Հենաշարժիչ համակարգ (կառուցվածքը և ֆունկցիան): Կմախք, փափուկ հյուսվածքներ, նյարդային, շնչառական, սրտանոթային, ավշային, ծածկույթային, մարսողական, ներզատիչ, միզասեռական համակարգեր (կառուցվածքը և ֆունկցիան): Մարմնի հյուսվածքներ (լորձաթաղանթ, շարակցական հյուսվածք): Տուժածի հետ վարվելակերպի, զննման և ԱԲՕ սկզբունքները: Նյարդային համակարգի գործունեության խանգարումներ և ԱԲՕ դրանց առաջացման դեպքում:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի երկու տեսական, մեկ գործնական հարցի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկ

1. *Инькова А. Справочник врача скорой и неотложной помощи, М. - 2014.*
2. *Костюшенко М. В. Алгоритм оказания первой помощи в черезвычайных ситуациях Кафедра медицины катастроф.- 2014.*

1004/B03	**ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ-2**	**4 կրեդիտ**
4 ժամ	*30/18/12*	
5 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	

Դասընթացի նպատակն է խորացնել և զարգացնել սովորողի նախորդ կիսամյակում ձեռք բերված գիտելիքները, ձևավորել էքստրեմալ պայմաններում առաջին բուժ օգնության ցուցաբերում գանգուղեղային, ողնաշարի վնասվածքների, շոկի, շնչառական համակարգի գործունեության խանգարումների, սրտանոթային համակարգի գործունեության

խանգարումների ժամանակ:
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ➢ կիմանա առաջին բուժօգնության ցուցաբերելու գործողությունների հերթականությունը գանգուղեղային, ողնաշարի վնասվածքների, շոկի, շնչառական համակարգի գործունեության խանգարումների, սրտանոթային համակարգի գործունեության խանգարումների ժամանակ: ***Ունակ կլինի.*** ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* ➢ ճիշտ կողմնորոշվել համապատասխան բժշկական օգնություն ցուցաբերելու առումով: ✓ *(ընդհանրական կարողություններ)* ➢ կիրառել ձեռք բերած գիտելիքները, գնահատել տուժածի վիճակը, ճիշտ դնել տարբեր վիրակապեր:
Համառոտ բովանդակություն Գանգուղեղային վնասվածքներ՝ տեսակները և ձևերը, նշանները (բաց, փակ, ցնցումներ, կոնտուզիա), զննումը, ջղաձգական համախտանիշ (ցնցումային նոպա, էպիլեպսիա, էպիլեպսանման նոպաներ «ապսենս») կոմա, տեսակները, նշանները, վտանգը: Ողնաշարի վնասվածքներ և ԱԲՕ դրանց առաջացման դեպքում: Շոկ, տեսակները, առաջացման պատճառները և ԱԲՕ դրանց առաջացման դեպքում: Շնչառական համակարգի գործունեության խանգարումներ, ԱԲՕ դրանց առաջացման դեպքում: Շնչառության դադար, վերին շնչուղիների խցանման պատճառները և առանձնահատկությունները (ձյուն, սել, ատամի պրոտեզ, ատամ, փահանաճար), շնչառական կենտրոնի ախտահարում (սինխրոն շունչ): Ասֆիկսիա՝ առաջացման պատճառները, նշանները, զննման առանձահատկությունները: Սրտանոթային համակարգի գործունեության խանգարումներ և դադար, ԱԲՕ դրանց առաջացման դեպքում (զարկերակային ճնշման չափում, ստետոսկոպի օգտագործումը):
Գնահատման մեթոդներն ու չափանիշները Քննության անցկացման ձևը՝ 2 ընթացիկ և 1 եզրափակիչ քննություն: Գնահատումն իրականացվում է Ակադեմիայում ընդունված կարգին համապատասխան, 20 բալանոց համակարգով: Դասընթացի շրջանակում ուսանողներ կատարում են ինքնուրույն անհատական աշխատանք՝ ռեֆերատի ձևով, որի կատարման ընթացքը ստուգվում է միջանկյալ քննությունների ընթացքում, իսկ եզրափակիչ քննության ժամանակ այն քննական տոմսին հանդես է գալիս որպես 3-րդ հարց՝ ռեֆերատի ներկայացում
Հիմնական գրականության ցանկ *1.Инькова А. Справочник врача скорой и неотложной помощи, М. - 2014.* 2. *Костюшенко М.В. Алгоритм оказания первой помощи в черезвычайных ситуациях Кафедра медицины катастроф - 2014.*

0401/Բ35	**ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ**	**4 կրեդիտ**
4ժամ	*30/10/20*	
3 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է ուսանողներին զինել հասարակությանն ու մարդու կենսագոյությանն սպառնացող մարդկության առջև ծառացած գլոբալ հիմնախնդիրների, հատկապես՝ էկոլոգիական արդի հիմնախնդիրների առաջացման բնական և մարդածին գործոնների, դրանց աղետալի հետևանքների, վերջիններիս դիմակայման, երկրահամակարգերի կայունության ապահովման և հիմնախնդիրների լուծման վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներով, երկրահամակարգերում ընթացող փոփոխությունների		

գնահատման մեթոդներով ու մոտեցումներով:
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** - կիմանա հասարակության կայուն զարգացման սկզբունքները, նախադրյալներն ու ասպեկտները, ինչպես նաև գիտատեխնիկական առաջընթացի և օպտիմալ բնօգտագործման դերն ու նշանակությունը մարդկության առջև ծառացած արդի գլոբալ հիմնախնդիրների լուծման և գեոհամակարգերի կայուն զարգացման գործում ***Ունակ կլինի*** - ձեռք բերված գիտելիքները գործնականում կիրառել ամենատարբեր բնական աղետների, ճգնաժամերի և արտակարգ իրավիճակների գնահատման, կողմնորոշման, լուծումներ գտնելու և որոշումներ ընդունելու ասպարեզներում - կտիրապետի անհրաժեշտ տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերի, հետազոտության մեթոդների ճիշտ ընտրության և կիրառման հմտությունների:
Համառոտ բովանդակություն «Հասարակության կայուն զարգացում» հասկացությունը, ընդհանուր բնութագիրը: «Բնություն» և «Հասարակություն» երկրահամակարգերը և դրանց փոխներգործությունը: Գլոբալ հիմնախնդիրները: Պարենային և անուշահամ ջրի հիմնախնդիրները: Ռեսուրսային հիմնախնդիրը: Ժողովրդագրական հիմնախնդիրը: Էկոլոգիական հիմնախնդիրը: Օզոնային թաղանթի քայքայման հիմնախնդիրը: Կլիմայի գլոբալ փոփոխության և անապատացման հիմնախնդիրները: Բնության նկատմամբ հասարակության վերաբերմունքի բնապատմական ընթացքը և նոր տիպի քաղաքակրթության անցման անհրաժեշտությունը: Նոր տիպի քաղաքակրթության անցման հիմնական սկզբունքները: Հասարակության կայուն զարգացման հիմնական նախադրյալները և քաղաքական ասպեկտը: Բնական աղետները և դրանց ազդեցությունը հասարակության կայուն զարգացման վրա: Օպտիմալ բնօգտագործում: Կայուն զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում: Կլիմայի գլոբալ փոփոխությունների դրսևորումները և կանխատեսումները ՀՀ-ում: Կայուն զարգացման հնարավորությունները ՀՀ-ում:
Գնահատման մեթոդներն ու չափանիշները Քննության անցկացման ձևը՝ 2 ընթացիկ և 1 եզրափակիչ քննություն: Գնահատումն իրականացվում է Ակադեմիայում ընդունված կարգին համապատասխան, 20 բալանոց համակարգով: Դասընթացի շրջանակում ուսանողներ կատարում են ինքնուրույն անհատական աշխատանք՝ ռեֆերատի ձևով, որի կատարման ընթացքը ստուգվում է միջանկյալ քննությունների ընթացքում, իսկ եզրափակիչ քննության ժամանակ այն քննական տոմսին հանդես է գալիս որպես 3-րդ հարց՝ ռեֆերատի ներկայացում
Հիմնական գրականության ցանկ 1. *Կայուն հասարակական զարգացումը և Հայաստանը: Առաջին ազգային կոնֆերանսի նյութերի ժողովածու (հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով), Եր.-1997:* *2.Հայաստան: Կլիմայի փոփոխության հիմնահարցերը: Հոդվածների ժողովածու, Եր.- 1999:* *3. Անձի էկոլոգիական կուլտուրան: ԵԱՀԿ, ՕԿ, 2005:* *4. Կլիմայի փոփոխությունը (Ուսումնական ձեռնարկ Հայաստանի Հանրապետության ԲՈՒՀ - երի ուսանողների համար): Եր.- 2007:* 5. *Будыко М.И. Антропогенные изменения климата.- Л., 1987.* *6.Экологический доклад Армении, Мин - во охраны природы. Ер. - 1993.* *7.Даниелян К. Концепция устойчивого развития: Теорея и практика. Ер.-1996.*

8.К устойчивому развитию Армении: Том 1. Основопологающие материалы и опыт развитых стран. Ер.-1999.

9.К устойчивому развитию Армении: Том 2. Опыт и проблемы стран с переходной экономикой. Ер.-1999.

10.Рациональное использование и охрана водных ресурсов в изменяющейся окружающей среде. /Вартанян Т.Г. и Джонс Э., Материалы международной научной конференции, посвященной Международному Году Пресной Воды -2003, “Ер. гос. ун.- т”. Ер.- 2004.

Լրացուցիչ գրականություն

1. Վալեսյան Լ.: Արդի հարափոփոխ աշխարհը և Կայուն հասարակական զարգացման հայեցակարգը: «Կայուն հասարակական զարգացումը և Հայաստանը» առաջին ազգային կոնֆերանսի նյութերի ժողովածու (հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով), Եր.- 1997:

2. Վ. Դանիելյան: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի «Անցում դեպի զարգացում» նախագծի բնապահպանական ոլորտը: «Կայուն հասարակական զարգացումը և Հայաստանը» առաջին ազգային կոնֆերանսի նյութերի ժողովածու (հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով), Եր.-1997:

3. Դանիելյան Կ.Ս. «Հազարամյակի զարգացման նպատակների» 7-րդ նպատակի իրականացման նախադրյալներն ու հեռանկարները Հայաստանում: В сб. «Основные проблемы географии Южного Кавказа и прилегающих регионов /Материалы конференции, посвященной 70 - летию географического факультета Ереванского гос. университета/». Ер.- 2004.

4. Գսպոյան Գ.Մ., Արշակյան Լ.Բ. Բնության վրա հասարակության ներգործության հետևանքների գիտական կանխատեսման պրոբլեմների շուրջ: «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», N 3, 1982:

5. Գսպոյան Գ.: Բնօգտագործման հետևանքների գիտական կանխատեսման հիմնահարցերի շուրջ: «Կայուն հասարակական զարգացումը և Հայաստանը» առաջին ազգային կոնֆերանսի նյութերի ժողովածու (հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով), Եր.- 1997:

6. Արշակյան Լ., Գսպոյան Գ. Բնօգտագործման օպտիմալացումը որպես էկոլոգիական հիմնահարցերի լուծման և էկոլոգիական կանխատեսման կարևորագույն պայման: «Աշխարհագրական գիտությունը Հայաստանում /ներկան և ապագան» ժողովածու (ՀԱԸ հիմնադրման 70 - ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր), Երևան, 2006:

7. Կարինե Դանիելյան, Լիլիթ Սարգսյան, Տիգրան Սարգսյան. Կայուն զարգացման տեսությունն ու պրակտիկան (Համաշխարհային գործընթացը և Հայաստանը), ԼՈՒՍԱԿՆ, Եր.- 2013:

8. Гспоян Г.М., Аршакян Л.Б. Дефицит пресной воды - один из основных проблем человечества. В сб. “Рациональное использование и охрана ресурсов в изменяющейся окружающей среде”, Ереван, 2004. (Материалы Международной научной конференции, посвященной Международному Году Пресной Воды -2003. Îрганизаторы: Комиссиў по Устойчивости Вод Международного Географического Союза, Ереванский государственный

университет и НПО "Международный научно-исследовательский центр по водным, климатическим и рекреационным ресурсам"). Ер. - 2004. *9. Гспоян Г.М. Оптимальное природопользование - основа устойчивого развития человечества. В сб. "Основные проблемы географии Южного Кавказа и прилегающих регионов /Материалы конференции, посвященной 70 - летию географического факультета Ереванского гос. университета/. Ер. -2004.* ***Ինտերնետ ռեսուրսներ*** *https://greenologia.ru/eko-problemy/globalnye.html* *https://legkopolezno.ru/ekologiya/globalnye-problemy/ehkologicheskie/* *http://ecology-of.ru/eko-razdel/problemy-prirody-obshchie-problemy-cheloveka-i-zemli/#i* *https://moluch.ru/archive/58/8206/* *https://ecoportal.info/category/ecoproblem/*

1005/Բ08	**ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ**	**4 կրեդիտ**
4 ժամ	*40/0/20*	
5 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է սովորողին տալ գիտելիք մանրէների բնութագրերի, կենսաբանական հատկությունների, դասակարգման մասին: Ծանոթացնել մանրէների դերին բնության մեջ, արդյունաբերության, առողջապահության, գյուղատնտեսության բնագավառներում և պայքարի կանխարգելիչ ու հակահամաճարակային, օդակաթիլայի խմբի հիվանդությունների ու դրանց կանխարգելման միջոցառումների հետ:		
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ➢ կիմանա բնակչության ճառագայթային պաշտպանություն հիմնական միջոցառումները: ➢ կիմանա վարակված գոտու մուտքի սահմանափակման առանձնահատկությունները: ➢ ճառագայթային իրավիճակի գնահատման առաձնահատկությունները: ***Ունակ կլինի.*** ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* ➢ Որոշել բնակչության ճառագայթային պաշտպանության ռեժիմ սահմանելու պյմանները: ✓ *(ընդհանրական կարողություններ)* ➢ տիրապետել վթարային իրավիճակի դասակարգման հիման վրա իրականացվող հիմնական պաշտպանական միջոցառումներին:		
Համառոտ բովանդակություն Ռադիոակտիվություն: Ռադիոակտիվության չափման միավորները: Իոնացնող ճառագայթների կենսաբանական ազդեցությունը: Ճառագայթային վարակման աղբյուրներ: Ատոմային էներգետիկա: Ճառագայթային իրավիճակի գնահատում, անվտանգության նորմեր: Ռադիոակտիվ ամպերի շարժման արագության և ուղղության որոշում: Վարակված գոտու սահմանների ու մասշտաբների որոշում: Օդերևութաբանական դիտարկումներ: Ճառագայթային թույլատրելի դոզաի հսկում: Բնակչության ճառագայթային պաշտպանության ռեժիմ: Ազդարարման ընդհանուր կարգը: Յոդային արգելափակման իրականացում: Քիմիական ռադիոպրոտեկտորներ: Անհատական պաշտպանական միջոցներ: Ապաստարանների և թաքստոցների օգտագործման կարգը: Ապաակտիվացում:		
Գնահատման մեթոդներն ու չափանիշները Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի երեք տեսական հարցերի		

հիման վրա:
Հիմնական գրականության ցանկ 1. *ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 8-ի Ճառագայթային անվտանգության նորմերը հաստատելու մասին No 1219-Ն որոշումը:* 2. *ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 8-ի Անվտանգության կանոնները հաստատելու մասին No 1489-Ն որոշումը:* 3. *Հովհաննիսյան Ս. Ռադիոակտիվ ճառագայթները մեր շրջապատում, Մեթոդական ձեռնարկ, Եր. -2005:*

1005/Բ13	ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	4 կրեդիտ
4 ժամ	*40/0/20*	
4 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	

Դասընթացի նպատակն է սովորողին ուսուցանել քիմիական վտանգավոր ձեռնարկություններում անվտանգության մասին, քիմիական նյութերի դասակարգումն ըստ վտանգավորության, նրանց քանակական և որակական կազմը, քիմիական վթարների կանխարգելման սկզբունքները, քիմիական նյութերից անհատական պաշտպանության միջոցառումները և միջոցները, շրջակա միջավայրում քիմիական նյութերի որոշման մեթոդները և քիմիական հետախուզության սարքերը:
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ➢ կիմանա քիմիական վտանգավոր օբյեկտների անվտանգ շահագործման սկզբունքները: ***Ունակ կլինի.*** ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* ➢ իրականացնել քիմիական նյութերով տեղանքի վարակվածության ռիսկի գնահատում: ✓ *(ընդհանրական կարողություններ)* ➢ տիրապետել շրջակա միջավայրում քիմիական նյութերի որոշման մեթոդները: ➢ տիրապետել քիմիական հետախուզության սարքերը:
Համառոտ բովանդակություն Անվտանգությունը քիմիական վտանգավոր ձեռնարկություններում: Քիմիական նյութերի դասակարգումն ըստ վտանգավորության, նրանց քանակական և որակական կազմը: Քիմիական վթարների կամխարգելման սկզբունքները: Քիմիական վթարների կանխարգելման բնագավառում պետական մարմինների ձեռնարկությունների ղեկավարների և անձնակազմերի գործառույթների ու պատասխանատվության բաշխման սկզբունքները: Քիմիական վտանգավոր օբյեկտների անվտանգ շահագործման սկզբունքները: Քիմիական վտանգավոր օբյեկտների անվտանգության բնութագրերն ու գնահատումը: Քիմիական վթարների դեպքում առաջնահերթ միջոցառումները: Քիմիական նյութերով տեղանքի վարակվածության ռիսկի գնահատումը: Քիմիական նյութերից անհատական պաշտպանության միջոցառումները և միջոցները: Շրջակա միջավայրում քիմիական նյութերի որոշման մեթոդները: Քիմիական հետախուզության սարքեր: ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի ՀՀ քիմիական օբյեկտների վթարի կամ քիմիական վտանգի դեպքում բնակչության պաշտպանության պլանը և քիմիական վտանգավոր օբյեկտում վթարի դեպքում վթարավերականգնողական գործողությունները հաստատելու մասին N 861-Ն որոշումը: ՀՀ քիմիական օբյեկտների վթարի կամ քիմիական վտանգի դեպքում բնակչության պաշտպանության պլանը և քիմիական վտանգավոր օբյեկտում վթարի դեպքում վթարավերականգնողական գործողությունները:
Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Ընթացիկ քննություններ. Նախատեսված 2 ընթացիկ քննությունները բանավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է: Եզրափակիչ քննություն. Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:
Հիմնական գրականության ցանկ *1. ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 8-ի ՙՀՀ քիմիական օբյեկտների վթարի կամ քիմիական վտանգի դեպքում բնակչության պաշտպանության պլանը և քիմիական վտանգավոր օբյեկտում վթարի դեպքում վթարավերականգնողական գործողությունները հաստատելու մասին՚ No 861-Ն որոշումը:* *2. Նազարյան Լ. Քիմիական վտանգավոր ձեռնարկությունները և բնակչության պաշտպանության հիմնահարցերը, Եր.- 2008:* 3. *Индустриальный риск, химические аварии, научные разработки и исследования, Париж, ООН,- 1993.*

0401/Բ11	ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	2 կրեդիտ
2 ժամ	*20/0/10*	
3 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	
Դասընթացի նպատակն է ընդհանրացնել, համակարգել և ճշգրտել սովորողի ձեռք բերած գիտելիքները և հաղորդել նոր տեղեկություններ տնտեսական աշխարհագրության վերաբերյալ, սովորողին ներկայացնել արտադրողական ուժերն արտադրության և բնակեցման միջավայրի ռեսուրսների օգտագործման գործընթացում հիմնահարցերի մասին:		
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ➢ կունենա աշխարհագրական միջավայրի՝ ռեսուրսների և հիմնահարցերի վերաբերյալ գիտելիք: *(բուն մասնագիտական կարողություններ)* ➢ ընդհանրացնել և համակարգել ձեռք բերած տնտեսական աշխարհագրության վերաբերյալ գիտելիքները: ➢ համադրել և մեկնաբանել դասընթացի ժամանակ ձեռք բերած գիտելիքները: *(ընդհանրական կարողություններ)* ➢ հասկանալ համամոլորակային հիմնախնդիրները տարբեր ոլորտներում:		
Համառոտ բովանդակություն Հասարակական աշխարհագրությունը գիտությունների համակարգում, տարածական, տնտեսական և սոցիալական պարադիգմաները որպես տնտեսական և սոցիալական աշխարհագրության կոնցեպտուալ հիմքեր, ժամանակակից գլոբալ պրոբլեմների տնտեսաաշխարհագրական ասպեկտները: Աշխարհագրական միջավայր հասկացությունը, դրա փոփոխումը մարդկանց կողմից, դերը հասարակության զարգացման մեջ:		
Գնահատման մեթոդներն ու չափանիշները Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի 4 հարցի հիման վրա:		
Հիմնական գրականության ցանկ		

1.*Алисов Н.В., Хорев Б.С. Экономическая и социальная география мира, учебник для вузов. М. - 2003.*
2.Экономическая и социальная география, Основы науки, учебник для вузов. М. - 2004.
3.Скопин А.Ю. Введение в экономическую и социальную географию, учебник для вузов. М. - 2001.
4. Родионова И.А. Политическая карта мира, . ,- 2001.

0401/Բ25	ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ և ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ	2 կրեդիտ
2 ժամ	20/0/10	
3 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է ուսանողներին գիտելիքներ մատուցել պետական և մունիցիպալ կառավարման համակարգի էության, առանձնահատկությունների, պետական կառավարման նպատակների և խնդիրների, պետական կառավարման գործընթացի, պետական կառավարման սկզբունքների և օրենքների, տարածքային կառավարման և տարածքային քաղաքականության սկզբունքների, ՀՀ տարածքային կառավարման համակարգի և վարչատարածքային բաժանման վերաբերյալ::

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.
Գիտելիք և իմացություն

- կիմանա պետական և մունիցիպալ կառավարման տեսական և մեթոդաբանական հիմքերը,
- կիմանա պետական գործառույթների և քաղաքականության իրագործման գործընթացը,
- կիմանա օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների գործառույթները,
- կիմանա տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման սկզբունքները և օրինաչափությունները,
- կկարողանա ինքնուրույն գնահատել տարբեր տիպի պետական կառավարման համակարգերի առավելությունները թերությունները,
- կկարողանա սահմանազատել իշխանության տարբեր թևերի գործառույթները,
- կկարողանա ինքնուրույն գնահատել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման տարբեր մոդելների արդյունավետության աստիճանը և դրանց կիրառելիությունը ՀՀ-ում:

Համառոտ բովանդակությունը

Պետական և մունիցիպալ կառավարման հիմունքները դասընթացի առարկան, խնդիրները և կառուցվածքը: Պետությունը և նրա հատկանիշները: Պետությունների դասակարգումը: Պետության վարչաքաղաքական կառուցվածքը: Պետական կառավարման ենթահամակարգերը: Պետական կառավարման նպատակները, խնդիրները և գործընթացը: Պետական կառավարման սկզբունքները և օրենքները: Հանրային կառավարման համակարգը: Իշխանության կենտրոնացումը և ապակենտրոնացումը: Տարածքային կառավարումը և տարածքային քաղաքականությունը: Վարչատարածքային բաժանումը: ՀՀ տարածքային կառավարման համակարգը: Տեղական ինքնակառավարման էությունը: Տեղական ինքնակառավարման սկզբունքները: Տեղական ինքնակառավարման մարմինները և լիազորությունները:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի 4 հարցի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկը

1. Սուվարյան Յու.Մ. Մենեջմենթ, Եր.- 2009:
2.Օրդյան Է. Տեղական ինքնակառավարման հիմունքներ. կառավարչական հմտություններ, Եր. - 2002:

3. *Ղազարյան Է. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների* փոխհարաբերությունները ՀՀ-ում: Եր.- 2006:

0401/Բ14	ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ	4 կրեդիտ
4 ժամ	*40/0/20*	
3 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է սովորողին սովորեցնել ճգնաժամային կառավարման էությունը, ճգնաժամեր առաջացնող վտանգները և ճգնաժամային կառավարման ազդեցությունները, ճգնաժամեր առաջացնող վտանգների ընդհանուր սահմանումները, վտանգների դասակարգումն ըստ կանխման աստիճանի, այդ վտանգների միջև եղած կապերը, ինչպես նաև ճգնաժամերի կառավարման պետական միասնական համակարգն ու ճգնաժամային կառավարման և պետության զարգացման գործընթացների միջև գոյություն ունեցող փոխադարձ կապերը:		
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ➢ կիմանա ճգնաժամերի կառավարման պետական միասնական համակարգի մասին: ➢ կիմանա ճգնաժամային կառավարման գործընթացների դրական կամ բացասական ազդեցությունները պետության սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացի վրա: ***Ունակ կլինի.*** ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* ➢ տիրապետել պետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի հնարավոր դրական և բացասական ազդեցություններն ապագա ճգնաժամերի վրա տեղեկույթին: ✓ *(ընդհանրական կարողություններ)* ➢ ներկայացնել ճգնաժամային կառավարման պարզագույն մոդելը և վտանգների ընդհանուր նկարագրությունը:		
Համառոտ բովանդակություն Ճգնաժամային կառավարման էությունը: Ճգնաժամ հասկացության պարզաբանում: Ճգնաժամային կառավարման էության պարզաբանում: Ճգնաժամային կառավարման պարզագույն մոդելի ներկայացում: Ճգնաժամեր առաջացնող վտանգները և ճգնաժամային կառավարման ազդեցությունները: Ճգնաժամեր առաջացնող վտանգների ընդհանուր սահմանումը: Վտանգների դասակարգումն ըստ կանխման աստիճանի: Կառավարման ազդեցությունների բացահայտումը կանխվող, չկանխվող և մասնակի կանխվող վտանգների դեպքում: Այդ վտանգների միջև եղած կապերը: Հետևանքների տեսանկյունից բոլոր վտանգների ընդհանուր նկարագրության ներկայացում: Ճգնաժամերի կառավարման պետական միասնական համակարգ: Գործառույթային և տարածքային կառավարման ենթահամակարգերում կառավարման մակարդակներն ու մարմինները: Ճգնաժամային կառավարման և պետության սոցիալ-տնտեսական զարգացման միջև կապերը: Ճգնաժամային կառավարման դերը պետության կառավարման գործընթացում: Ճգնաժամային կառավարման և պետության զարգացման գործընթացների միջև գոյություն ունեցող փոխադարձ կապերը: Ճգնաժամային կառավարման գործընթացների դրական կամ բացասական ազդեցությունները պետության սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացի վրա: Պետության սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի հնարավոր դրական և բացասական ազդեցություններն ապագա ճգնաժամերի վրա:		
Գնահատման մեթոդներն ու չափանիշները ***Ընթացիկ քննություններ.*** Նախատեսված 2 ընթացիկ քննությունները բանավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ 2 միավոր:		

Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն.

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկ

1. *«Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենք:*
2. *«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենք:*
3. *Մաթևոսյան Հ.Շ. Ճգնաժամային կառավարում: Մենագրություն. Հեղ. հրատ., Եր., 2012-240 էջ:*
4. *Մաթևոսյան Հ. Շ. Ճգնաժամային կառավարման խաղեր: Ուսումնամեթոդական ձեռնարկ. Հեղ. հրատ., Եր., 2013-208 էջ:*

0401/Բ38	**ԱԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**	**5 կրեդիտ**
4 ժամ	*40/0/20*	
7 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	

Դասընթացի նպատակն է սովորողին ուսուցանել արտակարգ իրավիճակների հետևանքների մասին, որոնք բնորոշ են Հայաստանի Հանրապետության համար բնակչության, տնտեսական օբյեկտների և շրջակա միջավայրի խոցելիության վերաբերյալ: Տարբեր իրավիճակներում կազմակերպել և իրականացնել արտակարգ իրավիճակների հետևանքների կանխատեսման և գնահատման աշխատանքներ, կիրառելով համապատասխան մեթոդաբանությունը և նրա գործնական կիրառման հնարավորությունները:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կիմանա պետության կողմից կարճաժամկետ միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ նյութերի հավաքագրման և պլանների, ծրագրերի կազմման ձևերը:

Ունակ կլինի.

- ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*
- տիրապետել հետևանքների գնահատման տեքստային, գրաֆիկական փաստաթղթերի մշակման ձևերին:
- կիրառել ստացված մասնագիտական զիտելիքները տարբեր իրավիճակներում:
- ✓ *(ընդհանրական կարողություններ)*
- ձևավորել ԱԻ հետևանքների գնահատման, տվյալների բազայի ստեղծման, միջոցառումների իրականացման ունակություն:
- ձևավորել ԱԻ հետևանքների գնահատման միջոցառումների իրականացմանը ուղղված համալիր տեղեկատվական դաշտի կառուցման, վերլուծելու, սինթեզելու, այդ ուղղությամբ զիտելիքների գործնականում կիրառելու ունակություն:
- ձևավորել ԱԻ գնահատման ժամանակ թիմային աշխատանքի, տեղեկատվության կառավարման ունակություն:

Համառոտ բովանդակություն

Արտակարգ իրավիճակների հետևանքների գնահատման հիմնական հասկացությունները: Արտակարգ իրավիճակների հետևանքների գնահատման հիմնական ցուցանիշները: Արտակարգ իրավիճակների հետևանքների փորձագիտական գնահատման մեթոդաբանությունը: Արտակարգ իրավիճակների հետևանքների վրա ազդող հիմնական գործոնները: Կանխատեսվող վնասների գնահատում: Աղետների հետևանքների գնահատման վերլուծություն: Հետևանքների գնահատում աղետի գոտում: Արտակարգ իրավիճակների հետևանքների կանխատեսում: Հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների անձնագրերի դերը ԱԻ հետևանքների գնահատման օպերատիվության գործնթացում: Հետևանքների գնահատման տարբեր գործառույթային ենթահամակարգերի

համագործունեության պլանների մշակում: Երկրաշարժ, պատվարի վթար, ջրհեղեղ, սելավ: Հնարավոր հետևանքների գնահատման միջոցառումների պլանավորում:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Ընթացիկ քննություններ.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները բանավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն.

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկ

1. *Баринов А.В., Седнев, В.А., Шевчук А.Б., Харисов Г.Х., Кошевая Е.И. Опасные природные процессы, М. - 2009.*
2. *Մաթևոսյան Հ. Ճգնաժամային կառավարում, Մենագրություն, Եր., 2012. - 242 էջ:*
3. *Վ. Սարաֆյան Տարերաբանություն, Ուսումնական ձեռնարկ, Եր. - 2008:*

0401/Բ03	**ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**	**2 կրեդիտ**
2 ժամ	*20/10/0*	
7 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	

Դասընթացի նպատակն է սովորողին տալ գիտելիք աղետների ռիսկի գնահատման հիմնական հասկացությունների, վտանգի և խոցելիության գնահատման, վտանգների կանխատեսման, աղետների զարգացման փուլերի ու հետևանքների գնահատման, վտանգների քարտեզագրման ու դասակարգման մասին: Ծանոթացնել ռիսկի գնահատման և ռիսկի մակարդակի նվազեցման ուղղությունների հետ:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կիմանա աղետների ռիսկի գնահատման հիմնական հասկացությունների և ռիսկի մակարդակի նվազեցման ուղղությունների հետ:

Ունակ կլինի.

- ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*
- Ներկայացնել աղետների զարգացման փուլերն ու հետևանքների գնահատման ուղղությունները:
- ✓ *(ընդհանրական կարողություններ)*
- տիրապետել ռիսկի մակարդակի նվազեցման ուղղություններին:

Համառոտ բովանդակություն

Աղետների ռիսկի գնահատման հիմնական հասկացությունները: Վտանգի և խոցելիության գնահատում: Վտանգների կանխատեսում: Աղետների զարգացման փուլերը: Աղետների հետևանքների գնահատում: Վտանգների քարտեզագրում: Վտանգների դասակարգում: Վտանգների զարգացման սցենարների մշակում: Ռիսկի և խոցելիության վերլուծություն: Ռիսկի գնահատում: Ռիսկի մակարդակի նվազեցում:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի երեք տեսական հարցերի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկ

1. *Մաթևոսյան Հ.Շ. Աղետների կառավարման հիմնահարցեր: Գծապատկերային ուսումնական ձեռնարկ, Եր. - 2002:*

0401/B23	ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	3 կրեդիտ
3ժամ	*30/0/15*	
6 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	

Դասընթացի նպատակն է սովորողին տալ գիտելիք ռիսկի էության, գիտական սահմանումների վերլուծության, ընդհանրացումների, ռիսկի կառավարման մեխանիզմների մասին: Սովորողին ներկայացնել ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմը ՀՀ-ում: Ծանոթացնել ՀՀ-ում ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի (այսուհետև ԱՌՆԱՊ) ձևավորման անհրաժեշտությանը, նպատակներին ու խնդիրներին, ԱՌՆԱՊ-ի կառուցվածքին, խնդիրներին և դերին ճգնաժամային կառավարման գործընթացում:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- ➢ կիմանա ռիսկի կառավարման գործընթացում ռիսկի գնահատման դերի մասին:
- ➢ կիմանա ՀՀ-ում ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի ձևավորման անհրաժեշտության, նպատակների ու խնդիրների մասին:

Ունակ կլինի.

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- ➢ որոշել ռիսկի գնահատման համար անհրաժեշտ բաղադրիչները:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- ➢ տիրապետել ռիսկի կառավարման մեխանիզմներին:
- ➢ պարզաբանել ռիսկի կառավարման մեխանիզմները:

Համառոտ բովանդակություն

Ռիսկի էությունը: Ռիսկերի գիտական սահմանումների վերլուծություն, ընդհանրացում: Միջազգային կազմակերպությունների կողմից տրված ռիսկերի սահմանումների վերլուծություն: Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառում ռիսկի ընդունելի սահմանման ընտրություն և էության պարզաբանում: Ռիսկի կառավարման էությունը, գիտական սահմանումների վերլուծություն: Ռիսկի կառավարման գործընթացում ռիսկի գնահատման դերը: Ռիսկի գնահատման համար անհրաժեշտ բաղադրիչները: Կառավարման համակարգի կարողությունների դիտարկումը որպես ռիսկի կառավարման կարևոր բաղադրիչ: Ռիսկի կառավարման նպատակի ձևակերպում: Ռիսկի կառավարման պարզագույն մոդելի ներկայացում: Ռիսկի կառավարման մեխանիզմները: Ռիսկի կառավարման համար անհրաժեշտ գործընթացների խմբավորում համապատասխան ենթահամակարգերում: Ռիսկի կառավարման համար անհրաժեշտ տվյալների շտեմարանների դիտարկում և վերլուծություն: Ռիսկի կառավարման մեխանիզմների պարզաբանում: Ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմը ՀՀ-ում: ՀՀ-ում ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի (այսուհետև ԱՌՆԱՊ) ձևավորման անհրաժեշտությունը, նպատակները, խնդիրները: ԱՌՆԱՊ-ի ստեղծման նախադրյալների վերլուծությունը: ԱՌՆԱՊ-ի կառուցվածքը, խնդիրները և դերը ճգնաժամային կառավարման գործընթացում:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Ընթացիկ քննություններ.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները բանավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն.

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկ 1. *Մաթևոսյան Հ.Շ. Ճգնաժամային կառավարում: Մենագրություն. Հեղ. հրատ., Եր.: 2012-240 էջ:* 2. *Մաթևոսյան Հ. Շ. Ճգնաժամային կառավարման խաղեր: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Հեղ. հրատ., Եր.: 2013-208 էջ:*

1005/Բ16	ՔՊ ԵՎ ԱԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ	5կրեդիտ
4 ժամ	*30/20/10*	
7 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է սովորողին տալ գիտելիք տարբեր իրավիճակների (Կոնկրետ տարածքի համար հարձակման անմիջական սպառնալիք, պատերազմական իրավիճակ, հանկարծակի հարձակման իրավիճակ, բնական, տեխնածին վտանգներից առաջացած իրավիճակներ, հոգեբանական զենքի ազդեցության վտանգներ, տեղեկատվական զենքի կիրառման վտանգներ և այլն) վերաբերյալ: Ծանոթացնել յուրաքանչյուր իրավիճակի վերլուծության, գնահատման, որոշումների ընդունման, խմբային վերլուծությանառանձնահատկությունների հետ:
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ➢ կիմանա պատերազմի ժամանակ տարբեր իրավիճակների առանձնահատկությունների մասին: ***Ունակ կլինի.*** ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* ➢ որոշել տարբեր իրավիճակներում առաջացած վտանգները և կատարել գնահատում: ✓ *(ընդհանրական կարողություններ)* ➢ տիրապետել յուրաքանչյուր իրավիճակի վերլուծության, գնահատման, որոշումների ընդունման առանձնահատուկ մեթոդների ընտրության, խմբային վերլուծության գործընթացներին: ➢ հիմնավորել ընտրված մեթոդները: ➢ կիրառել ուսումնառության ընթացքում ստացած գիտելիքները մասնագիտական գործունեության ընթացքում:
Համառոտ բովանդակություն Տարբեր իրավիճակների խաղարկում (Կոնկրետ տարածքի համար հարձակման անմիջական սպառնալիք, պատերազմական իրավիճակ, հանկարծակի հարձակման իրավիճակ, բնական, տեխնածին վտանգներից առաջացած իրավիճակներ, հոգեբանական զենքի ազդեցության վտանգներ, տեղեկատվական զենքի կիրառման վտանգներ և այլն): Յուրաքանչյուր իրավիճակի վերլուծություն, գնահատումներ, որոշումների ընդունման դրանց յուրահատուկ մեթոդների ընտրություն, խմբային վերլուծություն, ընտրված մեթոդների հիմնավորում:
Գնահատման մեթոդներն ու չափանիշները Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի երեք տեսական հարցերի հիման վրա:
Հիմնական գրականության ցանկ *1.Մաթևոսյան Հ. Ճգնաժամայնի կառավարում, Մենագրություն, Եր., 2012. - 240 էջ:* *2.Մաթևոսյան Հ. Կառավարման խաղեր, Եր. - 2014:*

1004/Բ01	ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՐԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ	4 կրեդիտ
4 ժամ	*20/40/0*	
5 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է սովորողին տալ գիտելիք երկրի մակերևույթի արտապատկերման ձևերի և եղանակների մասին (հորիզոնական հարթության վրա): Ներկայացնել քարտեզի առանձնահատկությունները, գեոիդի պատկերը, հորիզոնական արտապատկերումը: Ծանոթացնել գլոբալ դիրքորոշման համակարգերի (ԳԴՀ) հետ:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կիմանա երկրի մակերևույթի արտապատկերման ձևերը և եղանակները հորիզոնական հարթության վրա
- կիմանա Գլոբալ դիրքորոշման համակարգերի (ԳԴՀ) մասին:

Ունակ կլինի.

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- Որոշել կոորդինատները ԳԴՀ-ների միջոցով:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- տիրապետել գեոինֆորմացիոն տեղեկատվական համակարգերի խնդիրների և քարտեզների թվայնացման տեխնիկային:

Համառոտ բովանդակություն

Քարտեզագրություն: Երկրի մակերևույթի արտապատկերման ձևերը և եղանակները հորիզոնական հարթության վրա: Քարտեզի առանձնահատկությունները և պրոյեկցիան: Գեոիդի պատկերը: Հորիզոնական արտապատկերում: Քարտեզագրական պրոյեկցիաների դասակարգումը: Տեղագրական քարտեզների պրոյեկցիան: Կտրատում և անվանակարգություն: Հարթ ուղղանկյուն կոորդինատներ: Կոորդինատային ցանցի գծերի թվագրումը:

Գեոինֆորմացիոն տեղեկատվական համակարգերի խնդիրները և քարտեզների թվայնացումը: Գեոինֆորմատիկայի ընդհանուր դրույթները: Գեոինֆորմացիոն տեղեկատվական համակարգերի (ԳՏՀ) բաղադրամասերը: Վեկտորական և տարածքային մոդելներ: Խնդիրներ որոնք որոշում է ԳՏՀ-ն:

Գլոբալ դիրքորոշման համակարգերի դերը քարտեզագրական աշխատանքների կատարման գործընթացում: Գլոբալ դիրքորոշման համակարգեր (ԳԴՀ): Կոորդինատների որոշումը ԳԴՀ-ների միջոցով: Համակարգի սեգմենտացիաները: Դիրքի որոշումը ու սխալների աղբյուրները: ԳԴՀ ընդունիչներ:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի երեք տեսական հարցերի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկ

1. *Խաչատրյան Մ.Մ. Տոպոգրաֆիայի հիմունքներ, Եր. - 1974:*
2. *Салищев К.А. Картография. – М. - 1982.*
3. *Вахрамеева Л.А. Картография. – М. - 1981.*

1005/Բ21	ՔՊ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	4 կրեդիտ
4 ժամ	*40/0/20*	
7 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է սովորողին սովորեցնել քաղաքացիական պաշտպանության կազմակերպման և վարման ձևերի, ժամանակակից պատերազմների դեպքում բնակչության

և նյութական արժեքների (տնտեսության) պաշտպանության արդյունավետության, ՔՊ համակարգի (որպես ազգային անվտանգության բաղկացուցիչ մասի) ղեկավարների և ղեկավար մարմինների պատրաստվածության աստիճանի վերաբերյալ: Ձևավորել գիտելիքներ տարբեր իրավիճակներում բնակչության և տնտեսության պաշտպանությանն ուղղված լ քաղպաշտպանության միջոցառումների, անձի, հասարակության և պետության անվտանգության ապահովման հիմքերի մասին:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կիմանա ՔՊ միջոցառումները պլանավորելու, կազմակերպելու և իրականացնելու առանձնահատկությունները:

Ունակ կլինի

- ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*
- ✓ տիրապետել բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը վերլուծելու, սինթեզելու, այդ ուղղությամբ գիտելիքների գործնականում կիրառելու հմտություններին: *(ընդհանրական կարողություններ)*
- յուրացնել ՔՊ միջոցառումների ժամանակ թիմային աշխատանքի, տեղեկատվության կառավարման հիմնական ուղղություններին:
- ցույց տալ գիտելիքների մասնագիտական կիրառումը կոնկրետ իրավիճակում:

Համառոտ բովանդակություն

ՔՊ տակտիկական պատրաստություն (մարտավարություն) առարկայի հիմունքները: ՔՊ հայեցակարգը: Մարզի ՔՊ խնդիրները, ուժերը, կառուցվածքը: Մարզի ՔՊ ղեկավարումը: Մարզի համայնքներում ՔՊ կազմակերպումը և վարումը: Մարզի տնտեսության օբյեկտներում ՔՊ կազմակերպումը: Մարզի ՔՊ վարումը հակառակորդի հարձակման անմիջական վտանգի դեպքում և հարձակումից հետո: ՔՊ անցումը պատերազմական իրադրության: Մարզի ՔՊ վարումը ՔՊ համակարգը պատերազմական իրադրության անցնելուց հետո: ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչության (ՔՊ շտաբ) նշանակությունը, դերը և խնդիրները ՔՊ կառավարման (ղեկավարման) գործում: Մարզային փրկարարական վարչության աշխատանքների կազմակերպումը: Մարզային փրկարարական վարչության կողմից մարզի բնակչության և նյութական արժեքների պաշտպանության կազմակերպումը: Զինվորական հրամանատարության հետ փոխգործողության պլանի մշակումը: Մարզի ՔՊ միջոցառումների պլանավորումը և պլանի մշակման կազմակերպումը: ՔՊ միջոցառումների և ուժերի գործողությունների ապահովման կազմակերպումը:

ՔՊ միջոցառումների և ուժերի գործողությունների բազմակողմանի ապահովման կազմակերպումը: ՔՊ ուժերի ղեկավարումը: ՔՊ հիմնահարցերով մարզի կառավարման մարմինների, ուժերի և միջոցների պատրաստումը, բնակչության ուսուցումը: Կառավարման մարմիններում, տնտեսության օբյեկտներում ՔՊ վիճակի ստուգման և գնահատման կարգը:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի երեք տեսական հարցերի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկ

1. *ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 30- «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը» սահմանելու մասին № 134-Ն որոշումը:*
2. *Քաղաքացիական պաշտպանության մասին ՀՀ օրենքը, 2002 թ., մարտի 5:*
3. *Гражданская оборона оласти, Военное издательство, 1985.*

1004/Բ16	ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ	4 կրեդիտ
4 ժամ	*30/20/10*	
4 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	

Դասընթացի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ փրկարարական գործի, որոնողափրկարարական, վթարափրկարարական աշխատանքների էության, փրկարարական աշխատանքներին մասնակցող ուժերի և միջոցների ներգրավման կարգի, փրկարարական աշխատանքների կազմակերպման ձևերի, փրկարարական աշխատանքների ապահովման, ինչպես նաև հետախուզության կազմակերպման ու նյութատեխնիկական ապահովության կազմակերպման վերաբերյալ:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կիմանա փրկարարական աշխատանքներին մասնակցող ուժերի և միջոցների ներգրավման կարգի ու փրկարարների կենսապահովման առանձնահատկությունների մասին:

Ունակ կլինի

- ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*
- տիրապետել փրկարարական աշխատանքների կազմակերպման ձևերի ու նյութատեխնիկական ապահովության կազմակերպման հմտություններին:
- ✓ *(ընդհանրական կարողություններ)*
- յուրացնել այլ ծառայությունների հետ համագործակցության կազմակերպման, առկա ուժերի խմբավորման, ղեկավարման կազմակերպման, ուժերի տեղափոխման և աղետի գոտում տեղաբաշխման գիտելիքները:
- ներկայացնել տեսական գիտելիքների մասնագիտական կիրառումը կոնկրետ իրավիճակում:

Համառոտ բովանդակություն

Փրկարարական գործի էությունը: Որոնողափրկարարական, վթարափրկարարական աշխատանքների էությունը: Փրկարարական աշխատանքներին մասնակցող ուժերի և միջոցների ներգրավման կարգը: Փրկարարների կենսապահովման կազմակերպումը: Փրկարարական աշխատանքներին ներկայացվող պահանջները, աշխատանքների կազմակերպումը քիմիական վտանգավոր օբյեկտներում, փլատակներում, ջրածածկված գոտում, ձնափլվածքներում, տրանսպորտային վթարների դեպքում: Փրկարարական աշխատանքների կազմակերպման ձևերը: Համագործակցության կազմակերպումն այլ ծառայությունների հետ, առկա ուժերի խմբավորումը, ղեկավարման կազմակերպումը, ուժերի տեղափոխումը և աղետի գոտում տեղաբաշխումը: Փրկարարական աշխատանքների ապահովումը: Հետախուզության կազմակերպումը: Նյութատեխնիկական ապահովության կազմակերպումը:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Ընթացիկ քննություններ.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները բանավոր են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ 2 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Եզրափակիչ քննություն.

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 3, 3, 4 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Հիմնական գրականության ցանկ

1. Մաթևոսյան Հ. Աղետների կառավարման տարրեր, ՃԿՊԱ, Եր. - 2001:
2.SDC «ԱՐՁԱԳԱՆՔ» Ձեռնարկ:

3. *Fire Service SEARCH And RESCUE, - 2005:*

0401/Բ07	ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ	4 կրեդիտ
4 ժամ	*40/0/20*	
3 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	

Դասընթացի նպատակն է ուսանողներին սովորեցնել արտակարգ իրավիճակներում և ճգնաժամերի դեպքում արագ կողմնորոշվել, ճիշտ և նպատակային որոշումներ կայացնել: Այս առարկան կոչված է ճգնաժամերի կանխատեսման, կանխարգելման, ռիսկերի և խոցելիության նվազեցման, վերականգնման ու փոխհատուցման աշխատանքներին համակարգային մոտեցումներին, միաժամանակ, հնարավորություն է տալիս իրականացնել իրավիճակների գնահատում, զանազան վտանգների բնութագրում, գնահատում և այլն:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- Կառավարման որոշումների էության, տարբեր սահմանումների վերլուծության, որոշումների ընդունման գործընթացի կառուցվածքի, կառավարման որոշումների վրա ազդող գործոնների մասին:

Ունակ կլինի.

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- վերլուծել տարբեր սահմանումներ:
- տիրապետել կառավարման որոշումներին ներկայացվող պահանջները:
- մշակել որոշման ընդունման մեթոդներ կախված հիմնախնդրի բնույթից:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- տիրապետել որոշման ընդունման գործընթացի կառուցվածքին և որոշումների վրա ազդող գործոններին:
- տիրապետել օպտիմալության ցուցանիշների որոշմանը կոնկրետ արտակարգ իրավիճակի դեպքում:

Համառոտ բովանդակություն

Կառավարման որոշումների էությունը: Կառավարման որոշումների դերը կառավարչական գործընթացում, որոշման ընդունումը որպես կառավարման ընդհանուր գործառույթ: Տարբեր սահմանումների վերլուծություն: Որոշման ընդունման գործընթացի կառուցվածքը և որոշման էության դիտարկումը տարբեր տեսանկյուններից: Կառավարման որոշումներին ներկայացվող պահանջները: Կառավարման որոշումների վրա ազդող գործոնները և դրանց դերն օպտիմալ որոշումների ընդունման գործում: Կառավարման որոշումներին ներկայացվող պահանջները և օպտիմալ լինելու պահանջի վերլուծությունը: Օպտիմալ որոշումների ընդունման մեթոդները: Որոշման ընդունման մեթոդները կախված հիմնախնդրի բնույթից: Ստանդարտ հիմնախնդիրներ, անճանաչելի հիմնախնդիրներ, թույլ ճանաչելի հիմնախնդիրներ, ճանաչելի հիմնախնդիրներ: Արտակարգ իրավիճակների դիտարկում որպես վերոհիշյալ հիմնախնդիրներ և որոշման ընդունման մեթոդների ընտրություն, օպտիմալության ապահովման համար: Կոնկրետ արտակարգ իրավիճակի դիտարկում /երկրաշարժի օրինակով/ և օպտիմալության ցուցանիշների որոշում:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Քննության անցկացման ձևը.

Ընթացիկ քննություն.

Նախատեսված 1 ընթացիկ քննությունը բանավոր է, 8 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն. Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ 3, 3, 4 միավոր:
Հիմնական գրականության ցանկ. *1. Մաթևոսյան Հ., Ասատրյան Օ. Կառավարչական որոշումների ընդունում: Ուսումնական ձեռնարկ: ՃԿՊԱ, Եր., 2008 - 40 էջ:* *2. «Մենեջմենթ» Յու. Մ. Խաչատրյանի ընդհանուր խմբագրությամբ: «Տնտեսագետ», Եր., 2002. - 560 էջ:* *3. Եղիազարյան Վ. «Կառավարման որոշումների ընդունում» /դասախոսությունների սեղմագիր/:*

1005/Բ27	**ՔՊ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ**	**4 կրեդիտ**
4 ժամ	*40/0/20*	
7 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	
Դասընթացի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ հանրապետությունում հնարավոր իրավիճակներում գործող ուժերի, ուժերի ներգրավման կազմակերպման և աշխատանքների կազմակերպման մասին: Ծանոթացնել քաղաքացիական պաշտպանության ուժերի գործողությունների ապահովման տեսակներին, տեխնիկայի և սարքավորումների, դրանց դասակարգման, նշանակության, ընդհանուր կառուցվածքի, ապահովման և չափաքանակների հետ:		
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ➢ կիմանա տեխնիկայի և սարքավորումների նշանակության և կիրառման ոլորտների, քաղաքացիական պաշտպանության տեսակետից տարածքների, բնակավայրերի, պաշտպանական կառույցների տեխնիկական պատրաստության պահանջների մասին: ***Ունակ կլինի*** ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* ➢ տիրապետել քաղաքացիական պաշտպանության ուժերի գործողությունների ապահովման տեսակների և եղանակների հետ: ➢ համադրել անհրաժեշտ հագեցվածությամբ ուժերի կիրառման վերաբերյալ տվյալները: ✓ *(ընդհանրական կարողություններ)* ➢ կիրառել ուսումնառության ընթացքում ստացած գիտելիքները մասնագիտական գործունեության ընթացքում: ➢ յուրացնել քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման համար քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և փրկարար ուժերի անհրաժեշտ տեխնիկական միջոցներով հագեցնելու հիմնախնդիրները:		
Համառոտ բովանդակություն Քաղաքացիական պաշտպանության ուժերի գործողությունների ապահովման տեսակները: ՔՊ ստորաբաժանումների գործողությունների ապահովման տեսակների կազմակերպման ուղղությունները: Անվավոր և թրթուռավոր շասսիների, վթարա-փրկարարական տեխնիկայի, ավտոմոբիլային, ինժեներական տեխնիկայի և ՃՔԿ պաշտպանության ստորաբաժանումների հատուկ մեքենաների նշանակությունն ու դասակարգումը: Կապի և թիկունքային տեխնիկայի դասակարգումը: Հրշեջ տեխնիկայի հիմնական միջոցների դասակարգումը, նշանակությունը: Հրշեջ նավերի, ուղղաթիռ և ինքնաթիռների նշանակությունը, դասակարգումը: Հրշեջ մոտոպոմպերի կիրառման ոլորտները, նշանակությունը: Մոբիլ ռոբոտատեխնիկական համակարգերի նշանակությունը, կիրառման ոլորտները, դասակարգումը: Ռոբոտատեխնիկական համակարգերի զարգացման		

հիմնական ուղղությունները: Ճանապարհա-կամրջաշինարարական (մեքենայացված կամուրջներ) միջոցների նշանակությունը, հիմնական բնութագրերը: Հողային աշխատանքների տեխնիկական միջոցների և դաշտային ջրամատակարարման միջոցների նշանակությունը, դասակարգումը: Տարածքների, բնակավայրերի նախագծման ինժեներատեխնիկական միջոցառումները: Բնակավայրերի էներգամատակարարմանը, ջրամատակարարմանը, գազամատակարարմանը ներկայացվող ինժեներատեխնիկական պահանջները: Պաշտպանական կառույցների տեխնիկական պատրաստության հարցերը:
Գնահատման մեթոդներն ու չափանիշները Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի երեք տեսական հարցերի հիման վրա:
Հիմնական գրականության ցանկ *1.Борисов А.В., Носков С.С., Машков К.Ю. Выбор и оценка системы энергообеспечения мобильных роботов. Учебное пособие. - 2003.* 2.*Северов Н.В. Оценка применения робототехники в ЧС и при ликвидации последствий террористических актов. Учебное пособие. – 2002.*

0401/Բ36		**ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**	**2 կրեդիտ**
2 ժամ	*16/0/14*		
5 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց		
Դասընթացի նպատակն է քաղաքական զարգացումների ներկայիս փուլում ազգային անվտանգության ապահովումը հանդիսանում է ցանկացած պետության ռազմավարական նշանակության կարևորագույն խնդիր, ինչի լուծման համար անհրաժեշտ են մասնագիտական համապատասխան որակավորում ունեցող ղեկավար մասնագետներ: «Պետական և ազգային անվտանգություն» դասընթացը պատրաստվել է հայրենական և արտասահմանյան գիտնականների հետազոտությունների արդյունքների ընդհանրացման հիման վրա: Դասընթացի ծրագիրը հիմնականում կրում է տեսական-հիմնախնդիրային բնույթ և ենթադրում է համաշխարհային քաղաքականության արդի խնդիրների կիրառական վերլուծություն: «Պետական և ազգային անվտանգության» դասընթացի նպատակն է ուսուցանել համաշխարհային քաղաքականությունում ազգային անվտանգության ապահովման առանցքային հիմնախնդիրները, ինչպես նաև դրանց ապահովման հիմնական հայեցակարգերն ու մոտեցումները: Դասընթացը նախատեսված է անվտանգության բնագավառում գիտելիքների և տեսակետների կայուն համակարգի ձևավորման համար: Ազգային անվտանգության հիմնախնդիրների ստեղծագործական յուրացումը հնարավորություն է տալիս ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում անվտանգության առանձնահատուկ խնդիրների մասնագիտացված լուծման: Նկատի ունենալով այն իրողությունը, որ ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի բակալավրիատում սովորում են հանրակրթական ամենատարբեր գիտելիքներ և նախասիրություններ ունեցող ուսանողներ, և քանի որ սույն դասընթացի շրջանակներում պետք է տիրապետեն ոչ միայն պետական և ազգային անվտանգության ապահովման տեսական հարցերին, արդի հիմնախնդիրներին և դրանց լուծման ուղիներին և			

ուղղություններին, այլև ձեռք բերեն գործնական հմտություններ և կարողանան լուծել իրադրային խնդիրներ, ուստի, դասընթացը կազմելիս մեր առջև նպատակ ենք դրել դասընթացին վերաբերող տեսական հարցերն ամրապնդել ինտերակտիվ գործնական պարապմունքներով՝ ներառելով նաև իրադրային խնդիրների լուծումներ և դրանց շուրջ քննարկումներ:
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. *Գիտելիք և իմացություն* ➢ ազգային անվտանգության և նրա տարատեսակների տեսական հիմունքները, ➢ ազգային շահերի ու սպառնալիքների /արտաքին և ներքին/ ձևավորման մեխանիզմները և բովանդակությունն, ինչպես նաև դրանց փոխհամագործակցության բնույթը, ➢ ազգային անվտանգության ապահովման համակարգի կառուցվածքը, ֆունկցիաները, ուժերի և միջոցների կազմը, ինչպես նաև օրենսդրական ակտերը և իրավա-նորմատիվային հիմքերը: *Ունակ կլինի* ➢ վերլուծել և կանխատեսել համաշխարհային ռազմաքաղաքական զարգացումները, տարածաշրջանում և հասարակությունում սոցիալ-քաղաքական գործընթացները, ➢ կազմակերպել իրավիճակի մոնիտորինգ և ապակայունացնող գործոնների վերաբերյալ համապատասխան տեղեկությունների հավաքագրում ու համադրում, ➢ բացահայտել և ձևավորել անհատի, հասարակության և պետության շահերը, առանձնացնել կենսունակության համար հույժ կարևոր շահերը և դասակարգել ըստ առաջնահերթության, ➢ վերլուծել և կանխատեսել հավանական և իրական սպառնալիքների զարգացման դինամիկան:
Համառոտ բովանդակություն ➢ Ազգային անվտանգության ընդհանուր տեսության մեթոդաբանական հիմունքները, ➢ Ազգային անվտանգության համակարգը, ➢ ՀՀ ազգային անվտանգության ապահովումը, ➢ Ազգային անվտանգության հիմնախնդիրների մեթոդաբանական վերլուծությունը, ➢ ՀՀ ազգային անվտանգության ապահովման աշխարհաքաղաքական պայմանները:
Գնահատման մեթոդներն ու չափանիշները Քննության անցկացման ձևը՝ 2 ընթացիկ և 1 եզրափակիչ քննություն: Գնահատումն իրականացվում է Ակադեմիայում ընդունված կարգին համապատասխան, 20 բալանոց համակարգով: Դասընթացի շրջանակում ուսանողներ կատարում են ինքնուրույն անհատական աշխատանք՝ ռեֆերատի ձևով, որի կատարման ընթացքը ստուգվում է միջանկյալ քննությունների ընթացքում, իսկ եզրափակիչ քննության ժամանակ այն քննական տոմսին հանդես է գալիս որպես 3-րդ հարց՝ ռեֆերատի ներկայացում
Հիմնական գրականության ցանկ *1. ՀՀ սահմանադրություն (փոփոխություններով). «Դաշտ. Տեղեկագիր», Եր. -2006:* *2. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն.*

Հայկական բանակ, Եր.- 2007:
3. *Քոթանջյան Հ.Ս. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության շուրջ. Հայկական բանակ (գիտավերլուծական ամսագիր), No3, Եր.-2006:*
4. *Քոթանջյան Հ.Ս. ՀՀ ազգային անվտանգության քաղաքակրթական հիմքերը. Հայկական բանակ (գիտավերլուծական ամսագիր), No 2, Եր.-2006:*
5. *Շահգելդյան Մ. Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձեւավորումը, առաջնահերթությունները. «Նորավանք», Եր. – 2003:*
6. *Մարգարյան Մ.Մ. Քաղաքական ընտրանին և ժողովրդավարական անցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Պետական ծառայություն, Եր., 2006 – 391 էջ:*
7. *Հարությունյան Գ. «Աջարական ճգնաժամը՝ տարածաշրջանային անվտանգության համատեքստում.: 21-րդ դար. «Նորավանք», No1, Եր.-2004:*
8. *Մարկոսյան Ա. Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. 21-րդ դար. «Նորավանք», No3, Եր.-2004:*
9. *Քոթանջյան Հ. Ս. Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում. -Եր.: ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ, 2008. – 604 էջ:*
10. *Մարգարյան Մ. Համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման հիմնախնդիրները եւ, Հայկական աշխարհ, - Հայկական բանակ ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ԱՌՀԻ ռազմագիտական հանդես, No1- 2, 2011, 116 – 129 էջ:*
11. *Соловьев А. И. Политология: Политическая теория, политические технологии: Аспект Пресс, М.: 2003. - 559 с.*
12. *Хейвуд Э. Политология: Учебнник для студентов вузов / Пер. с англ. под. ред. Г.Г. Водолазов, В.Ю. Бельского. - М.: ЮНИТИ - ДАНА, 2005. - 544 с.*
13. *Современная политическая теория. (Автор - составитель Д. Хэлд) / Пер. с англ. под общ. ред. В. И. Даниленко. - М.: NOTA BENE, 2001. - 480 с.*
14. *Мир политической науки. Учебник. В 2 - х кн. Кн 1. Категории / А.Ю. Мельвиль, М.Г. Миронюк, Т.В. Шмачкова и др.; отв. ред. А.Ю. Мельвиль. Моск. Гос. ин-т междунар. отношений (МГИМО - Университет) МИД России. – М.: Просвещение, 2004. – 796 с.*
15. *Ярочкин В.И. Информационная безопасность: Учебник для вузов. - 5-е изд. Академический Проект, М.: 2008. – 544 с.*
16. *Панарин А.С. Политология. О мире политики на Востоке и Западе. Учебное пособие, М.- 1999.*
17. *Арутюнян А.Э. Учебно-методическое пособие «Основы терии национальной безопасности». Изд-во РАУ, Ер. - 2015.*
18. *Прохожев А.А. Общая теория национальной безопасности: Учебник. М. - 2002.*

Լրացուցիչ գրականություն

1. *Политика администрации Б.Клинтона в области национальной безопасности. М.- 1996.*
2. *Возжеников А.В., Прохожев А.А. Государственное управление и национальная безопасность*

России. М. - 1999.
3.Рыжак Н.И. Правовое регулирование деятельности спецслужб в системе обеспечения национальной безопасности РФ. М. - 2000.
4.Возжеников А.В., Прохожев А.А. Система жизненно важных интересов РФ: сущность, содержание, классификация, механизм согласования. М. - 1998.
5.Возжеников А.В. Национальная безопасность России: методология исследования и политика обеспечения. М. - 2002.
6.Правоохранительные органы РФ. Т. 1,2. М. - 1999.
7.Барынькин В.М. Теоретико-методологические вопросы повышения эффективности мер по разрешению современных военных конфликтов. М. - 1997.
8.Кнорр К. Военный потенциал государств. М. - 1960.
9.Владимиров В.А., Воробьев Ю.Л. Управление риском. Риск, устойчивое развитие, синергетика. М.- 2000.
10.Дугин А.Г. Основы геополитики. Геополитическое будущее России. М. - 1997.
11.Колосов В.А., Мироненко Н.С. Геополитика и политическая география: Учебник для вузов. М. - 2001.
12.Нартов Н.А. Геополитика: Учебник для вузов. М. - 1999.
13.Бжезинский З. Великая Шахматная доска. Господство Америки и сго геостратегические императивы. М. - 1998.
14.Гаджиев К.С. Геополитика. М.- 1997.
15.Дергачев А. Геополитика: Учебное пособие. Киев. - 2000.
16.Кисинджер Г. Дипломатия. М.- 1997.
17.Проскурин С.А. Военная сила в международных отношениях. М.- 1989.
18.Поздняков Э.А. Баланс сил в мировой политике: теория и практика. М.- 1993.

0401/Բ08	ԿԻՐԱՌԱԿԱՆ ԵՐԿՐԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ	4 կրեդիտ
4 ժամ	*30/10/20*	
6 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է՝

1. Մասնագետների կայացման գործընթացում բնաճանաչողական գիտելիքների և ակնադիտական ուսումնասիրությունների հմտությունների ձևավորում:
2. Ծանոթացնել ուսանողներին երկրաբանության հիմունքների հետ:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- ✓ Երկրագնդի բնութագրերի, դրանց չափորոշիչների մասին
- ✓ Երկր մոլորակի հիմնական հատկանիշների մասին
- ✓ Երկրաբանական գործընթացների մասին

Ունակ կլինի

- ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*
- ➢ Երկրագնդի բնութագրերի, դրանց չափորոշիչների տարբերակում
- ➢ Երկր մոլորակի հիմնական հատկանիշների նույնականացում
- ➢ Երկրաբանական գործընթացների դիտարկում

✓ *(ընդհանրական կարողություններ)* ➢ Երկրագնդի բնութագրերի, դրանց չափորոշիչների հաշվարկում ➢ Երկր մոլորակի հիմնական հատկանիշների նույնականացման վերլուծություն ➢ Երկրաբանական գործընթացների դիտարկում, գնահատու և համեմատական վերլուծություն
Համառոտ բովանդակությունը Երկրաբանությունը գիտություն է Երկրի մասին: Ժամանակակից երկրաբանությունը ուսումնասիրում է Երկրի կազմը, կառուցվածքը և պատմությունը, ինչպես նաև երկրակեղևի ձևավորման գործառույթների օրինաչափությունները, ուսումնասիրում է երկրակեղև կազմող ապարների միներալների և բյուրեղների առանձնահատկությունները ու հանքային օգտակար հանածոների հիմնական բնութագրերը, դրանց կիրառությունը: Առանձնակի ուշադրություն է դարձվում երկրաբանության ճանաչողական հատկանիշներին, իր թեմատիկ բազմազանության մեջ, նշելով երկրաբանական մի շարք գիտությունների փոխկապակցվածությունը, ինչպես նաև արտածին և ներծին պրոցեսների վրա; Թեմաների շրջանակը՝ ➢ Երկրաբանության հիմնահարցեր; ➢ Երկրագնդի առաջացումը, ձևը, չափսերը և տարիքը; ➢ Երկրադինամիկական գործառույթներ և հրաբխականություն; ➢ Արտածին երկրաբանական գործառույթներ; ➢ Դաշտային երկրաբանական և երկրաֆիզիկական աշխատանքներ;
Գնահատման մեթոդները և չափանիշները **Ստուգարքի անցկացման ձևը.** Կիսամյակի ընթացքում նախատեսված է 2 ստուգում՝ ընթացիկ և ամփոփիչ: Յուրաքանչյուրը գնահատվում է ստուգված կամ չստուգված: Ցանկացած մեկից դրական գնահատական ստանալու դեպքում ուսանողը համարվում է ստուգարքը հանձնած: Ընթացիկ ստուգումնն իրականացվում է անհատական (ինքնուրույն) աշխատանքների հիման վրա: Ամփոփիչ ստուգման պարագայում ուսանողների համար դասընթացի ավարտին կազմակերպվում է բանավոր հարցում:
Հիմնական գրականության ցանկը 1. *Գյուրջինյան Զ.Գ., Չատինյան Հ.Գ. Ճարտարագիտական երկրաբանության հիմունքներ Վան Արյան Եր.- 2001:* 2. *Առաքելյան Ս.Ա. Ընդհանուր երկրաբանություն ՀՀ ԳԱԱ էկոնոսֆերային ՀԿ հրատարակ. Եր.- 2006:*

0401/Բ21	**ՄԻԿՐՈԷԿՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**	**4 կրեդիտ**
4 ժամ	*40/0/20*	
6 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	
Դասընթացի նպատակն է սովորողին տալ անհրաժեշտ գիտելիքներ ձեռնարկատիրական գործունեության, նրա էության, ձևերի և առանձնահատկությունների, ինչպես նաև արտադրության ծախքերի, ֆիրմայի տնտեսական հավասարակշռության, սպառողական վարքագծի տեսության ու միկրոտնտեսագիտական կարգավորման մեխանիզմների մասին:		
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ➢ կյուրացնի միկրոտնտեսագիտության հիմունքները:		

Ունակ կլինի

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

➢ հասկանալ ձեռնարկատիրական գործունեության, արտադրության ծախքերի, ֆիրմայի տնտեսական հավասարակշռության մասին հիմնական հասկացությունները, զարգացման օրինաչափություններ:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

➢ յուրացնել միկրոտնտեսական կարգավորման մեխանիզմները:

Համառոտ բովանդակություն

Ձեռնարկատիրական գործունեությունը, նրա էությունը, ձևերը և առանձնահատկությունները: Արտադրության գործոնները և սահմանային արտադրողականության տեսությունը: Գործոնային եկամուտների ձևավորումը և նրանց բաշխումը: Արտադրության ծախքերը և ֆիրմայի տնտեսական հավասարակշռությունը: Արտադրության գործոնների նկատմամբ գնի ձևավորումը: Անհատական վերարտադրությունը և ձեռնարկության ինվեստիցիոն ռեսուրսների շարժումը: Սպառողական վարքագծի տեսությունը: Տնային տնտեսության նոր տնտեսագիտությունը: Ֆիրմայի ալտերնատիվ (այլընտրանքային) տեսությունը: Միկրոտնտեսագիտական կարգավորման մեխանիզմը:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Ընթացիկ քննություններ

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով: Թեստը պարունակում է 8 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 0.5 միավոր:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հիմնական գրականության ցանկ

1. *Արշակյան Ա.Հ. Միկրոէկոնիմիկա, «Տնտեսագետ»: Եր.,- 2006:*

2. *Արշակյան Ա.Հ. Պահանջարկը և առաջարկը շուկայական էկոնոմիկայում, Եր.,- 2000:*

3. *Էվինյան Շ. Ձեռնարկության էկոնոմիկա, - 2007:*

0401/Բ17	ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	4 կրեդիտ
4 ժամ	*40/0/20*	
5 կիսամյակ	Եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	

Դասընթացի նպատակն է ուսանողներին հասկացնել մակրոտնտեսագիտության տեսական հիմնադրույթները և տնտեսական օրինաչափությունները: Ուսանողների մոտ ձևավորել մակրոտնտեսական մտածելակերպ և հետազոտական ունակություններ: Մակրոնտեսագիտության խնդիրն է բացահայտել մակրոտնտեսական օրենքների էությունը:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

➢ Մակրոտնտեսագիտության ուսումնասիրության սկզբունքների և մեթոդների մասին:

➢ Մարոտնտեսական ցուցանիշների, նրանց հաշվարկման կարգի վերաբերյալ:

➢ Մակրոտնտեսական կարճաժամկետ և երկարաժամկետ հավասարակշռության որոշ մոդելների վերաբերյալ:

Ունակ կլինի

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

➢ տեսնել մակրոտնտեսական մասնագիտական հիմնախնդիրները, մտածել ստեղծագործաբար, առաջադրել նոր գաղափարներ, լուծել մասնագիտական ընդհանուր

խնդիրներ։ ✓ *(ընդհանրական կարողություններ)* ➢ ինքնուրույն ձեռք բերել անհրաժեշտ տեղեկատվություն որոշակի հետազոտական խնդրի շուրջ։ Իրականացնել հետազոտություններ և վերլուծություններ։
Համառոտ բովանդակությունը Տնտեսական համակարգը որպես մակրոտնտեսական կարգավորման օբյեկտ։ Մակրոտնտեսական պետական կարգավորման անհրաժեշտությունը և տնտեսական քաղաքականությունը։ Մակրոտնտեսական կարգավորման ուսումնասիրության առարկան, օբյեկտները, նպատակները և ազդեցության լծակները։ Մակրոտնտեսական կարգավորման խնդիրները։ Մակրոտնտեսական ագրեգատները և դրանք բնութագրող ցուցանիշների համակարգը։ Արժեքային ծավալային ցուցանիշները։ Զբաղվածությունը բնութագրող ցուցանիշները։ Գների մակարդակը բնութագրող ցուցանիշները։ Արտաքին տնտեսական կապերը բնութագրող ցուցանիշները։ Ազգային արդյունքի արտադրությունը, բաշխումը և օգտագործումը։ Տնտեսական աճի պետական կարգավորման մեխանիզմները։ Ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի կարգավորման քաղաքականությունը։ Ամբողջական առաջարկի մոդելների ընդհանուր բնութագիրը։ Վճարային հաշվեկշռի կառուցվածքը։ Տնտեսական քաղաքականության ազդեցությունը վճարային հաշվեկշռի վրա։ Փոխանակային կուրսերը, նրանց վրա ազդող գործոնները, կարգավորման մեխանիզմները։ Արտաքին տնտեսական կապերի պետական կարգավորումը։ Ներդրումային քաղաքականությունը։
Գնահատման մեթոդները և չափանիշները ***Ընթացիկ քննություններ*** Նախատեսված 2 ընթացիկ քննությունները թեստային են, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով։ Թեստը պարունակում է 8 առաջադրանք, յուրաքանչյուրը՝ 0.5 միավոր։ ***Եզրափակիչ քննություն*** Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով։
Հիմնական գրականության ցանկը *1. Հ.Բ.Ղուշչյան և ուրիշներ. Մակրոտնտեսական կարգավորում, ուսումնական ձեռնարկ, «Տնտեսագետ», Եր.- 2005։* 2. *Մակրոտնտեսական կարգավորում. Թեստերի և խնդիրների ժողովածու, «Տնտեսագետ», Եր.- 2003։*

1005/Բ04	**ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**	**2 կրեդիտ**
2 ժամ	*18/0/12*	
6 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	
Դասընթացի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ բնակչության պաշտպանության հիմնական ձևերի, հիմնական հասկացությունների, տարհանման պլանի մշակման առանձնահատկությունների, մարդկային մեծ կուտակումներով օբյեկտներում տարհանման կազմակերպման, ինչպես նաև տարհանման միջոցառումների նյութատեխնիկական, տրանսպորտային և բժշկական ապահովման վերաբերյալ։		
Դասընթացի ավարտին սովորողը կունենա. ***Գիտելիք և իմացություն*** ➢ կունենա համապատասխան գիտելիքներ բնակչության պաշտպանության հիմնական		

ձևերի ու հասկացությունների և տարհանման միջոցառումների մասին: *Ունակ կլինի* ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)* ➢ հասկանալ տարհանման պլանի մշակման առանձնահատկություններն ու տարհանման միջոցառումների ապահովման հիմնահարցերը ✓ *(ընդհանրական կարողություններ)* ➢ կատարել տարհանման միջոցառումների նյութատեխնիկական, տրանսպորտային և բժշկական ապահովման վերլուծություններ:
Համառոտ բովանդակություն Բնակչության պաշտպանության հիմնական ձևեր: Տարհանում: Պատսպարում: Անհատական պաշտպանություն: Հիմնական հասկացություններ: Տարհանման ձևերն ու սկզբունքները: Տարհանման միջոցառումների պլանավորումը, կազմակերպումը և իրականացումը: Տարհանման պլան: Պլանի մշակման փուլերը: Տարհանման պլանի մշակման առանձնահատկությունները: Տարհանման միջոցառումների կազմակերպումը պատերազմի սպառնալիքի և հակառակորդի հարձակման ժամանակ: Տարհանման միջոցառումների կազմակերպումը բնական և տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների սպառնալիքի կամ առաջացման ժամանակ: Տարհանման միջոցառումների հաշվարկը: Հիմնական պարամետրեր: Մարդկային մեծ կուտակումներով օբյեկտներում տարհանման կազմակերպումը: Հայաստանի Հանրապետության տարածքում տարհանման միջոցառումների իրավական ապահովումը: Հայաստանի և արտասահմանյան երկրների փորձը արտակարգ իրավիճակներում և պատերազմի (սպառնալիքի) ժամանակ տարհանման միջոցառումների իրականացման գործում: Տարհանման միջոցառումների ապահովումը: Տարհանման միջոցառումների նյութատեխնիկական, տրանսպորտային և բժշկական ապահովումը:
Գնահատման մեթոդներն ու չափանիշները Ստուգարք նախապես տրամադրված հարցաշարի 3 հարցի հիման վրա:
Հիմնական գրականության ցանկ *1. «ԱԻ-ում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, 1998:* *2. ՀՀ Կառավարության 18.08.2011թ թ.1180-Ն «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» որոշումը:* *3.Դիլբարյան Թ.: Բնակչության տարհանման կազմակերպումը: Մեթոդական հանձնարարականներ, ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ, 2008:*

1005/Բ06	**ԿԵՆՍԱԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ**	**2 կրեդիտ**
2 ժամ	*16/0/14*	
4 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	
Դասընթացի նպատակն է հարստացնել սովորողի գիտելիքները կենսագործունեության ապահովման հիմնական խնդիրների, բնակչության տեղահանման և տեղաբաշխման տեսակների ու ձևերի, ժամանակավոր ճամբարների, կացարանների, ԱԻ բնակչության կարիքների գնահատման մոտեցումների ու մեթոդների, աղետի գոտու հնարավոր իրավիճակի, բնակչության կենսապահովման համակարգերի արտադրողական հնարավորությունների, առաջնահերթ կենսապահովման պահանջարկների, բնակչության		

կենսապահովման համակարգերի գնահատման ուղղությամբ:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կյուրացնի կենսագործունեության ապահովման հիմնական խնդիրները:

Ունակ կլինի

- ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*
- իրականացնել ԱԻ բնակչության կարիքների գնահատման տարբեր մոտեցումներ ու մեթոդներ:
- ✓ *(ընդհանրական կարողություններ)*
- կիրառել ստացած մասնագիտական գիտելիքները գործունեության ընթացքում:

Համառոտ բովանդակություն

Բնակչության կենսապահովումն արտակարգ իրավիճակներում: Կենսագործունեության ապահովման հիմնական խնդիրները: ԱԻ-ում բնակչության կենսապահովման համար անհրաժեշտ նյութական ռեզերվների ստեղծում: Նյութական ռեզերվների անվանացանկը և ծավալները: Սննդամթերքի չափաքանակները: Բնակչության տեղահանման և տեղաբաշխման տեսակներն ու ձևերը: Ժամանակավոր ճամբարների, կացարանների ստեղծումը: ԱԻ բնակչության կարիքների գնահատման մոտեցումներն ու մեթոդները: Միջոցառումների պլանավորման համար անհրաժեշտ ելակետային տվյալների պատրաստում: Աղետի գոտու հնարավոր իրավիճակի, բնակչության կենսապահովման համակարգերի արտադրողական հնարավորությունների, առաջնահերթ կենսապահովման պահանջարկների, բնակչության կենսապահովման համակարգերի գնահատումը: Միջոցա-ռումների ընտրում և գնահատում: ԱԻ-ում բնակչության կենսապահովման պլանների մշակման մեթոդական ցուցումները:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի 3 հարցի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկ

1.ՀՀ Կառավարության 24 հունիսի 2010 թվականի «Տարահանված բնակչության տեղաբաշխման տեղամասերում կենսապահովման կարգը հաստատելու մասին» թիվ 824-Ն որոշում:

2. *Յու.Գյուրջյան ԱԻ-ում ժամանակավոր կացարանի կարիքի գնահատումը և տրամադրման եղանակները, /ուսումնա-մեթոդական ձեռնարկ/ Եր. - 2013:*

0401/Բ05	**ԻՐԱՎԻՃԱԿԻ ԽԱՂԱՐԿՈՒՄ**	**2 կրեդիտ**
2 ժամ	*16/0/14*	
6 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատմամբ դասընթաց	

Դասընթացի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ և գործնական հմտություններ ճգնաժամային կառավարման խնդիրները լուծելու և կառավարման որոշումներ կայացնելու համար:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- ստեղծված իրավիճակներում կայացնել օպտիմալ կառավարման որոշում,
- ճգնաժամային իրավիճակներում խնդիրների լուծման եղանակների մասին,
- ճգնաժամային իրավիճակներում օպերատիվ վերահսկման մեթոդների ու ձևերի մասին:

Ունակ կլինի.

- «Իրավիճակի խաղարկում» շրջանակներում մոդելավորել և բարդ կոմպլեքս իրավիճակներում տալ դրանց վերլուծությունն ու հնարավոր օպտիմալ լուծումը:
- ճգնաժամային իրավիճակներում մշակել օպերատիվ վերահսկման մեթոդներն ու ձևերը:
- ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- տիրապետել ստեղծված իրվիճակների առանձնահատկությունները և կայացնել օպտիմալ կառավարման որոշումներ,
- յուրացնել օպերատիվ վերահսկման մեթոդներն ու ձևերը:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- ներկայացնել ճգնաժամային իրավիճակներում ստեղծված օպերատիվ վերահսկման մեթոդներն ու ձևերը:
- պատկերացնել ճգնաժամային իրավիճակների խնդիրները և յուրացնել նրանց լուծման եղանակները:

Համառոտ բովանդակություն

Կառավարում, էությունը և բովանդակությունը: «Կառավարում» - հասկացությունը: Կառավարման գործոնները, դասակարգումը: Կառավարող օբյեկտ, կառավարման տեղեկատվություն, կառավարման որոշումներ: Կառավարման գործառույթները, նրանց դասակարգումը, բնութագիրը: Կառավարման սկզբունքները, կառավարման սկզբունքային սխեման: Կառավարման համակարգի էությունը: Կառավարման համակարգը բնութագրող դրույթները: Կառավարման համակարգի մեջ մտնող հիմնական օղակները: Հետադարձ կապը կառավարման համակարգում: Կառավարման հիմնական գործոնները, նրանց դասակարգումը և բնութագիրը:

- պլանավորման էությունը, բնութագիրը, նշանակությունը,
- կազմակերպման էությունը, բնութագիրը, նշանակությունը,
- մոտիվացիայի էությունը, բնութագիրը, նշանակությունը,
- վերահսկման էությունը, բնութագիրը, նշանակությունը:

Կառավարման իրադրությունների վերլուծություն (կառավարման խաղեր):

Գնահատման մեթոդները և չափանիշները

Ստուգարքի անցկացման ձևը.

Կիսամյակի ընթացքում նախատեսված է 2 ստուգում՝ ընթացիկ և ամփոփիչ: Յուրաքանչյուրը գնահատվում է ստուգված կամ չստուգված: Ցանկացած մեկից դրական գնահատական ստանալու դեպքում ուսանողը համարվում է ստուգարքը հանձնած:

Ընթացիկ ստուգումնն իրականացվում է անհատական (ինքնուրույն) աշխատանքների հիման վրա:

Ամփոփիչ ստուգման պարագայում ուսանողների համար դասընթացի ավարտին կազմակերպվում է բանավոր կամ գրավոր հարցում:

Հիմնական գրականության ցանկ

1. *Մաթևոսյան Հ.Շ. Ճգնաժամային կառավարում: Մենագրություն. Հեղ. հրատ., Եր., 2012.-240 էջ:*
2. *Մաթևոսյան Հ.Շ. Ճգնաժամային կառավարման խաղեր: Ուսումնամեթոդական ձեռնարկ. Հեղ. հրատ., Եր., 2013. - 208 էջ:*
3. *«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենք:*

<table>
<tr><td>1005/Բ07</td><td>ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ</td><td>2 կրեդիտ</td></tr>
<tr><td>2 ժամ</td><td colspan="2">16/0/14</td></tr>
<tr><td>5 կիսամյակ</td><td colspan="2">Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի նպատակն է սովորողին տալ գիտելիք մանրէների բնութագրերի, կենսաբանական հատկությունների, դասակարգման մասին: Ծանոթացնել մանրէների դերին բնության մեջ, արդյունաբերության, առողջապահության, գյուղատնտեսության բնագավառներում և պայքարի կանխարգելիչ ու հակահամաճարակային, օղակաթիլայի խմբի հիվանդությունների ու դրանց կանխարգելման միջոցառումների հետ:</td></tr>
<tr><td colspan="3">Դասընթացի ավարտին սովորողը կունենա.</td></tr>
</table>

Գիտելիք և իմացություն

- կիմանա կենդանի օրգանիզմի վրա ախտածին մանրէների ազդեցության ընդհանուր կողմերը,
- կիմանա արյունային խմբի հիվանդությունները և դրանց կանխարգելման միջոցառումները:

Ունակ կլինի.

- ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*
- իրականացնել կենսաբանական սպառնալիքների նվազեցման ծրագիր:
- ✓ *(ընդհանրական կարողություններ)*
- տիրապետել մանրէների դերը բնության, արդյունաբերության, առողջապահության, գյուղատնտեսության բնագավառներում անձին ուսումնասիրելու, ճանաչելու և հասկանալու մեթոդներին,
- գիտելիքները պրակտիկայում կիրառելու հմտություններին,
- Նոր իրավիճակներին հարմարվելուն:

Համառոտ բովանդակություն

Արտակարգ իրավիճակների բնութագրումը և առաջացման աստիճանը: Բնական բնույթի արտակարգ իրավիճակներ: Մանրէների բնութագրումը, կենսաբանական հատկությունները, դասակարգումը: Մանրէների դերը բնության մեջ, արդյունաբերության, առողջապահության, գյուղատնտեսության բնագավառներում: Կենդանի օրգանիզմի վրա ախտածին մանրէների ազդեցության ընդհանուր կողմերը: Համաճարակաբանության բնութագրումը, խնդիրները: Կենսաբանական բնույթի արտակարգ իրավիճակների դեմ պայքարի մեթոդների դասակարգումն ըստ իրականացման ժամանակի և ծավալների: Պայքարի կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումները: Պետության կողմից իրականացվող կարևոր պայքարի մեթոդները: Վարակիչ հիվանդությունների դասակարգումն ըստ ախտածին մանրէի, ըստ առաջացման օբյեկտի և ըստ ախտածին մանրէի փոխանցման ուղիների: Աղիքային խմբի հիվանդություններ և դրանց կանխարգելման միջոցառումները: Օդակաթիլայի խմբի հիվանդություններ և դրանց կանխարգելման միջոցառումները: Արյունային խմբի հիվանդություններ և դրանց կանխարգելման միջոցառումները:

Կենսաբանական անվտանգության բնագավառում միջազգային համագործակցության հարցերը: ՀՀ-ում Կենսաբանական սպառնալիքների նվազեցման ծրագիրը և դրա իրականացումը:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի երեք տեսական հարցերի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկ

1. *Բազիյան Վ., Գասպարյան Ա. ՃՔԿ մոնիտորինգի հատուկ տեխնիկայկան ապահովումը, Ձեռնարկ, Եր. - 2012:*
2. *Շատվորյան Է.Պ. Կենսաբանական բնույթի աhարեկչություններ: Ուսումնական ձեռնարկ, Եր. -2008:*
3. *Շատվորյան Է.Պ. Ընդհանուր համաճարակաբանություն: Ուսումնական ձեռնարկ, Եր. - 2010:*

0401/Բ06	**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ**	**2 կրեդիտ**
2 ժամ	*16/0/14*	
4 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է սովորողներին տալ կառավարման գործընթացի հոգեբանական բաղկացուցիչի մասին ընդհանուր գիտելիքներ, այն տեղայնացնելով արտակարգ իրավիճակների և պատահարների պայմաններում մարդու կամ խմբի կառավարման խնդիրների շրջանակում:

Դասընթացի խնդիրներն են՝

- Կառավարման հոգեբանություն առարկայի, նրա հիմնական հասկացությունների և

համակարգերի ուսունասիրությունը:
- Կառավարչական գործունեության և սյուբեկտի հոգեբանության մեկնաբանությունը:
- Անձի բացահայտումը որպես կառավարման օբյեկտ և սյուբեկտ:
- Արդյունավետ կառավարման հոգեբանական չափորոշիչները:
- Կոնֆլիկտի ուսումնասիրումը՝ որպես կառավարման միջավայր և միջոց:
- Կառավարման իռացիոնալ միջոցների հոգեբանական առանձնահատկությունները:

Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կիմանա կառավարաման գործընթացի հոգեբանական բաղադրիչները, դրանց՝ հաստատուն և փոփոխանական բնույթը,
- ծանոթ կլինի կառավարաման գործընթացի հոգեբանական բաղադրիչների դրսևորումները և օրինաչափությունները,
- կիմանա անձի և անհատի հարմարվողականության (կամովի և պարտադրված) մեխանիզմները և գործարկման պայմանները:

ՈՒնակ կլինի՝

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- տարբերել անձի՝ որպես կառավարման օբյեկտ և սյուբեկտ, բացահայտման և գնահատման մեթոդներին,
- կտիրապետի արդյունավետ կառավարման հոգեբանական չափորոշիչների կիրառման հմտություններին,
- կտիրապետի կոնֆլիկտի՝ որպես կառավարման միջավայր և միջոց, ուսումնասիրության գործիքներին:

Կտիրապետի

✓*(ընդհանրական կարողություններ)*

- անձի կառավարելիությունը բացահայտման մեթոդներին,
- կառավարչական գործունեությունը և սուբյեկտի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները մեկնաբանելու հմտություններին,
- կառավարման գործընթացի արդյունավետության վրա ազդող հոգեբանական բաղկացուցիչները ճանաչելու, գնահատելու և եզրահանգումներ կատարելու կարողություններին:

Համառոտ բովանդակությունը

Հասարակությունը որպես մեծ սոցիալական համակարգ պահանջում է կառավարման նոր տեխնոլոգիաների և կազմակերպման ճկուն ձևեր հորոնում, որոշակի սկզբունքների վերանայում, անձնակենտրոն մոտեցման ակտիվ ձևերի ու միջոցների ներդնում: «Կառավարման հոգեբանություն» առարկայի ուսումնասիրությունը պայմանավորված է՝

- ինդուստրիալ հասարակության սոցիալական պատվերով
- կառավարումը ավելի արդյունավետ դարձնելու անհրաժեշտությամբ
- «մարդկային գործոնը» (առանց ստիպման և հարկադրման) կյանքի տարբեր իրավիճակներում առավելագույնս օգտագործելու ցանկությամբ:

Կազմակերպության կառավարման համակարգը օպտիմալ ձևով կազմակերպելու անհրաժեշտությամբ:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի երեք տեսական հարցերի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկը

1.*Науменко Е.А. Психология управления Изд-во. Тюм. ГУ, 2002. – 185 с.* 2.*Кобатченко Т.С. Психология управления Учебное пособие, М., 2000. – 384 с.* 3. *Чередниченко И. П., Тельных Н. В. Психология управления - Ростов – на – Дону. Феникс, 2004 – 608 с.*

0401/Բ02	**ԱՂԵՏՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ**	**2 կրեդիտ**
2 ժամ	*16/0/14*	
6 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է սովորողին ծանոթացնել աղետների հոգեբանություն առարկայի, արտակարգ իրավիճակներում առաջացող բացասական հոգեվիճակների բնութագրերի, նրանց մոտ ի հայտ եկած խնդիրների, անձի կամային գծերի, հավասարակշռվածության դերի, ճանաչողության ու փորձի, ինչպես նաև հոգեբանական օգնության առանձնահատկությունների ու սկզբունքների հետ:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կյուրացնի աղետների հոգեբանության ընդհանուր դրույթները, անձի կամային գծերը, հոգեկան վիճակների առանձնահատկությունները և հոգեբանական օգնության առանձնահատկություններն ու սկզբունքները:

Ունակ կլինի

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- իրականացնել հոգեբանական վերլուծություններ:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- կիրառել հոգեբանական իմացությունը մասնագիտական գործունեության մեջ:

Համառոտ բովանդակություն

Աղետների հոգեբանություն առարկան և հոգեբանական վերլուծություններ: Հոգեբանական գործոնների ուսումնասիրումն արտակարգ իրավիճակներում: Արտակարգ իրավիճակներում առաջացող բացասական հոգեվիճակների բնութագիրը: Նրանց մոտ ի հայտ եկած խնդիրները: Անձի հոգեբանական ճգնաժամի առանձնահատկություններն արտակարգ իրավիճակներում: Հույզերի և զգացմունքների արտահայտումը: Վախի դրսևորումները: Կամքի բնույթը և նրա կապը մյուս հոգեկան երևույթների հետ: Անձի կամային գծերը: Փրկարարի հոգեբանական պատրաստականությունը: Նպատակը: Գնահատման չափանիշները: Հրամանատարի դերը՝ փրկարարի ինքնավստահությունը բարձրացնելու գործում: Փրկարարի դիմադրողականությունը բարձրացնող վարժանքներ: Ենթագիտակցականի և գիտակցության դերը հոգեբանական պատրաստականության գործում: Կոնֆլիկտների հիմնական հայեցակարգերը: Արտակարգ իրավիճակներում առաջացած սթրեսները, դրանց արտահայտման ձևերը, հաղթահարման ուղիները: Հոգեբանական կայունության համար անհրաժեշտ անձնային գործոնները: Անհապաղ հոգեբանական օգնության կազմակերպումը: Հոգեբանական կայունության անհրաժեշտ գործոնները: Հավասարակշռվածության դերը, ճանաչողությունը և փորձը: Հավատի դերը հոգեբանական կայունության գործում: Հոգեբանական օգնության առանձնահատկությունները և սկզբունքները: Անհապաղ հոգեբանական օգնության գործառույթները:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի 3 հարցի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկ

1. *Արզումանյան Ս.Ջ. Կիրառական հոգեբանության պրակտիկում, Եր. - 2002:*
2. *Ավանեսյան Հ.Մ. և համահեղ. Հոգեբանություն (դեմքեր, փաստեր): ԵՊՀ հրատ., 2010:*

3. *Մատինյան Ա. Հոգեբանության անհրաժեշտությունն առօրյայում, Եր., 2013. -215 էջ:*   4. *Նալչաջյան Ա. Ընդհանուր հոգեբանություն, Եր.-1997:*

1005/Բ01	ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ	2 կրեդիտ
2 ժամ	*16/0/14*	
6 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ կապի տեսակների, կազմակերպման, խնդիրների, պլանավորման, ԱԻ և ՔՊ կապի համակարգերի վերաբերյալ: Սովորեցնել ազդարարման համակարգի կազմակերպման, պլանավորման, միջոցների ու ազդարարման գործունեության կայունության ապահովման ուղղությունների և տեղեկատվության հաղորդման ձևերի ու տեսակների մասին:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կիմանա կապի հիմնական խնդիրներն ու կապի տեսակների առանձնահատկությունները:

Ունակ կլինի.

- ✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*
- Տիրապետել արտակարգ իրավիճակների ժամանակ ԱԻ և ՔՊ կապի կազմակերպման համակարգին:
- ✓ *(ընդհանրական կարողություններ)*
- Ներկայացնել ԱԻ և ՔՊ ազդարարման գործունեության կայունության ապահովման ուղղությունները:

Համառոտ բովանդակություն

Կապի կազմակերպումը: Կապի հիմնական խնդիրները: Կապի պլանավորումը: ԱԻ և ՔՊ կապի համակարգը: Կապի տեսակները, իրենց առավելությունները և թերությունները: Գծային կապ: Ռադիոկապ: Արբանյակային կապ: Բջջային կապ: Փեյջինգային կապ: Իրենց առավելությունները և թերությունները: Ռադիոկապի համակարգերը: Հիմնական դրույթները: Ավանդական համակարգերը: Տրանկինգային համակարգերը: ԱԻ և ՔՊ կապի միջոցները: Լարային կապի միջոցները: Ռադիոկապի միջոցները: Կապի միջոցների բնութագիրը և դասակարգումը: Կապի միջոցների պատրաստումը աշխատանքի: ԱԻ և ՔՊ կապի կազմակերպման համակարգը արտակարգ իրավիճակների ժամանակ: ՀՀ կառավարության առընթեր ԱԻ վարչության կապի համակարգը: Պետական կապի համակարգը: Առևտրային (կոմերցիոն) կազմակերպությունների կապի համակարգը: Համակարգերի հետ համագործակցության կազմակերպումը: ԱԻ վարչության կառավարման կետի դերը կապի կազմակերպման հարցերով: Բնակչության ազդարարման կազմակերպումը: Ազդարարման համակարգի կազմակերպումը: Ազդարարման պլանավորումը: Ազդարարման միջոցները: Ազդարարման լոկալ համակարգերը: Ազդարարման համակարգի վիճակը: ԱԻ և ՔՊ ազդարարման գործունեության կայունության ապահովման ուղղությունները: Բնակչության տեղեկատվությունը: ԱԻ-ի սպառնալիքի և ծագման ժամանակ բնակչության տեղեկացման նպատակը և խնդիրները: Տեղեկատվության հաղորդման ձևերը, հասցեատվությունը, հերթականությունը և ժամկետները կապված ԱԻ-ի մասշտաբներից և տեսակներից:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի երեք տեսական հարցերի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկ

1.Հարոյան Հ., Մաթևոսյան Հ. ՔՊ կառավարման տեխնոլոգիական, գծապատկերային ուսումնական ձեռնարկ, Եր.- 2002:
2.ԱԻՆ կապի կազմակերպման սխեմաներ և պլաններ:

3.*Носов М. Пути обеспечения устойчивости функционирования системы оповещения ГО ЧС. Гражданская защита,-2003.*

1005/Բ03	ՔՊ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	2 կրեդիտ
2 ժամ	*16/0/14*	
7 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է ուսանողներին գիտակ դարձնել անհատական պաշտպանության միջոցներին դրանց առանձնահատկություններին և կիրառման ոլորտներին:
Դասընթացի ավարտին ուսանողը կունենա.   ***Գիտելիք և իմացություն***   անհատական պաշտպանության միջոցների մասին, դրանց առանձնահատկությունները և կիրառման ձևերը և ոլորտները   *ՈՒնակ կլինի*   *(բուն մասնագիտական կարողություններ)*   ✓ Դասակարգել անհատական պաշտպանության միջոցները,   ✓ Իմանալ անհատական պաշտպանության միջոցների դերն ու նշանակությունը ռազմական դրության և արտակարգ իրավիճակների ժամանակ   ✓ Տարբերակել և օգտագործել շնչառական, տեսողական և լսողական օրգանների, մաշկի անհատական պաշտպանության միջոցները   *(ընդհանրական կարողություններ)*   ➢ Անհատական պաշտպանության միջոցներ հասկացությանը   ➢ Օգտագործել անհատական պաշտպանության միջոցները ուսումնական և գործնական նպատակների ժամանակ: ➢ Իմանալ անհատական պաշտպանության միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները:
Համառոտ բովանդակությունը   Ընդհանուր տեղեկություններ անհատական պաշտպանության միջոցների մասին, նրանց դերն ու նշանակությունը ռազմական դրության և արտակարգ իրավիճակների ժամանակ: Անվտանգության կանոնների պահպահումը ռազմական դրության և արտակարգ իրավիճակների վայրում անհատական պաշտպանության միջոցների կիրառման ժամանակ: Անհատական պաշտպանության միջոցների դասակարգումը:Անհատական պաշտպանության միջոցներ ճառագայթային,քիմիական և կենսաբանական վտանգի սպառնալիքի դեպքում: Շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ, հակագազեր, շնչառական ապարատներ, շնչադիմակներ: Մաշկի պաշտպանության միջոցներ,պաշտպանիչ կոստյում, պաշտպանիչ թիկնոց, ձեռնոց, դիէլեկտրիկ ձեռնոց, ռետինե և կիրզե երկարաճիտք կոշիկներ, սաղավարտ: Մաշկի և շնչառական օրգանների անհատական պաշտպանության միջոցների դասակարգման ցուցանիշները: Տեսողական և լսողական օրգանների պաշտպանության միջոցներ, պաշտպանական ակնոցներ, ականջակալներ: Անհատական պաշտպանության բժշկական և հակաքիմիական միջոցներ,

անհատական դոզիմետրեր, անհատական բժշկական և հակաքիմիական փաթեթներ: Անհատական պաշտպանության միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները: Անհատական պաշտպանության միջոցների պահպանումը:

Գնահատման մեթոդները և չափանիշները

Ստուգարքի անցկացման ձևը.

Կիսամյակի ընթացքում նախատեսված է 2 գրավոր ստուգողական աշխատանք: Գնահատվում է առավելագույնը 20 միավոր: Դրական գնահատականներ ստանալու դեպքում ուսանողը համարվում է ստուգարքը հանձնած:

Ստուգողական աշխատանքների արդյունքներով ստուգարքը չհանձնած ուսանողների համար դասընթացի ավարտին կազմակերպվում է բանավոր հարցում:

Հիմնական գրականության ցանկը

1. Բազիյան Վ.Ա., Գասպարյան Ա.Ջ. Ճառագաբթային, քիմիական և կենսաբանական իրավիճակի մոնիտորինգի հատուկ տեխնիկական ապահովումը, ՌԻսումնական ձեռնարկ, Եր., 2012.- 117 էջ:
2. ՀՀ Կառավարության 2005թ. No 1328-Ն, «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և /կամ/ ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության ազգային պլանը հաստատելու մասին» որոշումը:

1005/Բ26	**ՔՊ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ**	**2 կրեդիտ**
2 ժամ	*16/0/14*	
6 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է՝ ծանոթանալ բնակչության պաշտպանության ձևերից մեկի՝ պատսպարմանը

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

Ինչ նպատակով են կառուցվում պաշտպանական կառույցները և որտեղ: Որ պաշտպանական կառույցը ինչ տեսակի խոցման միջոցներից կարող է պաշտպանել: Պատսպարվողների նորմատիվային պահանջները:

Ունակ կլինի

Կարողանա՝ իրականացնել պատսպարման հաշվարկ, հերմետիկության ստուգումներ, տարբերակել ՊԿ-ը ըստ նշանակության, ըստ տարրողության և ըստ կառուցապատման սխեմայի: Օգտագործել օդափոխման համակարգի ձեռքով (ЭРВ-72) աշխատանքի ռեժիմը:

Պատսպարման վարվելակերպի կանոններին, սարքավորումների աշխատանքի առանձնահատկություններին:

Համառոտ բովանդակություն

Պաշտպանական կառույցների դերը, պլանավորման ու կառուցապատման առանձնահատկությունները և օգտագործման կարգը

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի երեք տեսական հարցերի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկ

1.ՔՊ ինժեներատեղնիկական միջոցառումներ՝ СН и П 2.01.51-90 ՔՊ պաշտպանական կառույցներ՝ СН и П 2.11-77*, Վթարային աշխատանքները աղետի գոտում՝ Каммерер и Харкевич.

1005/Բ12	**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**	**2 կրեդիտ**
2 ժամ	*16/0/14*	
4 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց	

Դասընթացի նպատակն է սովորողին տալ գիտելիք արտակարգ իրավիճակներում տնտեսության օբյեկտների գործունեության կայունության ապահովման և բարձրացման ժամանակակից մոտեցումների, գնահատման մեթոդների մասին: Նպաստել խնդիրների գործնական լուծմանը, ծանոթացնել կայունության գնահատման հետազոտությունների իրականացման եղանակներին:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- կիմանա տնտեսության գործունեության կայունության բարձրացման հիմնական ուղղությունները և պահանջվող իրավական նորմատիվա-մեթոդական փաստաթղթերը:
- կիմանա գլոբալ դիրքորոշման համակարգերի (ԳԴՀ) մասին:

Ունակ կլինի.

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- կիրառել գիտելիքները տնտեսության օբյեկտների գործունեության կայունությանն ուղղված համապատասխան հետազոտությունների կազմակերպման, անցկացման և նպատակային ծրագրերի մշակման ժամանակ:
- օգտագործել տնտեսության գործունեության կայունության գնահատման հաշվարկային մեթոդները:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- տիրապետել տնտեսության օբյեկտների գործունեության կայունության գնահատման հետազոտությունների իրականացման փուլերին:

Համառոտ բովանդակություն

Առարկայի բովանդակությունը, հիմնական հասկացությունները, սահմանումները): ԱԻ-ում տնտեսության (օբյեկտի) գործունեության կայունությունը, բարձրացման հիմնական ուղղու-թյունները: Արտադրողական ուժերի ռացիոնալ տեղաբաշխումը: ԱԻ-ում աշխատելուն նախապատրաստումը: Արտադրության անվտանգ կանգնեցման և արագ վերականգնմանը միջոցառումների նախապատրաստում: Կառավարման համակարգի նախապատրաստումը ԱԻ-ում խնդիրների լուծմանը: Բնակչության կենսապահովումը՝ ԱԻ-ում տնտեսության գործունեության կայունության բարձրացման տեսանկյունից: Տնտեսության գործունեության կայունության գնահատման հաշվարկային մեթոդները: Տնտեսության օբյեկտների գործունեության կայունության գնահատման հետազոտությունների իրականացում: Տնտեսության վիճակը ծայրահեղ պայմաններում նկարագրող և հաշվարկող նմանակման համակարգերը (իմիտացիոն), մոդելները դրանց անհրաժեշտությունը:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Մեկ բանավոր ստուգարք՝ նախապես տրամադրված հարցաշարի երեք տեսական հարցերի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկ

1. *Գյուրջյան Յու., Ուլիկյան Մ. Տարածքների և տնտեսության գործունեության կայունության բարձրացման հարցերը. Ժամանակակից դիտարկում: Մեթոդական մշակում, Եր. - 2010:*
2. *Վիրաբյան Գ., Գյուրջյան Յու. Տնտեսության օբյեկտների գործունեության կայունության ապահովում: Ուսումնամեթոդական ձեռնարկ: Եր. - 2013:*

1004/Բ14	**ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ**	**2 կրեդիտ**

2 ժամ	*16/0/14*
6 կիսամյակ	Առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Դասընթացի նպատակն է սովորողին ծանոթացնել տեղանքի ուսումնասիրման մեթոդների, քարտեզի մասշտաբի, ժամանակավոր կացարանների տեղակայման (ըստ քարտեզի տեղանքի որոշման) և տեղանքում քարտեզի գծագրման հետ:

Դասընթացի ավարտին սովորողը կունենա.

Գիտելիք և իմացություն

- ➢ կիմանա տեղանքի հիմնական տեսակների մասին:
- ➢ կիմանա տեղանքի քարտեզի և նրա կողմնորոշման եղանակների մասին:
- ➢ կիմանա կիրառել կողմնացույց:

Ունակ կլինի

✓ *(բուն մասնագիտական կարողություններ)*

- ➢ իրականացնել կողմնորոշում տեղանքի նշաններով և կողմնացույցով:

✓ *(ընդհանրական կարողություններ)*

- ➢ որոշել լանջի թեքությունը:
- ➢ որոշել գետի լայնությունը եռանկյունիների կառուցման միջոցով:

Համառոտ բովանդակություն

Կողմնորոշում տեղանքում: Տեղանքի հիմնական տեսակները: Տեղանքի ուսումնասիրման մեթոդները: Կողմնորոշում արևով: Կողմնորոշում արևով ժամացույցի օգնությամբ: Կողմնորոշում գիշերը: Կողմնորոշում տեղանքի նշաններով: Կողմնորոշում կողմնացույցով: Կողմնորոշում ազիմուտով: Կողմնորոշում կողմնանիշերով: Տեղանքի քարտեզը և նրա կողմնորոշման եղանակները: Քարտեզի մասշտաբը: Պայմանական նշաններ: Կոորդինատային և աստիճանային ցանց: Քարտեզի շրջանակը և արտա-շրջանակային ձևավորումը: Ռելիեֆի պատկերման եղանակը: Տեղագրական քարտեզի ընթերցելը և նրանով լուծվող խնդիրներ: Քարտեզի կողմնորոշումը: Քարտեզի կողմնորոշումը կողմնացույցով: Կանգնած կետի որոշումը քարտեզով, որևէ տեղական առարկայով, աչքի չափով: Կետի որոշումը հեռավորությունը չափելով: Քարտեզի մասշտաբի որոշելը: Տեղանքի կետի բարձրությունների որոշումը քարտեզով: Գետի լայնության չափելը եռանկյունիների կառուցման միջոցով: Կողմնորոշման առանձնահատկությունները տեղանքի տարբեր պայմաններում: Քարտեզի վրա գտնվելու տեղի գրաֆիկական որոշումը: Գտնվելու տեղի գծային կողմնորոշումը: Ժամանակավոր կացարանների տեղակայման համար ըստ քարտեզի տեղանքի որոշումը: Տեղանքում քարտեզի գծագրում:

Գնահատման մեթոդներն ու չափանիշները

Մեկ բանավոր ստուգարք նախապես տրամադրված հարցաշարի 2 տեսական, 1 գործնական հարցի հիման վրա:

Հիմնական գրականության ցանկ

1. *Соколов И.А. Топографическая карта и местность. М. - 1974.*
2. *Խաչատրյան Ս.Վ. Ռազմական տեղագրություն»: Եր. - 2002:*

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ